

ORIENT



OSTEN

ROHILAT

مشرق

# ԱՐԵՎԵԼԻ



ORIENTS

აღმოსავლეთი

مشرق

ԱՐԵՎԵԼԻ

מזרח

BOCTOK



DOGU

DOĞU





✓

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ԱՐԵՎԵԼՔ


ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

A II  
86767

➤ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

➤ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

➤ ՄՇԱԿՈՒՅԹ



ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ . 2001

Հրատարակության հովանավորներ՝  
«Արմեն և Բերսաբե Ճերեճեան Հիմնադրամ» (ԱՄՆ)  
և  
Ալիշան Բայրամյան (ԱՄՆ)

This publication was made possible by  
Armen and Bersabe Jerejian Foundation Inc. (USA)  
and  
Alishan Bayramian (USA)


NATIONAL ACADEMY OF SCIENCES RA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

# ORIENT

COLLECTION OF ARTICLES

A II  
86762

- HISTORY
- POLITICS
- CULTURE



PUBLISHING HOUSE «GITUTYUN» OF NAS RA

YEREVAN . 2001

ԴՏՀ 950  
ԳՄԴ 63.3(5)  
Ա 862

Տպագրվում է  
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

*Պատասխանատու խմբագիր՝*

*պ.գ.թ. Արտակ Սովսիսյան*

Ա 862 Արևելք. Պատմություն, քաղաքականություն, մշակույթ  
(հոդվածների ժողովածու), Եր., 2001, 104 էջ

Ժողովածուն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Արևելագի-  
տության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների  
հոդվածները:

Ներկայացված հոդվածները նվիրված են Արևել-  
քի հնագույն ժամանակներից մինչև մեր օրերի պատ-  
մության, քաղաքականության և մշակույթի մի շարք ար-  
դիական խնդիրներին:

Նախատեսված է արևելագետների և ընթերցող  
լայն շրջանակների համար:

Ա 0503000000 2001թ.  
703(02)-2001

ԳՄԴ 63.3(5)

ISBN 5 - 8080 - 0003 - 3

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2001թ.

© Հեղինակներ, 2001 թ.

# ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

## ԳՐԵԿՅԱՆ ԵՐՎԱՆԴ

### ՈՒՐԱՐՏՈՒ ԵՎ ՄԱՆԱ

(Մերծուրմյան ավագանու՝ ուրարտական տիրապետության հաստատման խնդրի շուրջ)

Ք.ա. 13-րդ դարի վերջերից սկսած և Մերծավոր Արևելքն ու Էգեյան աշխարհն ընդգրկած ճգնաժամին՝ Ք.ա. 10-րդ դարի վերջերից հաջորդեց նոր վերելք՝ սկիզբ դնելով մաս, այսպես կոչված, «Ասորեստանի երկրորդ վերածննդին»։ Դրա արտաքին դրսևորումը հանդիսացավ Ամորեստանի կողմից գրեթե բոլոր ուղղություններով ձեռնարկված արշավանքների, ինչպես մասնավորապես երկրների նկատմամբ կիրառվող նոր քաղաքականության մեջ<sup>1</sup>, որի հիմնադիրն ու իրագործողը մերծուրմյան ավագանուն ասորեստանյան արքա Աշշուր-նամիլ-ապալ II-ն էր (Ք.ա. 883-859թթ.)։

Այս նույն շրջանում, Ասորեստանի վերելքին զուգահեռ, Հայկական լեռնաշխարհում, հյուսիս-արևմտյան Իրանում, Սիրիայում և հարավ-արևելյան Փոքր Ասիայում տեղի էին ունենում կենտրոնացման և ցեղապետություններից միասնական պետականությունների անցման գործընթացներ։ Արդյունքում՝ Հայկական լեռնաշխարհում Ք.ա. 13 - 9-րդ դարերի ասորեստանյան աղբյուրներից հայտնի «Նաիրյան երկրների» փոխարեն կազմավորվում են միասնական երկրներ Նաիրի-Ուրարտուն և նաիրյան խորուշկիան<sup>2</sup>, մերծուրմյան երկրների շարքում առաջին պլան են մղվում Նուր-Ադադի և Ամեկայի առաջնորդած պետական կազմավորումները, որոնց ջախջախումից հետո՝ Ներքին Ջամուան<sup>3</sup>, Սիրիայում Դամասկոսի և Կարբենիշի գլխավորությամբ ձևավորվում են բավական կայուն Հյուսիս և Հարավ-սիրիական միությունները<sup>4</sup>։ Ասորեստանի համար վտանգ ներկայացնող մեծ մասն ուժերի ծնունդը, բնականաբար, չէր կարող չարտահայտվել ասորեստանյան արքաների գործողություններում։ Աշշուր-նամիլ-ապալ II-ի հետնորդ Սալմանասար III-ը (Ք.ա. 858-824թթ.) ստիպված էր իր գահակալման սկզբից եթե դիմել վճռական քայլերի, ինչի վկայությունն են մյուս կառավարման 34 տարիների ընթացքում ձեռնարկված 32 արշավանքները։ Դրանք, ի տարբերություն սկզբնապես արձանագրված հաջողությունների<sup>5</sup>, չկասեցրին Հայկական լեռնաշխարհում և հյուսիս-արևմտյան Իրանում մախորդ ժամանակաշրջանի ծնունդ պետությունների հետագա անրապնդման և վերելքի անշրջելի դարձած գործընթացը։ Ավելին, արշավանքներից ակնկալվող էական արդյունքների բացակայությունը, ինչպես մասնաբաժանված ընտանիքում ծայր առած խժոժությունները պատճառ դարձան երկրում մայրաքաղաք Աշշուրն ու 26 այլ քաղաքներ ընդգրկված ապստամբության և գրեթե 6 տարի տևած քաղաքացիական պատերազմի բռնկմանը<sup>7</sup>։

Քաղաքական զարգացումների այս պայմաններում սկսվեց ուրարտական պետության առաջխաղացումը դեպի Ուրմիայի ավազան, որի դրվագներն և ժամանակագրությանն է նվիրված սույն հոդվածը:

Հայկական լեռնաշխարհում և հյուսիս-արևմտյան Իրանում ընթացող վերոնշյալ զարգացումները կանխելուն ուղղված ասորեստանյան արշավանքներն առավել սաստկացան Ք.ա. 830-ական թթ.-ից սկսած: Ք.ա. 829/8 և 827թթ. տարածաշրջան ձեռնարկվեց երկու արշավանք, որոնք ուղղված էին Ուրարտուի, Մանայի և մերձորմյան ավազանի այլ երկրների դեմ<sup>8</sup>: Դրանց տվյալներն ու երթուղիների համադրմանի վերլուծությունը վկայում են արդեն այս ժամանակահատվածում Ուրմիայից արևմուտք ընկած Մեծ Զաքի միջին հոսանքի և հարակից տարածքներում ուրարտական ներկայության մասին<sup>9</sup>, եթե, իհարկե, այն չի եղել ի սկզբանե<sup>10</sup>:

Ք.ա. 827-823 թթ. Ասորեստանում տիրող խառնակ դրության տարիներին Ուրարտուի արքա Իշպուինին (և Մեմուան<sup>11</sup>) ի գործ գտնվեց ուրարտական գերիշխանությունը վերահաստատել Մյոծածիրում<sup>12</sup> ու նվաճել Ուրմիայից արևմուտք ընկած Գիլգանը<sup>13</sup>: Նման զարգացումը, ասորեստանյան վտանգի բացակայության պայմաններում, հանգեցնելու էր մերձորմյան ավազանում քաղաքական հզորագույն միավորի՝ Մանայի թագավորության հետ ախմուսափելի բախմանը: Տարածաշրջանային լուրջ գործոնի վերածված այս երկիրը, նախընթաց շրջանում ասորելով գալի վերելք, հավակնում էր «Նաիրյան երկրների» կամ, առնվազն, «մերձորմյան Նաիրիի»<sup>14</sup> միավորման գործում ստանձնելու նույն դերը, ինչ Ուրարտուն<sup>15</sup>: Նվաճելով Նեբքին Զամուան՝ Մանան զբաղեցնում էր նաև Ուրմիային հարավ-արևմուտքից և հարավից հարող տարածքները<sup>16</sup>, ուր և առաջանում էր ուրարտական պետությունը<sup>16</sup>: Այս պայմաններում կանխատեսվող հնարավոր զարգացումները թույլ են տալիս ենթադրելու աղբյուրներում չարձանագրված ուրարտա-մանայական բախում, որի հետևանքների մասին կարող ենք պատկերացում կազմել տարածաշրջան ձեռնարկված ասորեստանյան նոր արշավանքների տվյալներից:

Ք.ա. 824թ. Ասորեստանում գահ բարձրացած Շամշի-Ադադ V-ին (Ք.ա. 824-811թթ.) հաջողվեց կայունացնել իրավիճակը երկրում, ինչը թույլ տվեց վերստին ուշադրությունը բեռնել մերձորմյան խնդիրների՝ այս ուղղությամբ ձեռնարկելով երեք հաջորդական արշավանքներ: Ք.ա. 823-822թթ. իրագործված առաջին և երկրորդ արշավանքների նկարագրությունը մերձորմյան ավազանում պատկերում է միանգամայն այլ քաղաքական իրավիճակ: Ըստ այդմ տարածաշրջանային երկրների շարքում որպես գերիշխող ուժ Մանայի փոխարեն հանդես է գալիս Շարժինայի՝ Մեկտիարայի որդու իշանությունը՝ դաշնակիցը ուրարտական թագավոր Իշպուինիի: Վերջինս, թվում է, այս տարածքներում ունեցել է հաստատուն դիրքեր<sup>17</sup>: Այն իրողությունը, որ Ք.ա. 823-822 թթ. ասորեստանյան տեքստերն ընդհանրապես չեն հիշատակում Մանան, իսկ երրորդ արշավանքի նկարագրությունում վերջինս նշվում է Ասորեստանին հարկ վճարած երկրների շարքում<sup>18</sup>, թույլ է տալիս փտահույսամբ խոսելու, հավանաբար Ք.ա. 825<sup>19</sup>-823 թթ. ընթացքում տեղ գտած ուրարտա-մանայական բախման և դրա հետևանքով Մանայի կրած պարտության մասին: Աղբյուրում՝ երկիրն առժամանակ մղվել է ետին

սլլան՝ առաջնությունը զիջելով այլ ուժերի<sup>19</sup>: Վերջիններս հասցված աստու-  
րական հարվածն իր հերթին նպաստեց մեկ այլ երկրի՝ Պարսուայի վերել-  
քին: Բաղաբական իրականության այս պայմաններում տարածաշրջանը  
սկսեց հանդես գալ ուրարտական սեպագիր արքայուններում՝ ի դեմս Իշ-  
պուինիի և Մեմուայի համատեղ արձանագրության և հետագա այլոց:

Մերձուրմյան ավազանում ուրարտական տիրապետության ժամա-  
նակագրության հստակեցման համար կարևոր նշանակություն ունի այս  
արքաների կազմած Խառակունիսի (Կարագյումրու) արձանագրությունը<sup>20</sup>,  
որում նշվում է Ուրմիայից հարավ ֆեդոյաշվող Մե(ի)շթա (Մեսի) քաղաքի<sup>21</sup>  
և Բարշուա երկրի նվաճման մասին<sup>22</sup>: Այս արշավանքին մասնագիտական  
գրականությունը տվել է ընդհանուր քվազում, այն է՝ Իշպուինիի և Մեմուայի  
համատեղ զահակալության շրջան (Ք.ա. 825/0-810թթ.)<sup>23</sup>, ինչն արդեն իսկ  
պարզ է արձանագրության տվյալներից: Կարծում ենք՝ ասորեստանյան և  
ուրարտական աղբյուրներից կարելի է քաղել լրացուցիչ տվյալներ, որը  
հնարավոր կդարձնի առավել կամ պակաս չափով հստակեցնելու  
արշավանքի տարեթիվը: Ըստ այդմ.

Առաջին.

Ասորեստանյան և ուրարտական բանակները Ուրմիայի ավազան  
են արշավել ոչ միաժամանակ և դրանք չեն հանդիսացել պատասխան գոր-  
ծողություններ: Այլապես, դեպի տարածաշրջան նույն քվականին կատար-  
ված է՝ ասորեստանյան, և՛ ուրարտական արշավանքների պարագայում  
հազվի թե չարձանագրվեր այդ ուժերի բախում: Ուրարտական արձանա-  
գրությունը չի նշում նման փաստ<sup>24</sup>, իսկ աստուրականից հայտնի ընդհարումը  
Ուշայինայի և Շարծինայի հետ (Ք.ա. 822թ.) չի վկայում վերջիններս օգտին  
և անհամապատասխան է ուրարտացիների արձանագրած հաջողություն-  
ներին: Բացի այդ, գրեթե նույնն են հակամարտության գոտիները<sup>25</sup>:

Երկրորդ.

Բաղաբական տարբեր իրավիճակներ են նկատագրում ասորես-  
տանյան և ուրարտական արձանագրությունները: Եթե ուրարտականում  
Մե(ի)շթան դիտվում է թեև նշանակալի դեր ունեցող, սակայն ոչ ինքնուրույն  
միավոր<sup>26</sup>, ապա ասորեստանյան աղբյուրներում այն հանդես է գալիս որ-  
պես ինքնուրույն, քաղաքականապես անկախ երկիր, որը չվարանցե ան-  
գամ ընդհարվել Ասորեստանի հետ, արքյունքում, ճիշտ է, կրելով ծանր  
պարտություն<sup>27</sup>: Ընդ որում, նրա այս դիրքորոշումը տարբերվում է տալա-  
ծաշրջանի երկրների մեծամասնության, այդ թվում նաև Բարշուա-Պար-  
սուայի վարած քաղաքականությունից: Վերջիններս, առանց դիմադրության,  
շտապեցին հնազանդվել Ասորեստանին<sup>28</sup>: Հետևաբար այս՝ Ք.ա. 821թ. տեղ  
գտած ասորեստանյան արշավանքից հետո է Մեսիի ընկել Բարշուայի իշ-  
խանության տակ, ինչն էլ արտահայտվել է ուրարտական արձանա-  
գրությունում.

... [h]a-a-i-tú<sup>URU</sup> Me-i[š]-ta-a-ni<sup>URU</sup> Qu-á-a-n[i]<sup>URU</sup> Šá-a-ri-tú-ni<sup>URU</sup> Ni-  
gi-bi-i-ni<sup>KUR</sup> Bar-šú-a-i KUR-ni .... «Նվաճեցին (նրանք) Մեիշթա (քաղաքը),  
Կուա (քաղաքը), Շարիտու (քաղաքը), Նիզիբի (քաղաքը) Բարշուա (երկրի)  
... »<sup>29</sup>:

Երբայդ.

Ասորեստանյան արքայունքը որպես Ուրարտուի թագավոր նշում են Իշպուինին (<sup>1</sup>Ušpina)՝ չիլշատակելով, սակայն, Մենուային ո՛չ այստեղ, և ո՛չ էլ երբևէ<sup>40</sup>:

Չորրորդ.

Ուրարտական արձանագրությունում ուշադրության է արժանացել այն հանգամանքը, որ և՛ Իշպուինին, և՛ Մենուան անվանվել են «ուժեղ» անձինք.

[ma]-a-nu <sup>m</sup>Iš-[pu]-ú-i-ni ku-ru-ni <sup>m</sup>Me-nu-ú-a ku-ru-[ni]. «ուժեղ էր Իշպուինին, ուժեղ՝ Մենուան»<sup>41</sup>:

Այս արձանագրությունը, ամենայն հավանականությամբ, կարելի է քվազրել Իշպուինիի կառավարման վերջին՝ Մենուայի հետ համատեղ գահակալության<sup>(1)</sup> ժամանակահատվածով: Սրա վկայությունը կարող է լինել նրա և Մենուայի միջև դրված «ժալասարության նշանը», ինչը քացակայում է. նույն անձանց կազմած Քելիշինի արձանագրությունում: Նրանում, եթե Իշպուինին չիլշատակվում է հարուստ տիտղոսաշարով, ապա Մենուան՝ միայն հայրանվամբ.

... [nu-na-li <sup>m</sup>Iš-pu-ú-i-ni-ni <sup>md</sup>Sarš-[duri-e-hé LUGÁL DAN.NU LUGÁL] <sup>KUR</sup>šu-ra-a-ú-e LUGÁL <sup>KUR</sup>Bi-a-i-<sup>1</sup>na-[ú-e a-lu]-si <sup>URU</sup>Tu-uš-pa-a URU <sup>m</sup>Me-<sup>1</sup>nu-[ú-a <sup>m</sup>Iš-pu]-ú-i-ni-hé ia-ra-[a]-ni šì-dì-iš-tú-ni .... «... եկան Իշպուինի Սարքուրդդին, <մեծ արքան><sup>2</sup>, հզոր արքան, տիեզերքի արքան, Բիայնիլի (երկրի) արքան, Տուշպա քաղաքի կառավարիչը և Մենուա Իշպուինոդդին, կառուցեցին մատուռ...»<sup>33</sup>:

Հետևաբար, կարող է խոսք լինել Իշպուինիի կառավարման վերջին շրջանի մասին միայն, երբ երկրում բարձրացել է Մենուայի դերը, ինչի հետ կապված նաև՝ Ուրարտուի արտաքին ակտիվությունը<sup>34</sup>:

Ելնելով նշալից, ընդունելի ենք գտնում արշավանքը քվազրել Շամշի-Ադադ V-ի երկրորդ արշավանքից մինչև Մենուայի միանձնյա գահակալում ընկած շրջանով, բերև այն ժամանակ, երբ Ասորեստանը զբաղված էր Բաբելոնիայի դեմ պատերազմով և դրանով իսկ անկարող էր միջամտելու մերձուրմյան գործերին, այսինքն՝ Ք.ա. 812-811 թթ-ով<sup>35</sup>:

Իշպուինիի և Մենուայի ձեռնարկած այս արշավանքը, ինչպես երևում է արձանագրության տվյալներից, կրել է հետախուզական-ավարառական բնույթ և չի հանդիսացել Ուրմիայից հարավ ընկած այս տարածքներում հաստատվելուն ուղղված քայլ, ինչպես հաճախ նշվում է մասնագիտական գրականության մեջ<sup>36</sup>:

Այլ նպատակներ են հետապնդել արդեն Մենուայի միանձնյա գահակալության շրջանում (Ք.ա. 810-786թթ.) ուրարտացիների ձեռնարկած գործողությունները: Ըստ ամենայնի՝ Ասորեստանի նկատելի վայրէջքը, ուրարտական պետության արձանագրած հաջողությունները Հայկական լեռնաշխարհի հյուսիսում, ինչպես նաև Բաբելոնիայի ջախջախմամբ պայմանավորված Մանայի նոր վերելքը (որը կարող էր վտանգել ուրարտացիների մերձուրմյան ձեռքբերումները), ի լրումն տնտեսական շարժառիթների՝ պայմանավորեցին ուրարտական պետության հետագա քաղաքականությունը մերձուրմյան ավագանում<sup>37</sup>:



Մեզ հասել են այս շրջանին վերաբերող երկու աղբյուր՝ Վանի արձանագրությունը, որը, ըստ էության, մաս է կազմել Մեմուայի տարեգրությանը և Դաշ-բեփեի վիճազիր կոթողը։ Դրանք հստակորեն զանազանում են երկու տարբեր արշավանքներ, որոնց նկարագրությունը, համադրված հնագիտական նյութի հետ, քույլ է տալիս ուրվագծել մերծորմյան ավագանում ուրարտական տիրապետության հաստատման որոշակի պատկեր։

Վանի արձանագրությունից հայտնի արշավանքը, կարծում ենք, ձեռնարկվել է Մեմուայի գահ բարձրանալուց ոչ շատ ուշ, նրա կառավարման առաջին տարիներին, քերևս՝ Ք.ա. 810-807թթ. ընթացքում։ Այն, սակայն, ավարտվել է անհաջողությամբ։ Այս առումով ուշադրություն է գրավում հատվածի լակոնիկ ոճը, որով հայտնվում է արշավանքի իրադրությունը.

[<sup>1</sup>Hal-di]-ni-ni uš-ma-ši-ni <sup>2</sup>Me-nu-a-še <sup>3</sup>Iš-pu-ú-i-ni-[hi-ni-še a-li-e] i-ú tñ-šú-ha-a-ni <sup>KUR</sup>Ma-a-na-a-i-di uš-ta-a-d[i <sup>KUR</sup>e-ba]-a-ni a-tú-ú-bi a-ma-áš-tú-ú-bi. «*Խալդյան հզորությամբ Մեմուա Իշպուիճորդին ասում է. երբ ունևհանի Մանա (երկիր) արշավեցի, երկիրն ավերեցի, երկրագեցի*»<sup>38</sup>.

Ընդ որում, բացակայում է իրադարձությունների կոնկրետ, քնկուզ և կաղապարային բանաձևերով տրվող այն նկարագրությունը, որն առկա է արձանագրության մնացյալ հատվածներում։ Խոսքը վերաբերում է ոչ միայն երկրի կազմում հիշատակվող տեղանունների բացակայությանը, այլև՝ ուրարտացիների կտարածվ գերեվարության կամ ավարատության փաստերին։ Դրանք բացակայությունը, ի տարբերություն արձանագրության մնացած հատվածների, ինչ խոսք, չի վկայում ուրարտացիների օգտին։

Այս անհաջողությունը ետ չպահեց ուրարտացիներին իրենց հավակնությունները դրսևորելուց, ինչին մեծապես նպաստեցին մերծորմյան ավագանում ընթացող զարգացումները։ Մասնավորապես՝ ասորեստանյան արքա Ադադնիրարի III-ի (Ք.ա. 810-781թթ.) և մոր՝ Շամմուրամաթի (Ք.ա. 810-805թթ.) յշխանության տարիներին երկիցս՝ Ք.ա. 807 և 806թթ. ձեռնարկված արշավանքներում Մանայի թագավորությունը կրեց նոր պարտություն՝ բնակատեղանք, չկարողանալով երկար դիմադրել մեծ շարունակական ճնշմանը<sup>39</sup>։ Արդյունքում՝ երկիրը մեկ անգամ ևս մղվեց ետին պլան, իսկ տարածաշրջանում, Ադադնիրարի III-ի Ք.ա. մոտ 802թ. թվագրվող<sup>40</sup> արձանագրությունից դատելով, առժամանակ վերահաստատվեց Շամշի-Ադադ V-ի արշավանքներին հաջորդած քաղաքական դրությունը<sup>41</sup>։

Ասորեստանի համար շահավետ այս իրավիճակը երկար չշարունակվեց։ Օգտվելով Մանայի նկատելի վարժեքից՝ ուրարտական պետությունը սկսեց նոր ծավալում հարձակում՝ Ք.ա. 802/801-791թթ. ընթացքում<sup>42</sup> ջախջախելով Մանային և նվաճելով նրա մերծորմյան տարածքները՝ ներառյալ Ուրմիայի շրջանի մանայական խաշորագույն կենտրոն Ուեսին<sup>43</sup>, որոնք կցվեցին Ուրարտոյին։ Իրադարձությունների ենթադրվող մեծ զարգացումը հավաստվում է հնագիտական տվյալներով։ Մասնավորապես այս՝ մոտ 800թ.-ով է թվագրվում մանայական Ուեսիի, այն է՝ Հասանլու IVB-ի հիմնահատակ կործանումը թշնամական հարձակման արդյունքում<sup>44</sup>։ Հետագրտողների մեծամասնությունը համակարծիք է՝ Հասանլու IVB-ի կործանումը համարելով ուրարտացիների ձեռքի գործ<sup>45</sup>։ Կարծում ենք՝ այս

**ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ**

| Բ. ա. | ԱՍՈՐԵՏԱՆ       | ՈՒՐԱՐՏՈՒ            | ՄԵՐՉՈՒՐՄՅԱՆ ԱՎԱԶՆ<br>(տեղակիք տեղադրվելը)                                                                                                        | ՄԵՐՉՈՒՐՄՅԱՆ<br>ԱՎԱԶՆ<br>(հետադիմացառ տեղադրվելը) |
|-------|----------------|---------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------|
| 860թ. | 858թ.          | 860թ.               | <u>ձ.ա. 858-856թթ.</u><br>ԱԱ ընդդեմ Ռուսարտուի<br><u>ձ.ա. 855թ.</u><br>ԱԱ ընդդեմ Ջամուտայի                                                       | (ձ.ա. 1100թ.-ից)<br>Հասանելու IVB                |
| 850թ. |                |                     |                                                                                                                                                  |                                                  |
| 840թ. | Սալմանասար III | 844թ.               |                                                                                                                                                  |                                                  |
|       |                | 835թ.               |                                                                                                                                                  |                                                  |
| 830թ. |                | Սարգսյուրի I        | <u>ձ.ա. 829/8-827թթ.</u> ԱԱ<br>ընդդեմ Ռուսարտուի և Մանայի                                                                                        | Կապառզանի<br>կիժմադրում                          |
|       |                | 825թ.               | <u>ձ.ա. 825-823թթ.</u><br>I Ռուս ընդդեմ Մանայի                                                                                                   |                                                  |
| 820թ. | 824թ.          | Իշախիմի             |                                                                                                                                                  |                                                  |
|       | Հասնի-Աղալ V   |                     |                                                                                                                                                  |                                                  |
|       |                | Իշախիմի և<br>Մանուա | <u>ձ.ա. 812-811թթ.</u><br>Ռուս ընդդեմ Բաղդասայի<br><u>ձ.ա. 810-807թթ.</u><br>II Ռուս ընդդեմ Մանայի<br><u>ձ.ա. 807-806թթ.</u><br>ԱԱ ընդդեմ Մանայի | Հասանելու IVB-ի<br>կործանումը                    |
| 810թ. | 811թ.          | 810թ.               |                                                                                                                                                  |                                                  |
|       |                |                     | <u>ձ.ա. 801-791թթ.</u><br>III Ռուս ընդդեմ Մանայի                                                                                                 | = 800թ.<br>ամրաշինական<br>աշխատանքներ            |
| 800թ. | Աղաղմիրարի III | Մանուա              |                                                                                                                                                  |                                                  |
|       |                |                     | IV Ռուս ընդդեմ Մանայի<br>Ռուս ընդդեմ Բաղդասայի                                                                                                   |                                                  |
| 790թ. |                | 786թ.               |                                                                                                                                                  |                                                  |
|       |                | 781թ.               |                                                                                                                                                  |                                                  |
| 780թ. |                |                     |                                                                                                                                                  |                                                  |
|       | Սալմանասար IV  | Արգիշտի I           |                                                                                                                                                  | Հասանելու IIIB<br>(ձ.ա. 8-րդ դ.)                 |

**ՈՒՐԱ-Ռուսարտական արշավանք**  
**ԱԱ- Ասորեստանյան արշավանք**

փաստն իր արտացոլումն է գտել մահ Դաշ-թեփեի ուրարտական արձանագրությունում:

<sup>D</sup>Hal-di-ni-[ni al-su-i-si-ni <sup>m</sup>Me-nu-a-še <sup>m</sup>[š]-p[u-i-hi-ni-še] i-ni É.GAL-ŋ[i har-har-šú-ni] <sup>46</sup> URU<sup>46</sup> Me-iš-ta ha-ú-[ni] ha-u-ni e-di-ni <sup>KUR</sup>Ma-[na-ni] ... «Խաղթյան մեծությամբ Մեմուա Իշպուհնորին այս ամրոցը ավերեց<sup>7</sup>, միաճեց Մեխրա (քաղաքը), միաճեց այնտեղ<sup>7</sup> Մանա (երկիրը)»<sup>47</sup>:

Բացի այդ, արձանագրությունը կարծես հանդիսանում է տարածաշրջանում Մեմուայի ձեռնարկած ռազմական գործողությունների հստակ մի փուլի ամփոփագիր՝ ներկայացնելով մի քանի իրադարձությունների արդյունքների ընդհանուր համրագումար: Ռազմական գործողությունների առաջին արյույունքն էր մասնական նշյալ կենտրոնի կործանումն ու հարակից տարածքների նվաճումը, որին հաջորդել են Ուրմիայից հարավ և հարավ-արևելք՝ դեպի Մանա և Մե(լի)շրա ձեռնարկված ռազմարշավներ: Արյույունքում՝ ուրարտացիները հաստատապես ամրացան Ուրմիայի արևմուտքից մինչև հարավ-արևելք ձգվող շրջաններում, որի մասին է վկայում Դաշ-թեփեի արձանագրության մեկ այլ հատված:

... a-šú-ni iš-ti-ni <sup>LU</sup>[ir-di<sup>ME:Š</sup>] <sup>48</sup> a-šú-ni <sup>LÚ</sup>ZAB.GIR<sup>H</sup> <sup>M</sup>[eš iš-ti-ni] ... «քողեցի<sup>7</sup> այստեղ կայսզորներ<sup>7</sup>, քողեցի<sup>7</sup> այստեղ<sup>7</sup> հետևակ զինվորներ»<sup>49</sup>:

Ռազմավայրական մեծ նշանակություն ունեցող տարածքների նվաճումից հետո ուրարտացիները ձեռնարկել են ամրաշինական լայն աշխատանքներ՝ հիմնելով կամ վերակառուցելով մոտ 30 ամրոց և ամրություն ընդգրկող հենարանների մի ամբողջ շղթա, ինչպես վկայում է հնագիտական նյութը<sup>50</sup>: Ուրմիայի ավազանում են գտնվել ուրարտական բանակի 10 խոշոր հանգրվաններ<sup>51</sup>, որոնցից առնվազն 3-ը (Կալատգահ, Քալե Բանայի Աղա, Հաֆրավան-թեփե)՝ Ուրմիայի արևմտյան և հարավային ավերին<sup>52</sup>: Ի լրումն նշվածի՝ այս շրջանում Մեմուայի թողած մեկ այլ արձանագրության մեջ հիշատակվում է նրա կողմից <sup>(E)</sup>barzu/idib(i)duni անունով շինություն (ինչպես մահ ամրոց) կառուցելու մասին<sup>53</sup>, որը մասնագիտական գրականության մեջ համարվել է մահ գորանոց<sup>54</sup>: Այս աշխատանքների շնորհիվ ապահովելով քիկուները՝ ուրարտացիները ձեռնամուխ եղան հյուսիս-գագրոսյան իշխանությունների նվաճմանը՝ առաջին հարվածը վերստին ուղղելով Մանայի դեմ: Ռազմական գործողությունների այս փուլն է ամփոփված, կարծում ենք, Դաշ-թեփեի արձանագրության 8 – 12 տողերում<sup>55</sup>:

... ú-lu-uš-ta-i-bi [<sup>d</sup>Hal-di-ni <sup>m</sup>Me-ŋu-ú-a-š[ē a-li-e ha]-ú-[bi] <sup>KUR</sup>Ma-na-[ni <sup>KUR</sup>ni e-di]-i-ni te-e-[ru-ú-bi <sup>d</sup>Hal-di-[i]-i] <sup>NA4</sup>pu-lu-si-[e/ni?] ... «Առաջնորդեց<sup>7</sup> Խաղի (աստվածը): Մեմուան ասում է. միաճեցի Մանա երկիրը, կանգնեցի այնտեղ<sup>7</sup> Խաղի (աստված) կողքը»<sup>56</sup>:

Ըստ ամենայնի՝ սա հանդիսացել է ռազմական գործողությունների եզրափակիչ փուլը, որն ավարտվել է Մանայի նկատմամբ ուրարտական զերիշխանության հաստատմամբ, ինչի վկայությունն է, կարծես, Խաղի աստծուն նվիրված հաղթակոթողի բարձրացումը երկրի տարածքում<sup>57</sup>:

Մեմուայի հաղթարշավը տարածաշրջանում ավարտվեց Ուրմիայից դեպի հարավ ձեռնարկված մեկ այլ արշավանքով, որի ընթացքում ուրարտական բանակը հասավ մինչև Բուշտու<sup>58</sup>: Այս շրջանից սկսած մինչև

ասորեստանյան արքա Սալվադ II-ի նշանավոր «VIII տարվա արշավանք», այն է՝ Ք.ա. 714թ., Ուրմիայի մերձափնյա տարածքները գտնվել են Ուրարտուի մշտական, իսկ Մանայի բազավորությունը՝ առժամանակյա տիրապետության ներքո:

## GREKYAN ERVAND

### URARTU AND MANA

(On the establishment of Urartian rule over the lake Urmia basin)  
(Summary)

The paper deals with the events, which took place in North-Western Iran in 830-790 B.C. Based on analyses of Assyrian and some early Urartian cuneiform inscriptions, the author suggests that in the sources of discussing period it goes about six Urartian campaigns made to the region. The first two were made against the lands of Mana (1<sup>st</sup> campaign in 825-823 B.C.) and Barshua (2<sup>nd</sup> campaign in 812-811 B.C.) at the time of the reign of Ishpuini and Menua. The others took place during the reign of Menua (3<sup>rd</sup>, 4<sup>th</sup> and 5<sup>th</sup> campaigns against the kingdom of Mana, and the last one against the land of Bushtu between 810-807 and 802/1-791 B.C.). In the result of these events was established the rule of the Urartian state in the region.

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Մասնագիտական գրականության մեջ հայտնի է «XII դարի ճգնաժամ» անվամբ: Այն դրսևորվեց քաղաքական, տնտեսական և այլ ոլորտներում, դառնալով հիմարեկյան մի շարք երկրների կործանման (Խեթական տերություն, Արայան Հունաստանի իշխանություններ ևն) կամ վայրէջքի պատճառ (Ասորեստան, Բաբելոնիա, Եգիպտոս): Գնահատմի մի շարք երևույթներ շարունակվեցին մոտ երեք հարյուրամյակ՝ ընդհուպ մինչև Ք.ա. 10-րդ դար: Այս խնդրի շուրջ մանրամասն տե՛ս Ա. Քոսյան, Մերձավոր արևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999, էջ 81 ևն:

2. Այս քաղաքականության հիմքում ընկած էր նվաճված երկրներին քաղաքական անկախությունից զրկելու և ասորեստանյան մահաճգների վերածելու գործընթացը, ի տարբերություն մախորդ դարերի գործելակերպի, երբ ասորեստանցիները բավարարվում էին բացառապես ռազմական խնդիրներ լուծելով, նվաճված երկրներին հարկատու դարձնելով, ավարառությամբ և գերեվարությամբ: Վերջին հաշվով, մի շարք գործոններով պայմանավորված այս քաղաքականության արդյունքում կազմավորվեց Արևմրտյան Իրանից մինչ Եգիպտոս ձգվող ասորեստանյան մեծ տերությունը:

3. Г.А. Меликишвили, Наири-Урарту, Древневосточные материалы по истории народов Закавказья, Том 1, Тб., 1954, стр. 188-194.

4. И.М. Дьяконов, История Мидии от древнейших времен до конца IV в., М.-Л., 1956, стр. 156-160; Г.А. Меликишвили, Наири-Урарту, стр. 194.

5. С.М. Бациева, Борьба между Ассирией и Урарту за Сирию, ВДИ, 1953, № 2, стр. 17 сл.

6. Ասորեստանցիների գործողություններից առավել հաջող էին Ք.ա. 859 և 856թթ. արշավանքները Ուրարտուի և Խուրուշխայի, Ք.ա. 855-ին՝ Չամուայի դեմ և, հատկապես, Ք.ա. 841թ. իրագործված ռազմարշավը, ինչի արդյունքում ջախջախվեց Հարավ-սիրիական միությունը:

7. D.D. Luckenbill, Ancient Records of Assyria and Babylonia (այսուհետ՝ ARAB), 1927, vol. II, 1198; Д.Ч. Садаев, История древней Ассирии, М., 1979, стр. 90.

8. Այս մասին առավել մանրամասն տե՛ս Н.В. Арутюнян, Биайнили (Урарту), Ер., 1970, стр. 127-135.

9. Ուշադրության է արժանի, մասնավորապես, ասորեստանյան արձանագրության հետևյալ տեղեկությունը. «Իմ կառավարման 31-րդ տարում ... ես գնացի Ծապարիա՝ Մուծածիր երկրի ամրացված քաղաքը, նվաճեցի Ծապարիան՝ 46 մուծածիրյան բնակավայրերի հետ, հասա մինչև ուրարտական ամրացներին, ավերեցի, ամայացրի, այրեցի 50 բնակավայր, իջա դեպի Գիլգան... (D.D. Luckenbill, ARAB, 1926, vol. I, 588; E. Michel, Die Assur-Texte Salmanassars III. (858-824), "Die Welt des Orients", 2, 1956, S. 230-231)»:

10. Խոսքը, մասնավորապես, վերաբերում է Ուրարտուի առաջին արքա Արամեի Արգ/ձաշկու մայրաքաղաքի և Մուգունիա ամրոցի տեղադրումներին: Ուրարտական պետականության այս վաղ կենտրոնները հիշատակվում են Մալմանասար III-ի կառավարման առաջին և երրորդ տարիներին (Ք.ա. 858 և 856թթ.) Հայկական լեռնաշխարհի ձեռնարկված արշավանքների նկարագրություններում: Եվ՝ առաջին, և՛ երրորդ արշավանքների վերջնակետ հանդիսացել են մերձուրմյան ավազանի երկրները (Խուրուշխա, Արամալե/Արմարիլի, Գիլգան, Մուծածիր, իսկ «Նաիրի երկրի ծով» անվան տակ նկատի է առնվել Ուրմիա, այլ ոչ Վանա լիճը: Sh'u H.F. Russell, Shalmaneser's Campaign to Urartu in 856 B.C. and the Historical Geography of Eastern Anatolia According to the Assyrian Sources, An.St., 1984, vol. 34, p. 191, և այլք), ընդ որում՝ առկա է տեսակետ՝ վերջիններիս հարևանությամբ տեղորոշելու ուրարտական հիշյալ քաղաքները (M. Salvini, Some Historic-Geographical Problems Concerning Assyria and Urartu, in "Neo-Assyrian Geography (ed. M. Liverani)", Roma, 1995, p. 43f.), ինչը կարող է վկայել այս տարածքներում ուրարտացիների ներկայության մասին՝ նրանց պետականության սկզբնավորման պահից: Այս առումով ուշադրության է արժանի Գ.Ա. Մելիքիշվիլու տեսությունը ուրարտացիների մուծածիրյան արմատների մասին (Г.А. Меликишвили, К вопросу о древнейшем очаге урартских племен, ВДИ, 1947, № 4, стр. 21-29; он же: Мусасир и вопрос о древнейшем очаге урартских племен, ВДИ, 1948, № 2, стр. 37-48):

11. М. Салвини, Распространение влияния государства Урарту на Востоке, "Древний Восток", т. 4, Ер., 1983, стр. 221 сл; M Salvini,

Problematica Storica dell'Iran Nord-Occidentale Nel Periodo del Regno di Urartu (Sec. IX-VII A.C.). "ISIMU". 1998, vol. 1. S. 133-141: Այս ձեռքբերումը, ըստ ամենայնի, նախորդել, այլ ոչ թե հաջորդել է մերձորմյան ավազանում ուրարտական տիրապետության հաստատմանն ուղղված քայլերին: Իշ-պուինիյի և Մենուայի բողոծ Բելիշինի արձանագրությունը պատկերում է այս արքաների համատեղ գահակալության<sup>17</sup> վաղ պատկեր (տե՛ս էջ 4, ծնր. 30 և էջ 5, ծնր. 33), և նրանում խոսք անգամ չկա ռազմական գործողությունների մասին, իսկ շինարարական-պաշտամունքային բնույթի տեքստը կարող է միայն վկայել վաղ նվաճման (Սալդուրի I կամ Իշպուինի) և Մենուա/), ինչպես նաև ուրարտացիների հաստատում իշխանություն մասին:

12. И.М. Дьяконов, История Мидии, стр. 164 и прим. 1. Գիլգամեի տեղոյոշումը պայմանական է: Հետազոտողների մեծամասնությունը այն տեսնում է Ուրմիայից արևմուտք կամ հարավ-արևմուտք ընկած տարածքներում (Н.В. Арутюнян, Топонимика Урарту, Ер., 1985, стр. 64-65, Карта): Վերջին անգամ Գիլգամեի հիշատակվում է Բ.ա. 827թ՝ Սալմանասար III-ի տարեգրությունում (ARAB, I, 588):

13. Բ.ա. 9-րդ դարի վերջերին ասորեստանյան արքյուրների «նաիրյան երկրներ» արտահայտությունն ուներ տարածական այլ ընդգրկում՝ չնույնանալով Նաիրի/Ուրարտուին: Այս արտահայտության տակ էին ընկալում ասորեստանցիները նաև մերձորմյան ողջ ավազանը՝ ներառյալ Մանան, Մեսին, Գիլիքունդան, Պարսուան և անգամ՝ մարական իշխանությունները: ARAB, I, 718-719, 722; տե՛ս նաև Դ.А. Меликишвили, Наир-Урарту, стр. 13 և; М. Salvini, Nairi, Na'iri, in RLA, Band 9. 1/2., 1998, S. 87-91.

14. Պատահական չէ այն իրողությունը, որ ասորեստանյան էպոնիմների ցուցակում Մագամուայի կուսակալ Իլիմուկինախի<sup>18</sup> էպոնիմատի տարած (Բ.ա. 828թ.) արձանագրվել է միայն Մանայի դեմ կատարված արշավանքի իրողությունը այն դեպքում, երբ ասորեստանյան բանակն արշավանքի ընթացքում գործ է ունեցել մերձորմյան ավազանի ռազմարվ երկրների հետ (ARAB, I, 587; II, 1198): Երկրանվան այս ընտրությունը ամենևին չունի գրաֆիկ նշանակություն, ինչպես ենթադրվել է մասնագիտական գրականությունում (И.М. Дьяконов, История Мидии, стр. 163, прим. 10) և չի հանդիսացել մերձորմյան ավազանն արտահայտող ընդհանրական անվանում: Կարծում ենք՝ այն պարզապես արտահայտել է տարածաշրջանի քաղաքական իրավիճակը՝ վկայելով մերձորմյան երկրների շարքում Մանայի գերազանցության մասին, որի հետագա վերելքի և տարածական ընդարձակման դեմ էին ուղղված ասորեստանցիներ գործողությունները Բ.ա. 828-827թթ.:

15. Մասնագիտական գրականության մեջ այս փաստով է բացատրվում Նեբբին Ջամուայի (<sup>m</sup>Zamā ša bītāni) անհետացումը սեպագիր արքյուրներում (Դ.А. Меликишвили, Наир-Урарту, стр. 196):

16. Վերջինիս համար, թերևս, այս հանգամանքով էր պայմանավորված հարավ-արևելյան ուղղության ընտրությունն ու այս ուղղությամբ ձեռնարկված գործողությունները, որպես առաջին քայլ՝ ախտյան երկրի դեմ,

և սկիզբ՝ առաջնության համար մղվող պայքարի: Հարկ է նկատել, որ սեպագիր արքայությունների տվյալները բույլ չեն տալիս խոսելու մինչև Բ.ա. 9-րդ դարի վերջ հարավ-արևմուտք կատարված ուղարտական որևէ առաջխաղացման մասին: Այն սկիզբ է առել ոչ վաղ քան Բ.ա. 800/799թ. (И.М. Дьяконов, Предыстория армянского народа, Е., 1968, стр. 156, прим. 209): «Արևմտյան» երկրներ Ալլի(նի)ն, Խարեն և Շուփա(նի)ն առաջինը հիշատակվում են Մեմուայի կազմած արձանագրություններում (Н.В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей, Ер., 2001, №№ 44; 56; 148; 149 /այսուհետ՝ КУКН/):

17. Արքայությունը Շարժինայի 300 բնակավայրերից բացի հայտնում են Իշպուինիի 200 բնակավայրերի և 11 ամրացված քաղաքների մասին (ARAB, I. 717): Ընդ որում, ուշադրության է արժանի այն տեղեկությունը, որի համաձայն ուրարտական բնակավայրերը գտնվել են Սուրբիի հարևանությամբ: Վերջինս մասնագիտական գրականության մեջ տեղորոշվում է Փոքր Ջարի վերին հոսանքի շրջանում (Н.В. Арутюнян, Топонимика Урарту, стр. 172-173): Հավանաբար, այս նույն ժամանակահատվածում են ուրարտացիները հիմնել Կալատզահի ամրոցը (Ուրմիայից հարավ-արևմուտք)՝ նվաճված շրջաններն ամրապնդելու նպատակով: Վերջինիս տարածքից հայտնի է Իշպուինիի և Մեմուայի կառավարման վաղ շրջանում կազմված և ռազմական-շինարարական բնույթ ունեցող մի արձանագրություն (КУКН, № 39):

18. ARAB, I. 718.

19. Դ-լանք են՝ Շարժինայի իշխանությունը, Մեսսին և Գիզլիրունդան:

20. КУКН, № 35:

21. Մե(ի)շրա-Մեսսի նույնացման մասին տե՛ս Н.В. Арутюнян, К некоторым урартским топонимам южнее Урмии, "Древний Восток", т. 4, Ер., 1983, стр. 230-231:

22. Н.В. Арутюнян, Топонимика Урарту, стр. 138-140, 55, Карта; КУКН, стр. 514, 500, Карта.

23. И.М. Дьяконов, История Мидии, стр. 169, пр. 5; М. Салвини, Распространение влияния государства Урарту на Востоке, стр. 227.

24. Ուրարտական արքայությունում Ասորեստանը առաջին անգամ հանդես է գալիս Մեմուայի միանձնյա գահակալության շրջանում կազմված մի արձանագրությունում (КУКН, 44, верх. стор., стк. 13), իսկ նրա հետ քախում արձանագրվում է սկսած միայն Արգիշտի I-ի կառավարման շրջանից (Բ.ա.786-765թթ.):

25. Ասորեստանյան բանակը սկզբնապես գործել է Մեծ Ջարի միջին հոսանքի շրջանում, Ուրմիայից հարավ-արևելք, որից հետո շարժվել դեպի Պարսուա և Գիզլիրունդա (Դիալա գետի ակունքների և Կրզըլ-Ուզենի վերին հոսանքի միջև): Ուրարտացիները ևս գործել են Ուրմիայից հարավ ընկած՝ Դիալայի վերին հոսանքն ու ակունքներն ընդգրկող տարածքներում (Բ/Պարշ(ս)ուա):

26. Թերևս՝ որպես Բարշուայի «արքայական քաղաք». Տե՛ս Н.В. Арутюнян, Биайнили (Урарту), стр. 143; Г.А. Меликишвили, Наири-Урарту, стр. 238.

27. ARAB, I, 718.

28. ARAB, I, 718.

29. КУКН, № 35, лиц. стор., текст I, стк. 18-20 = обор. стор., текст III, стк. 22-24.

30. ARAB, I, 717. Առաջին փաստը կարելի է բացատրել այն իրողությամբ, որ այս շրջանում Մենուան ոչ միայն չի կրել արքայական տիտղոս, այլև չի ունեցել այն դերը, ինչ Իշպուինիի կառավարման վերջում (այս իրողությունն է կարծես ակնարկվում Քելիշինի արձանագրությունում (КУКН, № 30): Առավել մանրամասն տե՛ս Н.В. Арутюнян, Биайнили (Урарту), стр. 142-143), իսկ երկրորդը, քերևա, ժամանակաշրջանի ասորեստանյան աղբյուրների չափազանց սուղ տվյալներով:

31. КУКН, № 35, лиц. стор., текст I, стк. 13 = лиц. стор., текст II, стк. 43, обор. стор., текст III, стк. 14-15.

32. Այս տիտղոսը (արքադ. LUGÁL GAL-á) առկա է արձանագրության ասորեստանյան տարբերակում. նշանակությունն է «մեծ արքա (= ուրարտ. LUGÁL alsuini/e)»:

33. КУКН, № 30, урарт. текст, стк. 2-5, իսկ արձանագրության մեկ այլ հատվածում (տող 17-19) Իշպուինիի անվան մոտ բացակայում է Մենուա անունն անգամ:

34. Н.В. Арутюнян, Биайнили (Урарту), стр. 143. Հետաքրքիր է, որ նման արտահայտություն են պարունակում նաև այս արքաների մյուս նվաճումները նկարագրող վեց արձանագրություններից երկուսը՝ Հյուսնենցի արձանագրությունն ու նրա կրկնօրինակը (КУКН, № 32, стк. 12-13; КУКН, № 33, стк. 13-14), ընդ որում՝ նման բովանդակություն ունեն ռազմական բնույթի ևս երկու արձանագրություն (КУКН, №№ 31, 34): Սրանք բոլորն էլ վերաբերում են Ուխտերուխի, Լուշա և Կատարգա ցեղապետությունների նվաճմանը, որն իրականացվել է, ըստ ամենայնի, Իշպուինիի գահակալության վերջին շրջանում:

35. Բաբելոնիայի դեմ մղված պատերազմը քվազրվում է ըստ ասորեստանյան էպոնիմների ցուցակի (տրվում է համաձայն Ի. Դյակոնովի քվազրումների: И.М. Дьяконов, Ассииро-вавилонские источники по истории Урарту, ВДИ, 1951, № 2, стр. 305 /текст №39/):

36. М. Салвини, Распространение влияния государства Урарту на Востоке, стр. 227-228. Այս առումով ուշադրության է արժանի արձանագրության՝ ռազմավարի թվարկմանը հաջորդող հետևյալ հատվածը. «*Խալդյան հզորությամբ չա* (թվարկված ավարը - Ե.Գ.) *Իշպուինի Մարտիրոսդին, Մենուա Իշպուինոսդին տարան: Բայց այն, ինչ ռազմածիրը փախցրին, (առանձին տարան), երբ ամրոցները (արքաները) լքեցին*: КУКН, № 35, лиц. стор., текст I, стк. 24-28 = обор. стор., текст III, стк. 31-35.

37. Այն է՝ հաստատվելով Ուրմիայի ափերին հիմնել ռազմական հանգրվաններ, հասնել Մանայի թագավորության և հյուսիս-գաղության երկրների նվաճմանը, ինչը բոլը կտար Ուրարտուին ապահովել այդ թե՛ն ու վերահսկել Ջազդուսի առևտրական ուղիները՝ կտրելով Ասորեստանին Իրանական բարձրավանդակի հունքի աղբյուրներից և, ընդհանրապես, «արևելյան» առևտրական ճանապարհներից: Այս քաղաքականության իրագոր-



ծումը հանգեցնելու էր հումքի սեփական աղբյուրներից զուրկ Ասորեստանի տնտեսական անկմանը, ինչը չէր կարող չդրսևորվել մաս ռազմական ասպարեզում: Հաջողությամբ իրագործված քաղաքականության արդյունքները երևացին արդեն Մենուայի որդու և հաջորդի՝ Արգիշտի I-ի կառավարման տարիներին, երբ Ուրարտուն և ի վիճակի գտնվեց հաղթել Ասորեստանի ու նրան դաշնակից զագրոսյան երկրների միացյալ ուժերին՝ զգալի ժամանակով ապահովելով իր գերիշխանությունն ամբողջ շրջանում: Նման քաղաքականություն էին վարում ուրարտացիները մաս արևմուտքում՝ ուշ խեթական – լուվիական իշխանությունների դաշնակցությամբ, որոնք վերահսկում էին «արևմտյան» առևտրական ճանապարհները: St'u C.M. Бациева, Борьба между Ассирией и Урарту за Сирию, стр. 17-36; L.D. Levine, East-West Trade in the Late Iron Age: A View from the Zagros, in "La Plateau Iranien et l'Asie centrale des origines à la conquête islamique", ed. M.J. Deshayes, Paris, 1977, p. 172-186; M. Wäfler, Zum assyrisch-urartäischen Westkonflikt, "Acta Praehistorica et Archaeologica", vol. 11/12, 1980/1981, S. 79-97; I.M. Diakonoff, I.N. Medvedskaya, The Kingdom of Urartu (rec. on "Das Reich Urartu (Hrsg. V. Haas), Konstanz, 1986), Bibliotheca Orientalis, 1987, Jaargang XLIV, 1-2/3-4, p. 386-394, sp. 389.

38. КУКН, № 44, лиц. стор., стк. 2-3.

39. ARAB, II, 1198.

40. Այս տարիքվի հիմնավորումը տե՛ս И.М. Дьяконов, История Мидии, стр. 168, прим. 3.

41. Արժանագրության համաձայն (ARAB, I, 739) Ալյադնիրարի III-ը նվաճել է «Նաիրի երկիրն իր ողջ լայնությամբ», նրա շարքերում, ի թիվս այլոց, նշելով մաս Մաման (տեքստում՝ Մունման) և Մեսսին (Մեսու):

42. Արշավանքը, ամենաոման հավանականությամբ, տեղի է ունեցել Ք.ա. 802/1թ.-ից մինչև մ.թ.ա. 791թ. ընկած շրջանում, այն է՝ ասորեստանյան արշավանքի տարին դեպի մերձուրմյան ավազան, որը կարելի է դիտել ուրարտական նվաճումների դեմ ուղղված պատասխան քայլ:

43. Ուայախը, որն ասորեստանյան աղբյուրներում հանդես է գալիս մաս Ուն/սի, Ուազե/ուս, իսկ ուրարտական աղբյուրներում՝ Ուիշ/ս/ի(նի) տարընթերցումներով, հիշատակվում է բացառապես Մուծածիր, Խուրուշկիա և Մամա երկրների հետ, ինչը ենթադրում է նրա տեղորոշում վերջիններիս հարևանությամբ՝ Ուրմիայի մերձակայքում: Համադրելով սեպագիր նյութը հնագիտական աղբյուրների հետ՝ Ուայախը կարելի է նույնացնել Հասանլու հնավայրին (Սուրուզի հովտում՝ Ուրմիայից հարավ), որը շրջանում հնագիտորեն վկայված խաչորագույն կենտրոնն է: Այս նույնացումը հավաստում է գտնում հայկական աղբյուրներում՝ ի դեմս Պարսկահայք նահանգի հարավային գավառի՝ Արիսի/Արասիսի վաղ անվանման՝ Ուես (Բ.Հ. Հարությունյան, Մեծ Հայքի Պարսկահայք աշխարհն ըստ «Աշխարհացոյց»-ի, ՊԲՀ, 1989, թիվ 3, էջ 36): Ամերիկացի հետազոտող Փ. Ջիմանսկին Ուայախը նույնացրել է Հասանլուից 20կմ. հյուսիս ընկած Կալանգահ հնավայրին (P. Zimansky, Ecology and Empire: The Structure of the Urartian State, SAOC, Chicago, 1985, vol. 41, p. 112, n. 64), գտնելով մաս, որ այդ անունը մինչև այդ կրել է Հասանլուն (= Հին Ուայախ): Վերջինիս ավերումից հետո

հիմնադրված Կալատգահիր, ըստ նրա, ուրարտացիները կոչել են շրջանի երբեմնի կենտրոնի անունով՝ «Նուր/ Ուարխա» (P. Zimansky, *Uartian Geography and Sargon's Eighth Campaign*, JNES, 1990, vol. 49, No. 1, p. 16-18, n. 69): Մ. Սալվինին, ի դեմս Հասանլուի, տեսնում է ուրարտական սեպագրերի Մե(ի)շթա քաղաքը: Տե՛ս M. Salvini, P.E. Pecorella, *Tra lo Zagros e l'Urmia, "Incunabula Graeca"*, vol. 78, Roma, 1984, S. 19ff., Fig. 1.

44. R.H. Dyson, *Rediscovering Hasanlu, "Expedition"*, 1989, vol. 31, No. 2-3, p. 6 (chronological chart): Հնագիտական նյութը թույլ է տվել վերականգնել գրոհի որոշ մանրամասներ: Հայտնի է, որ այն տեղի է ունեցել ամռանը, թերևս՝ օգոստոսին, ինչի վկայությունն են գինու չաների և կարասների մեջ խաղողի ողկույզների մեծաքանակ մնացորդների առկայությունը: Հարձակումը եղել է միանգամայն անսպասելի քաղաքի քնակիչների համար: Թշնամին մուտք է գործել քաղաք նրա գլխավոր արևմտյան դարպասից, հրի մատնելով կենտրոնական բոլոր շինություններն ու քնաջնջելով քնակիչներին: Միայն «Հրկիզված շենք II»-ի սրահում հայտնաբերվել է կանանց 40-ից ավել աճյուններ (R.H. Dyson, *Problems of Protohistoric Iran as seen from Hasanlu*, JNES, 1965, vol. 24, No. 3, p. 202).

45. R.H. Dyson, O.W. Muscarella, *Constructing the Chronology and Historical Implications of Hasanlu IV, "Iran"*, 1989, vol. 27, p. 19; և այլք: Չ. Բըրնին հակված է Հասանլու IVB-ի կործանումը վերագրել Մենուայի որդուն և հաջորդին՝ Սրգիշտի I-ին (Ք.ա. 786-765թթ.), նկատի ունենալով նրա բազմակի արշավանքները Մանայի դեմ (Ch. Burney, *Contact and Conflict in North-Western Iran, "Iranica Antiqua"*, vol. 29, 1994, p. 57): Սլաժամանակ, միանգամայն այլ մոտեցում է ցուցաբերում Ի.Ն. Մեդվեդսկայան՝ գտնելով, որ Հասանլու IVB-ն կործանել են ոչ թե ուրարտացիները, այլ՝ ասորեստանցիները՝ Ք.ա. 714թ. Ուրարտուի դեմ ձեռնարկված Մարզոն II-ի «VIII տարվա արշավանքի» ընթացքում (I.N. Medvedskaya, *Who Destroyed Hasanlu IV, "Iran"*, 1988, vol. 26, p. 1-15; *ibid.* Once more on the destruction of Hasanlu IV: problem of dating, *"Iranica Antiqua"*, 1991, vol. 26, p. 149-161): Այս մոտեցումը կտրականապես մերժել են Հասանլուի պեղումներն իրականացնող խմբի ղեկավար Ռ.Հ. Դայսոնը և այլք: Առավել մանրամասն տե՛ս R.H. Dyson, O.W. Muscarella, *Constructing the Chronology and Historical Implications of Hasanlu IV*, p. 1-26:

46. Տվյալ հատվածում քայի *harharš(u)* - «ավերել» տարբերակով վերականգնման հնարավորությունը տե՛ս КУКН, стр. 68, прим. 3.

47. КУКН, № 45, стк. 1-5.

48. Մասնագիտական գրականության մեջ ինքնավոր է համարվել վնասված այս հատվածը վերականգնել նաև <sup>10</sup>EN.NAM («մարգային կառավարիչ») գաղափարագրով: Տե՛ս Г.А. Меликишвили, *Урартские клинообразные надписи*, М., 1960, стр. 153, прим. 6 (այսուհետ՝ УКН).

49. КУКН, № 45, стк. 6-7.

50. W. Kleiss, H. Hauptmann, *Topographische Karte von Urartu*, AMI, *Ergänzungsband* 3, Berlin, 1976, S. 28-35, Blatt I; W. Kleiss, *Alte wege in West-Iran*, AMI, 1977, Band. 10, S. 138, Abb. I; S. Kroll, *Keramik Urartäischer Festungen in Iran*, AMI, *Ergänzungsband* 2, Berlin, 1976, S. 171-173, Abb. 45-

46. Հետազնայում նման աշխատանքներ ծավալվեցին մահ Հասանյում, որի հզոր ամրությունները բարձրագույն են, ի տարբերություն մախկինում շրջա-  
նառվող կարծիքի, ուրարտացիների կողմից (R.H. Dyson, Rediscovers  
Hasanlu, "Expedition", 1989, vol. 31, No. 2-3, p. 5f., pls. 4, 6, 11)՝ վերածելով  
այն «ամուր քաղաքի» (āl dannūtī) և «մեծ բերդի» (birtu rabn), ինչպիսին հան-  
դես է գալիս «Լուվրի աղյուսակում» (W. Mayer, Sargons Feldzug gegen Urartu-  
714 v.Chr.: Eine militärhistorische Würdigung, MDOG 115, 1983, S. 98, 299):  
Հասանլու III-ն իրենից ներկայացնում է տիպիկ ուրարտական բերդամրոց:

51. W. Kleiss, Urartäische Plätze in Iran, AMI, Bd. 9, 1976, S. 41-43.

52. W. Kleiss, H. Hauptmann, Topographische Karte von Urartu, S. 28-  
35, Blatt 1; Տե՛ս նաև P. Zimansky, Ecology and Empire, p. 36-40.

53. КУКН, № 46.

54. К.Л. Оганесян, Военное строительство в Урарту, -Культурное  
наследие Востока (отв. ред. Ю.В. Бромлей), Л., 1985, стр. 151.

55. Այս հատվածում Մե(ի)շքա քաղաքի անվան բացակայության  
փաստը կարծես քն հուշում է, որ այն չի հանդիսանում արձանագրության  
սկզբնամասի կրկնություն, ինչից ենթադրում ենք, որ տվյալ դեպքում գործ  
ունենք այլ արշավանքի իրողության հետ: Ուշադրություն է գրավում մահ  
«առաջնորդեց Խալդի (աստվածը)» արտահայտությունը, որը հանդես է  
գալիս Խալդիի ռազմի բնույթը մեծարող բանաձևերի հետ՝ սովորաբար մա-  
խորդելով առանձին արշավանքների նկարագրություններին: Հմմտ.,  
օրինակ, КУКН, № 149, տ. 20 ս; № 173, տ. 1, տ. 19 ս.; № 173,  
տ. 2, տ. 5 ս. և Տ.Ը.:

56. КУКН, № 45, տ. 8-12.

57. КУКН, № 45, տ. 69 և прим. 11, ս. УКН, տ. 153 և прим. 8.

58. КУКН, № 148, տ. 5-22 = КУКН, № 149, տ. 3-19.

**ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՍԵՊԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՂ  
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԴԱՍՏԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ՎԵՐՋԱԾԱՆՑՆԵՐԻ**

Հայկական լեռնաշխարհի էքոնոմիկային և պատմալեզվական բազում հարցերի բացահայտմանը մեծապես նպաստում է ուրարտական տեղանունների տեղադրության, ստուգաբանման և վերլուծության խնդիրների պարզաբանումը: Այս հարցերին տարբեր տեսանկյուններից բազմիցս արեղարարծել են հայ և արտասահմանցի գիտնականները: Մասնավորապես Գ. Ղափանցյանը, Ա. Ղարիբյանը, Գ. Ջահուկյանը մեծ աշխատանք են կատարել ուրարտական տեղանվանականներտ վերջածանցների որոշ մասի ծագման և վերլուծության ուղղությամբ:

Սակայն, պետք է նշել, որ նրանց լիովին դասակարգում, տիպաբանում և վերլուծություն կատարված չէ: Մենք փորձել ենք մասամբ կատարել նման դասակարգում, ինչպես նաև այս կամ այն տարածաշրջանում նրանց հանդիպման հաճախականության պարզաբանում՝ օգտվելով Ն. Վ. Հալաբյանի «Топонимика Урарту»<sup>2</sup> աշխատությունից, որտեղ առավելագույնս հավաքագրված են ուրարտական սեպագիր տեղանունները և կատարված է նրանց տեղադրությունը: Պետք է նշենք, որ նման աշխատանքը դուրս է գալիս զուտ դասակարգման շրջանակներից և հնարավորություն է ընձեռում որոշ չափով պարզություն մտցնել նրանց ծագման և ստուգաբանման խնդիրներում:

Ուրարտական տեղանունները մեծ մասամբ կազմված են արմատից և վերջավորություն-վերջնածանցից: Այդ վերջածանցները բնականաբար դրված են հոգնակի թվում կամ ունեն հոգնակի-հավաքական իմաստ: Տեղանվանակերտ վերջածանցները, մեր կարծիքով, կարելի է բաժանել մի քանի խմբի՝

ա) բուն տեղանվանակերտ վերջածանցներ (որոնք հատուկ են այս կամ այն լեզվին),

բ) հոգնակի ուղղականով արտահայտված վերջնածանցներ,

գ) հոգնակի սեռականով (այսինքն պատկանելություն ցույց տվող, կամ հատկացուցչի իմաստ արտահայտող) վերջածանցներ կամ վերջավորություններ:

Որպես օրինակ բերենք Հայաստան տեղանունը՝ «ստան» տեղանվանակերտով, Հայք՝ «ք» հոգնակի ուղղականի ցուցիչով և Հայոց աշխարհ՝ «ոց» հոգնականի սեռականի ցուցիչով երկրանունը: Այս օրինակը շատ բնորոշ լինելով՝ մատնանշում է, սակայն, մի երևույթ, որը չի կարելի շրջանցել այսօրինակ աշխատանք կատարելիս:

Հայաստան տեղանվան մեջ՝ «ստան»՝ իրանական ծագման տեղանվանակերտը դրված է մեկ այլ ժողովրդի երկրանվան վրա: Սակայն նման վրիպումներից խուսափելու հնարավորություն է ընձեռում լեզվաբանական նյութի զուգադրումը պատմականի հետ: Եվ, ինչպես, ինչպես կտեսնենք ստորև, նման մոտեցումը հնարավորություն է տալիս շատ բացատրությունների բացատրությունը գտնել:

Այս աշխատանքում մենք կանոնադաշտանք ուրախտական տեղանունների միայն այն վերջածանցներին, որանք իրենց զուգահեռներն ունեն հայերենի հոգնակի վերջածանցների հետ: Այդ զուգահեռները ժամանակին անցկացրել է Ա. Ղարիբյանը իր «Հայերենի հոգնակի նշանակող մասնիկները և նրանց լեզվաբանական արժեքը»<sup>3</sup> հոդվածում, որտեղ, սակայն, հեղինակը ներկայացնելով սեպագիր և հայերեն մի խումբ վերջածանցների համարժեքությունը, նրանցից յուրաքանչյուրի համար բերում է մի քանի օրինակ: Մենք այստեղ փոխել ենք խմբավորել այդ վերջածանցներով հանդիպող տեղանունների մեծ մասը:

Այդ վերջածանցները հետևյալն են՝

ա) սեպագիր տեղանուններում՝ ani, uni, eni, ini, ni, սհի, ահի, ti, di, te:

բ) հայերեն հոգնակիների մեջ՝ անի, ունի, ենի, (յ)նի, նի, ք, տի, տ:

Հայերենի և ուրարտերենի հոգնակիակերտ մասնիկների ծագման և փոխադրեցության խնդիրներին, բացի Ա. Ղարիբյանից անդադարձել են Գր. Ղափանցյանը<sup>4</sup>, Գ. Ջախուկյանը<sup>5</sup> և այլք:

Ի մի բերելով նրանց դիտարկումները՝ հայերենի և ուրարտերենի վերոհիշյալ հոգնակիակերտ մասնիկների մասին, կարելի է ասել.

1. Հայերենի «ք» հոգնակիակերտը, որ գրաբարյան հոգնակի վերջավորություն է, կարող է համարժեք ընկալվել ուրարտական *hi* և *he* ածանցների:

2. Հայերենի «նի», «խի» մասնիկներով վերջացող բառերում կարելի է ենթադրել ուրարտական ձևերի առկայությունը: «Նի»-ով վերջացող գրաբարյան բառերը հաճախ գիտակցվել են որպես հավաքական իմաստ ունեցողներ:

3. Հայերենի «անի»-ով հավաքականները, «ենի»-ով ծառանումները և «ունի»-ով նախաբարական տների անումների վերջավորությունները նույնպես ենթադրվում են ուրարտական ծագման:

4. Հայերենում հանդիպող «անի», «խանի» կամ «յանի» վերջածանցները, որոնք հանդիպում են հայերենի տեղանուններում և որոշ բառերում՝ ենթադրվում են ուրարտական ծագման:

5. «Տի» մասնիկով հոգնակիներ հայերենում հանդիպում են գրաբարում, օրինակ՝ մանկտի (մանուկներ), ծակտի (ծակեր): Միջին հայերենում գործածված են հոգնակի իմաստով այրկտի (այրեր), կնկտիք (կանայք): «Տի» մասնիկով, «ի» ձայնավորի կորստով, որպես հոգնակի հանդիպում է Վանի բարբառում:

Ինչպես տեսանք «անի», «ունի», «ենի», «խանի», «յանի», «նի», ինչպես նաև «ք»-ին համարժեք *hi*, *he* և նախորդից կազմված *սհի*, *սհե* վերջածանցները համարվում են ուրարտական ծագման: Բացառություն են կազմում հայերեն «տի», և նրան համահունչ տեղանուններում հանդիպող *ti*, *te*, *di*, *de*, *da* և այլ վերջածանցները:

Ինչպես նշվեց արդեն, մնալով վերը նշված վերջածանցների շրջանակում, մենք դասակարգել ենք այդ տեղանունները ըստ նրանց տարածման շրջանների և հանդիպման հաճախականության: Այդ վերջածանցները հետևյալն են.

1. *ahi, ihi, ha, hi, ssha, shi*;

2. ani;
3. iani, iani;
4. eni, ini, ni;
5. ia, a;
6. da, di, ad, te, ti, tu;
7. un, uni, unu;

Կոմկրետ վերջածանցների տարածման շրջաններն են.

1. Մեծ Ջաբ և Փոքր Ջաբ գետերի վերին հովիտ – un(i), ia, du; ?
2. Հայկական Տավրոսի լեռներ /Ուրուատրի/ – un(u), hi, (n)ia, t/dua;
3. Դիարբեքիլի դաշտ /Բիթ-Ջամանի/ – ia, nia, du;
4. Խարբերդի դաշտ /Էնգիտե-Անձիտ/ – ini, te;
5. Շուֆր /Շուպանի/ – ani;
6. Մալաթիայի դաշտ /Մելիտեա-Մելիպո/ – ani, te, du;
7. Ուրմիա լճի ավազան – ani, iani, eni, ini, ni, uni, (n)ia, ja, ia; f-
8. Վանա լճի ավազան – ani, eni, ini, ni, uni, (n)ia, di, du(a); f-
9. Բասենի դաշտ – ni, uni; f
10. Չղր լճի ավազան – ani, uni, ha, hi, (n)ia; ?
11. Բարձր Հայք /Դիառեխի/ – ni, hi, uhi, ha;
12. Արաքս գետի հովիտ և Շիրակ – iani, iani, (u)hi;
13. Սյունիք – (a)ni
14. Սևանա լճի ավազան – uni, ani, hi, hu; +
15. Կոտայք – uni, (n)ia, iani. –

Այսպիսով՝ նշանակալից ընդհանրություններ են դիտվում.

*1. Մեծ Ջաբ և Փոքր Ջաբ գետերի վերին հովիտների, Վանա և Ուրմիա լճերի ավազանների տեղանվանակերտ վերջածանցների միջև:*

Այս խմբին բնորոշ վերջածանցները հետևյալն են.

Վանա լճի ավազան – ani, eni, ini, ni, uni, nia, ինչպես նաև di և du(a)

– վերջիններիս մասին կիսովի առանձին:

Մեծ և Փոքր Ջաբ գետերի վերին հովիտ – uni, ia:

Ուրմիա լճի շրջակայք և Մուծածիք – ani, uni, ia, nia:

Նկատի առնենք, որ ըստ վերջածանցների խմբավորման, ընդգրկված են բուն ուրարտական համարվող տարածքները. Վանա լճի ավազանը, ինչպես նաև հետագայում ուրատացիների կողմից նվաճված և Մեծ Ջաբ գետի հովիտում արդեն Ք.ա IX դ. գոյություն ունեցող Մուծածիք (ուրարտերեն՝ Արդինի) քաղաքությունը, որը թեև ձևականորեն Ուրարտուի կազմի մեջ չէր մտնում, սակայն, այնտեղ էին հաճախ քաղադրվում ուրարտական քաղաքացիները, և որը Ուրարտուի պաշտամունքային կենտրոններից մեկն էր: Այս մասը համարվում է ուրարտական պետության կազմավորման կենտրոնը: Ի. Դյակոնովը գտնում է, որ Հայկական Տավրոսից հյուսիս, հավանաբար արդեն Ք.ա. II հազարամյակում բնակվել են ուրարտացիները, այն եղել նրանց էքնիկ տարածման շրջանը, որը իր մեջ ներառում է Մեծ Ջաբի վերին հոսանքի, Վանա լճի ավազանի և հյուսիսում՝ Արաքսի հովտի մի մասը:

Այս շրջանների հետ կապված պատմական տեղեկությունների օգտին են խոսում նաև մեր դիտարկված վերջածանցների տարածման շրջանները և նրանց ծագման ուրարտական լինելու մասին կարծիքները: Սակայն

այստեղ առկա է մեկ բացառություն. «յ» մասնիկը պարունակող վերջածանցները, որոնք չեն համարվում ուրարտական ծագման և հանդիպում են այս տարածքի Այադու երկրամասին, ինչպես նաև նրա լեռնակամ մեջ՝ Արծիդու: Այս բացառությունը, կարծում ենք, իր բացատրությունն է գտնում Գ. Ջահուկյանի և Հ. Կարազոյանի այն դիտարկումներում, որտեղ Այադու երկիրը նրանք համարում են հնդեվրոպաբնակ, անգամ հայաբնակ<sup>6</sup>:

2. *II խմբում քնդգրկվել են Ուրուատրիի և Մալաթիայի դաշտի տեղանվանակերտ վերջածանցները, ինչպես նաև Ծովքի, Խարբերդի դաշտի, Էնգիտ-Էնձիտի, մասամբ նաև Դիարբեքրի դաշտի վերջածանցները:*

Այստեղ հատկապես պետք է առանձնացնենք «յ» և «շ» հնչյունը պարունակող վերջավորությունները: Ինչպես տեսանք, Ա. Դարիբյանը տեղանուններում քնդգծել է «յ» և «տ» պարունակող վերջավորությունների գուգահեռները: Սակայն «շ»-ով վերջավորությունները առանձնացվում են մեր կողմից, քանի որ, ինչպես կեսնենք ստորև, նրանք գրեթե միշտ ի հայտ են գալիս նախադերձի հետ: «Ը» պարունակող վերջածանցները հայերենին բնորոշ չեն, սակայն հայտնի է, որ Գ. Դավանցյանը առանձնացրել է մի շարք խեթական վերջածանցներ, որոնք, ըստ նրա, գրվել են *š*-ով, սակայն արտասանվել են «ս»<sup>7</sup>: Դրանք են *ša*, *šša*: Նրա կարծիքով, այս վերջածանցները տարածված են եղել ողջ Փոքր Ասիայի տարածքներում, սակայն չեն հանդիպել Ուրարտում: Այսինքն «շ»-ով վերջածանցների հնդեվրոպական ծագումը հաստատված է, որն էլ ապացուցվում է ըստ մեր դիտարկումների Մալաթիայում և նրա հարակից շրջաններում դրանց առկայությամբ:

Հայտնի է, որ Մելիլի պետությունը սխեթական տեղության քաղաքական-մշակութային ժառանգորդներից մեկն է եղել<sup>8</sup>: Եվ Ք.ա. VII դ. վերջերից սկսվել է Ուրարտուի առաջխաղացումը դեպի Վերին Եփրատյան տարածքներ: Արգիշտի I օրոք Մելիտեան վերածված է Ուրարտուից կախյալ պետության, որից հետո ընկնում է Ասորեստանի գերիշխանության տակ: Մալաթիայի բնակչության, եթե ոչ մի մասի հայաբնակ, ապա հնդեվրոպական լինելու մասին գիտության մեջ կասկածներ չկան: Այսինքն այս վերջածանցների ակտայությունը Մալաթիայում և նրա շրջակայքում, ինչպես նաև Խարբեղում (Անձիտ-Էնգիտ) բնական է:

Սակայն, հետաքրքրական է նրանց առկայությունը Ուրուատրիում: Հայտնի է, որ Ուրուատրի տեղմինը առաջին անգամ հիշատակվում է Ասորեստանի քագավոր Սալմանասար I-ի (Ք.ա. 1274-1245թթ.) արձանագրությունում: Դա այն երկրների միության անունն է, որոնց դեմ ասուրական քագավորը արշավանքն էր կազմակերպել: Այստեղից պարզվում է, որ Ուրուատրի քնդհանուր անվան տակ միավորված էին ութ երկրներ, որոնք տեղադրվում են Վանա լճից հարավ ընկած շրջանում, Հայկական Տավրոսում: Այսօր մենք չենք կարող բացատրել վերոհիշյալ վերջածանցների առկայությունը Ուրուատրիի տարածքում, սակայն կարող ենք կատարել մի քանի դիտարկում: Ի. Դյակոնովը գտնվում է, որ Ուրուատրիի տարածքը, որ մտնում էր Նախյան երկրների մեջ, Ք.ա. XV-XIV դդ. քնդգրկված է եղել Միտաննի կազմում: Այնուհետև Ուրուատրին եղել է խեթական պետության կազմում<sup>9</sup>: Հայտնի է, որ Միտաննի պետությունը հնդեվրոպական չէր, այլ խուտիական, սակայն նրա արքաները կրում էին հնդեվրոպական անուններ:

Գուցե այսպես կարելի է բացատրել Ուրուատրիում հանդիպող այդ, ըստ երևույթին, ինդոէվրոպական վերջածանցների առկայությունը<sup>10</sup>։ Ավելացնենք նաև, որ վերոհիշյալ վերջածանցները մեծ քվոլ հանդիպում են նաև Տիգրիսի ավազանում և Մանայում (Մանեյան բազավորությունում) և նրան հարակից շրջաններում։

3. Հաջորդ՝ երրորդ խումբը, որ առանձնանում է ըստ վերջածանցների դասակարգման, Էթիույան, այսինքն՝ հյուսիսային և հյուսիս-արևելյան շրջանների տեղանուններն են, որի մեջ մտնում են Այաքս գետի հովիտը, Չրդոր լճի ավազանը, Բարձր Հայքը, Շիրակի մարզը, Սևանա լճի ավազանը, Կոտայքի և Մյունիքի մարզերը։ Այստեղ բնորոշ վերջածանցներն են՝ *ani*, *uni*, *ini*, *iani*, *jani*, *ni*, *hu*, *hi*, *uhi*։

Ուշադրություն դարձնենք, որ այստեղ գերակշռում են, ինչպես և առաջին խմբում, ուրարտական ծագման հաճախվող վերջածանցները։ Հայտնի է, որ Ուրարտական բազավորներից Իշպունինին և Մեմուան են սկսում արշավանքները դեպի հյուսիսային շրջանները, իսկ այնուհետև նրանց ձեռքբերումները ամրապնդում են Արգիշտի I-ը և Սարգուրի II-ը, որոնք վերջնականապես գրավում են Էթիունին։ Այստեղ մենք ցանկանում ենք կատարել մեկ դիտարկում։ Հիմնականում Սևանա լճի ավազանում հանդիպող տեղանունների կամ ցեղանունների շարքում, օրինակ Աշախունի, Վեկիբուխի(նի), Լուեբուխի(նի), Իշտիբունի, Լուեբունի, Ուխտունի, Տուլիսու և այլն, ակնհայտորեն ուրարտական ու կամ *hi* մասնիկից առաջ ընկած բառամասը վերջանում է (u) կամ (ku) մասնիկով։ Մենք թույլ են տալիս ենթադրել, որ նրանց հանդիպման հաճախականությունը և օրինաչափությունը խոսում են այն մասին, որ դրանք մույնպես վերջավորություններ են, որոնք բնորոշ են եղել այդ տարածաշրջանում ապրող բնակչությանը։

Այսինքն՝ այս վերջածանցների մասին խոսելիս, պետք է հաշվի առնել, որ նրանց կազմված են տեղական վերջավորությունների և ուրարտական *hi* կամ *ni* մասնիկների հավելումով։ Եթե ճիշտ է այս դիտարկումը, ապա այս շրջանում հանդիպող ցեղանունների կամ տեղանունների վերջավորությունները պետք է համարվեն *kuhi*, *kuni* մասնիկները, որոնք չի կարելի միանշանակ համարել ուրարտական ծագման։

Եզրավակելով, պետք է նշենք, որ աշխատանքի արդյունքում մույնատիպ վերջածանցների խմբավորմամբ ձևավորվում են երեք մեծ տարածաշրջան։

1. Հարավ-արևելյան՝ Մեծ Զաք և Փոքր Զաք գետերի հովիտներ, Վան և Ուրմիա լճերի ավազաններ։

2. Հարավ, հարավ-արևմտյան՝ Ուրուատրի, Մալաթիայի դաշտը։

3. Հյուսիսայինը՝ Էթիույանը

Դիարբեքիի դաշտը առավել ընդհանրություններ ունի II խմբի հետ։

Ինչպես տեսանք դիտարկած վերջածանցների խմբավորման արդյունքում առանձնանում են որոշակի տարածքներ, որոնց վերաբերյալ եղած պատմական տեղեկությունները համընկնում են լեզվական ուսումնասիրության արդյունքներին։ Մենք կուզենայինք ավելացնել, որ հիմքեր կան ենթադրելու, որ այս շրջանների վերաբերյալ հնագիտական նյութի ուսումնասիրության արդյունքում մույնպես նմանատիպ պատկեր է ստեղծվում, որի մա-



սին սակայն այս հոդվածում չի խոսվի: Ինչպես ակնառու է, մեր դիտարկված վերջածանցները ընդգրկում են Հայկական լեռնաշխարհի ոչ բոլոր շրջանները՝ խնդիր, որ առանձին ուսումնասիրության քննա է: Ինչ վերաբերում է այս վերջածանցների ծագման և փոխառությունների խնդիրներին, ապա չնայած վերը նշված գիտնականների այս ուղղությամբ կատարած աշխատանքներին, այն հետագայի առավել լիարժեք և մանրագնին ուսումնասիրություն է պահանջում:

## H MAYAKYAN HASMIK

### CLASSIFICATION OF URARTIAN CUNEIFORM TOPONIMS ACCORDING TO SUFFIXES (Summary)

Based on N.V. Harutyunyan's "Toponymics of Urartu", which comprises the most complete list of Urartian toponyms, we made an attempt to classify a portion of them according to suffixes (which have their parallels with Armenian plural suffixes) and to show areas of their distribution.

These suffixes are as follows:

1. ahi, ihi, ha, hi, uha, uhi;
2. ani;
3. iani, iani;
4. eni, ini, ni;
5. ia, a;
6. da, di, ad, te, ti, tu;
7. un, uni, unu.

The classification resulted in the formation of three major areas such as:

1. The South-Eastern – valleys of Great and Minor Zab rivers, basins of lakes Van and Urmia;
2. The Southern and South-Western – Uruatri, Malatya field;
3. The Northern – Etiunian.

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

<sup>1</sup> Гр. Капанцян, Историко-лингвистические работы, Ереван, 1956; Гр. Капанцян, Хайаса-колыбель армян, Ереван, 1948; Н.В. Арутюнян, Биайнили, Ереван, 1970; Н.В. Арутюнян, Топонимика Урарту, Ереван, 1985; Հ. Կարադյոզյան, Հայկական լեռնաշխարհի սեպագիր աղբյուրներում, հ. I, գ. I, Սեպագիր տեղանուններ, Երևան, 1998:

2. Н.В. Арутюнян, Топонимика Урарту, Ереван, 1985:

3. Ա.Ղարիբյան, Հայերենի հոգնակի նշանակող մասնիկները և նրանց լեզվաբանական արժեքը, Նյութեր իմ Հայաստանի պատմության, «ՀՍԽՀ» Կոլտնտրայի պատմության ինստիտուտի աշխատությունները, Երևան, 1935, էջ 87-104:

4. Գր. Կաпанцян, Историко-лингвистические работы (այսուհետև՝ Գր. Կաпанцян), с. 411-470;

5. Գ.Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, Նախագրային շրջան, Երևան, 1987, էջ 439-440; Բ.Ն. Առաքելյան, Գ.Բ. Ջահուկյան, Գ.Խ. Սարգսյան, Ուրարտու-Հայաստան, Երևան, 1988 (այսուհետև՝ Ուրարտու-Հայաստան), էջ 146-147:

6. Հ. Կարապյոզյան, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում, հ I, գ. I, էջ. 24-25; Ուրարտու-Հայաստան, էջ 159-160:

7. Գր. Կաпанцян, էջ 418-423.

8. Ա. Քոչյան, Տուն Թորգոմայ, Երևան, 1998, էջ 12-13;

9. И.М. Дьяконов, Языки древней Передней Азии, Москва, 1967, с. 117.

10. Գ. Ջահուկյանը փորձում է Uraṭri/Uruaṭri/Urartu անվանումը մեկնաբանել հայերենով, տե՛ս Ուրարտու-Հայաստան, էջ 163:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՆԱԽԱԶԹԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՇՈՒՐՋ

Նախաքրիստոնեական Հայաստանի դպրության մասին պահպանված մատենագրական բազմաթիվ հաղորդումներից՝ զատ, հնագիտական պեղումների շնորհիվ այսօր ունենք հսկայական փաստական նյութ: Հայկական լեռնաշխարհում գրի ծագման ու զարգացման մասին այսօր կարելի է ասել հետևյալը:

Քարի դարում սկիզբ է առնում գրի զարգացման նախափուլը («առարկայական գիր», ժայռապատկերներ), որում առկա են մտքերի հաղորդման պարզունակ և վաղադույն ձևեր: Բ.ա. V-III հազարամյակներում Հայաստանում ձևավորվում է պատկերագրությունը, որն արտահայտություն է գտնում ինչպես ժայռապատկերների, այնպես էլ զանազան խրերի վրա<sup>2</sup>:

Բ.ա. III հազարամյակում պատկերագրերի զարգացմամբ և սարգեցմամբ ստեղծվում է գծային գրերի մի համակարգ (բաղկացած 400-ից ավելի նշաններից), որը կիրառվում է մինչև Բ.ա. I հազ. սկիզբը: Այս համակարգով կատարված շուրջ 300 արձանագրություններ են գտնվել Հայաստանի տասից ավելի հնավայրերից, որոնք դեռևս վերծանված չեն<sup>3</sup>:

Բ.ա. XII-VIII դարերում Հայկական լեռնաշխարհի արևմուտքում՝ Եփրատի հովտում, կիրառվում են խեթա-լուվիական հիերոգլիֆները՝ գրված լուվիերենով: Գրային համակարգը բաղկացած է եղել շուրջ 500 հիերոգլիֆներից, ունեցել է գրության բուստրոֆեղեն (ամեն հաջորդ տողը նախորդին հակառակ) ուղղություն<sup>4</sup>:

Վանի թագավորությունում (Բիաինլի, Ուրարտու, Արարատ) գործածվել են երեք գրային համակարգեր: Տեղական ծագում ունեցող վանյան (քիաինա-ուրարտական) մեհենագրությունը բաղկացած է շուրջ 300 մեհանշաններից (հիերոգլիֆներից), որոնք գրվել են աջից ձախ և վերից վար ուղղություններով: Ներկայումս վերծանված ու մեկնաբանված են շուրջ 60 մեհենագրեր, որոնց ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրելու, որ վանյան մեհենագրության լեզուն հնագույն հայերենն է<sup>5</sup>:

Վանի թագավորությունում լայն կիրառություն են ունեցել սեպագիյս համակարգերը: Սարգուրի Ա արքայի օրոք (Բ.ա. մոտ 840-825թթ.) կանգնեցվել են ասորեստանյան սեպագրերով (շուրջ 600 նշան՝ ձախից աջ գրությամբ) ասուրերեն արձանագրություններ, իսկ նրանից հետո ասուրերենով բնագրերը հանդիպում են ուրարտական արքաների երկլեզու կոթողներում<sup>6</sup>:

Իշաուրիի արքայի օրոք (Բ.ա. մոտ 825-810թթ.) ստեղծվեց տեղական սեպագրային համակարգը (ավելի քան 200 նշան՝ ձախից աջ գրությամբ), որով մեզ են հասել ավելի քան 600 մեծ ու փոքր բնագրեր<sup>7</sup>:

Վանի թագավորության անկումից մինչև քրիստոնեության ընդունումը Հայաստանում գործածվում են այբբենական գրային համակարգեր (ի տարբերություն նախկին բառային ու վանկային համակարգերի):

Ք.ա. III դարից սկսած գործածվում է հունարենն՝ իր ալբուբենով (ծախից աջ գլուխով, 24 տառ)։ Մեզ են հասել զգալի թվով հունարեն արձանագրություններ նախաքրիստոնեական Հայաստանից<sup>8</sup>։

Ք.ա. II - Ք.հ. II դարերից մեզ են հասել արամեատառ արձանագրություններ (աշից ձախ գլուխամբ), որոնց վերծանությունը և լեզվի խնդիրը չի կարելի համարել վերջնականապես պարզված<sup>9</sup>։

Հայկական լեռնաշխարհի տարբեր հնավայրերից գտնվել են բազմաթիվ գրակիր առարկաներ, որոնք այստեղ են հայտնվել ռազմական, առևտրա-տնտեսական, մշակութային ու այլաբնույթ հարաբերությունների առաջնություն (օր՝ եգիպտական հիերոգլիֆներով կնիքները<sup>10</sup>, միջագետքյան սեպագրերով առարկաները<sup>11</sup>, հռոմեական բանակների Հայաստանում թողած լատիներեն արձանագրությունները<sup>12</sup> և այլ նյութեր)։ Մյուսն էլ թեպետ չեն կազմում հայաստանյան դպրության մասը, սակայն մտնում են նախաքրիստոնեական Հայաստանի գրային հուշարձանախմբի մեջ։

Նախաքրիստոնեական Հայաստանից հայտաբերված գրավոր մշակույթի հուշարձանները կարելի է խմբավորել ըստ մի քանի հատկանիշների։

*Ըստ ծագման և պատկանելության՝*

ա) Հայաստանում ստեղծված պատկերագրային համակարգեր (Ք.ա. V-III հզ. պատկերագրությունը, Ք.ա. III-I հզ. գծային գրերը, Վանի թագավորության (բիսինա-ուրարտական) մեհենագրությունը),

բ) օտար ծագում ունեցող, բայց Հայաստանի քնիկների կողմից կիրառված գրային համակարգեր (խեթա-լուվիական հիերոգլիֆիկան, ասուրական սեպագրերը, տեղական (բիսինա-ուրարտական) սեպագրերը, հունական և արամեական այբուբենները)։ Հատուկ ուշադրության են արժանի դրանց կիրառման տեղական առանձնահատկությունները։

գ) Հայաստանի տարածքում հայտնաբերված, սակայն օտարների կողմից ստեղծված գրակիր հուշարձաններ, որոնք, ինչպես նշվեց, չեն կարող համարվել հայաստանյան դպրության մասը։

*Ըստ գրային համակարգի բնույթի՝*

ա) բառային (այդպիսին է, թեևս, Ք.ա. V-III հզ. պատկերագրությունը, գուցե նաև Ք.ա. III-I հզ. գծային գրերը),

բ) բառա-վանկային (խեթա-լուվիական հիերոգլիֆիկան, ասուրական սեպագրերը, Վանի թագավորության (բիսինա-ուրարտական) մեհենագրերը և սեպագրերը),

գ) այբբենական (հունական և արամեական այբուբենները)։

*Ըստ գրանշանների արտաքին տեսքի՝*

ա) պատկերանշանային (Ք.ա. V-III հզ. պատկերագրությունը, խեթա-լուվիական հիերոգլիֆիկան, Վանի թագավորության մեհենագրությունը),

բ) գծանշանային (Ք.ա. III-I հզ. գծային գրերը),

գ) սեպանշանային (ասուրական և բիսինա-ուրարտական սեպագրերը),

դ) տառային (հունական և արամեական այբուբենները)։

Նախաքրիստոնեական Հայաստանի գրավոր մշակույթի հուշարձանները կարելի է խմբավորել նաև ըստ *գրանյութի, արձանագրությունների*

բովանդակության, գրության ուղղության և այլ հատկանիշների, որոնց կանոնադաշտնանք այլ առիթով:

Հազարամյակների ընթացքում Հայկական լեռնաշխարհում ստեղծված գրավոր մշակույթը չէր կարող անհետևանք կորչել, և մաշտոցյան դպրության կատարելությունը պայմանավորված էր նաև նախամաշտոցյան շրջանում արձատավորված գրային մտածողությամբ<sup>13</sup>:

### MOVSISYAN ARTAK

#### NOTES ON THE GENERAL CHARACTERISTICS OF THE WRITING CULTURE OF PRE-CHRISTIAN ARMENIA (Summary)

There are eight writing systems used in pre-Cristian Armenia and a lot of inscriptions of foreign origin found in Armenian Highland.

Author tries to give the general characteristics of writing culture of pre-Cristian Armenia according to their *origin and belonging* (native, imported, foreign), *writing systems characteristics* (logical, logo-syllabic, alphabetic), *outward appearance* (pictural, linear, cuneiform, letters), *content of inscriptions*, as well as *direction of writing* and other properties.

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Նախաքրիստոնեական Հայաստանի դպրության մասին պահպանված մատենագրական հաղորդումների ծաղկաբաղը տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա (ՀԺՊԲ), հ. 1, Եր., 1981, էջ 619-622:
2. Հայկական լեռնաշխարհում գրի առաջացման նախափուլը խիստ անբավարար է ուսումնասիրված (տե՛ս Մովսիսյան Ա.Ե., Վանի քագավորության (Բիայնիլի, Ուրարտու, Արարատ) մեհենագրությունը, Ե., 1998, էջ 51-54, 74 և հղված գրականությունը):
3. Տե՛ս Ա.Ե.Մովսիսյան, Հայաստանի գծային գիրը, Սերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XVIII, Ե., 1999, էջ 202-210 (և հղված գրականությունը):
4. Laroche E., Les Hieroglyphes Hittites, Paris, 1960; Дунаевская И.М., Язык хеттских иероглифов, М., 1969; Косян А.В., Лувийские царства Малой Азии и прилегающих областей, Ер., 1994, с. 8-15.
5. Համակարգի մասին հանգամանորեն տե՛ս Մովսիսյան Ա.Ե., Վանի քագավորության (Բիայնիլի, Ուրարտու, Արարատ) մեհենագրությունը, Ե., 1998:
6. Меликишвили Г.А., Урартские клинообразные надписи, М., 1960, с. 117-118, 125-131, 323-327; Арутюнян Н.В., Корпус урартских клинообразных надписей, Ер., 2001, с. ....
7. König F.W., Handbuch der chaldischen Inschriften, I-II, Graz, 1955-1957; Меликишвили Г.А., Урартские клинообразные надписи, М., 1960; Арутюнян Н.В., Корпус урартских клинообразных надписей, Ер., 2001.

8. Նախաքրիստոնեական Հայաստանի հումարեն արձանագրությունների մասին տե՛ս Тревер К.В., Очерки по истории культуры древней Армении (IIв. до н.э. — IVв. н.э.), М.-Л., 1953, с. 104-161, 174-211, 224-261, 271-288; Луний Б., Археологические находки 1935-1936 гг. в окрестностях станиц Тульской и Даховской близ Майкопа, ВДИ, 1939, N 3, с. 220-223; Гоян Г.И., 2000 лет армянского театра, т. I, Театр древней Армении, М., 1952, с. 377-388; Lipinski E., Studies in aramaic inscriptions and onomastics, Leuven, 1975, p. 197-208; Ростовцев М.И., Апаранская надпись царя Тиридата, (Анйская серия, N 6), СПб., 1911; Տաշեան Հ.Յ., Արամբերնի գործածությունը արամեական պետության մեջ, «Հանդես Ամսորեայ», 1933, 3-6 (մարտ-յունիս), էջ 211; Ժեբելով Ա.Ա., Հումարեն դարձանական արձանագրություն գտնված Վաղարշապատում, տես Քալանթար Ա., Հին Վաղարշապատի պեղումները, Յեր., 1935, Հավելված I, էջ 75-83 (հայերեն և ռուսերեն), Հ.Ա.Մանանդյան, Գառնիի հումարեն արձանագրությունը և Գառնիի հերանոսական տաճարի կառուցման ժամանակը, Եր., 1946; Աբրահամյան Ա.Ա., Գառնիի հումարեն արձանագրությունը, «Էջմիածին», 1947, մարտ-ապրիլ, էջ 61-72; Тревер К.В., Надпись о построении армянской крепости Гарни, Л., 1949; Манандян Я.А., Новые заметки о греческой надписи и языческом храме Гарни, «Տեղեկագիր», 1951, N 4, էջ 9-35; Аракелян Б.Н., Гарни, I, Результаты работ археологической экспедиции Института истории АН Арм. ССР 1949-1950 гг., Ер., 1951, с. 59-68; Մարգարյան Գ.Ն., Գառնիի հումարեն արձանագրության շուրջը, «Տեղեկագիր», 1956, N 3, էջ 45-56; Բարթիկյան Հ.Ս., Գառնիի հումարեն արձանագրությունը և Մովսես Խորենացին, ՊՐՀ, 1965, N 3, էջ 229-234; Կրկյաշարյան Ս.Գ., Նվա մի անգամ Գառնիի հումարեն արձանագրության մասին, ՊՐՀ, 1965, N 3, էջ 234-238; նույնի՝ Գառնիի և Ապարանի հումարեն արձանագրությունները, ՀԺՊՔ, էջ 359-363, և այլն:

9. Այդ արձանագրությունների հրապարակումները տե՛ս Винников И.Н., Об одной арамейской печати в собраниях Государственного Эрмитажа в Ленинграде, Краткие сообщения Института народов Азии, 86, История и филология Ближнего Востока, Семитология, М., 1965, с. 18-19, рис. 1-2; Lipinski E., Studies in aramaic inscriptions and onomastics, Leuven, 1975, pp. 197-208; Борисов А.Я., Надписи Артаксия (Арташеса), царя Армении, ВДИ, 1946, N 2, стр. 97-107; Тревер К.В., Очерки по истории культуры древней Армении (IIв. до н.э. — IVв. н.э.), с. 162-173; Дьяконов И.М., Старкова К.Б., Надписи Артаксия (Арташеса), царя Армении, ВДИ, 1955, N 2, стр. 161-174; Тирацян Г.А., Новонайденная надпись Арташеса I, царя Армении, ВДИ, 1959, N 1, стр. 88-90; Dupont-Sommer A., Les inscriptions arameennes trouvees pres du lac Sevan (Armenie), "Syria", XXV, 1-2, 1946-1948, p. 53-66; Perikhanian A., Les inscriptions du roi Artashes (A propos d'une recente trouvaille epigraphique en Armenie), "Revue des Etudes Armeniennes", 1971, vol. VIII, p. 169-174, pl. III-IV; Լալայան Յեր., Դարձանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Յեր., 1931, էջ 97; Բարխուդարյան Ս., Յերկու արամեատառ արձանագրություն, «Նյութեր Հին Հայաստանի մշակույթի պատմության», ՀԽՍՀ Կուլտուրայի պատմության

- ինստիտուտի աշխատություններ, հ. I, Յեր., 1935, էջ 205-214; Պալազատ Ա., Ուղի-աղվանական մի արձանագրություն, ՀԽՍՀ Կուլտուրայի պատմության ինստիտուտի աշխատություններ, հ. I, Յեր., 1935, էջ 215-219; Տիրացյան Գ., Արտաշես Ա-ի արամեաստառ նորագյուտ արձանագրությունը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1957, N 10, էջ 105-109; Периханян А.Г., Арамейская надпись из Гарни, ՊԲՀ, 1964, N 3, էջ 123-137; Периханян А.Г., Арамейская надпись из Зангезура, ՊԲՀ, 1965, N 4, էջ 108-128; Perikhanian A., Une inscription arameenne du roi Artases trouvee a Zanguezour (Siwnik), "Revue des Etudes Armeniennes", 1966, vol. III, p. 17-29; Perikhanian A., Les inscriptions du roi Artaches (A propos d'une recente trouvaille epigraphique en Armenie), "Revue des Etudes Armeniennes", 1971, vol. VIII, p. 174; Аракелян Б.Н., Арташат, I, Основные результаты раскопок 1970-1977 гг., Ереван, 1982, с. 31, табл. XLI; Perikhanian A., Inscription arameenne gravee sur une coupe d'argent trouvee a Sisian (Armenie), "Revue des Etudes Armeniennes", 1971, vol. VIII, p. 5-11, pl. I-II; Տիրացյան Գ., Արտաշես I-ի ևս մեկ նորագյուտ արամեական արձանագրություն, ՊԲՀ, 1977, N 4, էջ 254-259; Хуршудян Э., Монета Митридата царя Тоспа, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XVII, Եր., 1998, էջ 167-174, և այլն:
10. Пиотровский Б.Б., Древнеегипетские предметы, найденные на территории Советского Союза, "Советская археология", 1958, N 1, с. 20-22.
11. Տե՛ս օրինակ Խանзаян Э.В., Саркисян Г.Х., Дьяконов И.М., Вавилонская гиря XVI в. до н. э. С клинописной надписью из раскопок Мецамора, "Древний Восток", 4, Ереван, 1983, с. 113-122.
12. Тревер К.В., Очерки по истории культуры древней Армении (II в. до н.э. — IV в. н.э.), с. 212-224, 262-270; Առաքելյան Բ. ....
13. Մովսիսյան Ա.Ե., Նախամաշտոցյան Հայաստանի գրերն ու դպրությունը որպես ոսկեդարյան գրականության ստեղծման նախապայման, «Ոսկեդար» (տարեգիրք, հրատ. ընթացքում):

ՀԱՅ-ԲՈՐՇԱՆԵՐԻ ԹՎԱԶԱՆԱԿԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ  
ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ՝ ՊԱՏՄԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՈՎ

Բազմադարյա իր պատմության ընթացքում՝ հաճախ զրկված լինելով պետականությունից և մշակութային կյանքի համար անհրաժեշտ տարրական պայմաններից, հայ ժողովուրդը ոչ միայն այնքան տուկում է գտնվել դիմակայելու ուժացման մշտնջենական փտանգին, այլ նաև կարողացել է խաղաղ ճանապարհով իր մեջ տարալուծել բազմաթիվ այլթեքիկ համերայքների: Ահա սրանցից մեկն էլ մոտավորապես 10-րդ դարում Հնդկական թերակղզու հյուսիս-արևմտյան շրջաններից դուրս եկած և 11-12-րդ դարերում Պատմական Հայաստանի տարածքում հայտնված «թափառական» հուրջորջումը կրող հանրահայտ ժողովրդի՝ գնչուների, մի մասն էլ<sup>1</sup>, որը և ծնունդ տվեց *բոշա*, *հայ-բոշա* կամ *մաղագործ հայ* անունով հայտնի՝ այժմ արդեն էթնիկ ինքնության բոլոր չափանիշերով հայ ժողովրդի անբախտելի հատվածներից մեկին<sup>2</sup>: Այն, որ մեզ կայիս գնչուների արևելքից դեպի արևմուտք գաղթի ուղին անցել է Պատմական Հայաստանի տարածքով վկայում են մոտ 50-ի հասնող հայերեն փոխառությունները *ռոմանիում*՝ արևմտյան գնչուների լեզվում:

Սեփական գաղտնաեղվով՝ *բոշայերենով* կամ ինչպես իրենք են այն կոչում *լոմավոնեով*, հայ-բոշաները իրենց անվանում են *lom* կամ *lomav* (հզ.՝ *lomavtik*՝, *lomavner*)՝ մի անոն, որը արևմտյան գնչուների *rom* (հզ.՝ *roma*) և ասիական գնչուների *dom* (հզ.՝ *doman*) ինքնանվանումների հետ միասին սերում է սանսկրիտյան *aomba* - «երաժիշտների և երգիչների ցածր կաստայի ներկայացուցիչ» եզրից: Հայերենում համատարած կերպով նրանց տրվող *բոշա* անվան ամենավաղ զրավոր վկայությունը, ինչքան մեզ հայնի է, հանդիպում է 1699թ. ավարտին հասցված «*Ջաքարեայ Մարկառազի Պատմագրություն*» երկում: Հեղինակը՝ Հովհանավանքի սարկավագ Ջաքարիա Բանաբեռցին, «Պատմագրության» «*Լասն Մանկանցն Ժողովելոյ*» վերնագիրը կրող ԺԱ [31-րդ] գլխում, Հավուց-Թառի վարդապետ Մարկոս Ջուրայեցու խոսքերից մեջ է բերում մի պատմություն, ըստ որի, իբր, Շահ Արբաթը, ցանկանալով պարզել, թե որ լեզվով է խոսել Աղամ նախահայրը, հրամայում է Սպահանի շրջանի բոլոր ազգերից հավաքել ծծկեր մանուկներ և նրանց պահել մեկուսացված վիճակում՝ տեսնելու համար, թե սրանք որ լեզվով կսկսեն խոսել: Ահա այստեղ էլ՝ քրիստոնյա ազգերի շարքում, հիշատակվում է *բոշա* անունը. «*Եւ ժողովեալ մանկունս 'ի Ի [20] ազգաց, որք գտան յԱսպահան. որք են 'ի քրիստոնեից Է [7] ազգ. և յայլ ազգաց ԺԴ [13]: Նախ 'ի քրիստոնեիցն' այտքիկ են. Հայ, Յոյն, Լատին, Ասորի, Վիր, Աղուան, Բոշայ*» (Բանաբեռցի, 1870, էջ 56): Ընդամենը մի քանի տասնամյակ անց Արախամ Երևանցին իր «Պատմություն Պատերազմացն» երկի «Թէ որպիսի մարտիս պատերազմի առին օսմանցիք գերևան» խորագրով Բ գլխում, պատմելով Օսմանյան զորքերին 1924թ. երևանցիների ցույց տված դիմադրության մասին, հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում հայ-բոշաների և, մասնավորապես, Երևանում նրանց թվաքանակի և տեղաբաշխ-



ման մասին: «Ժ» քաղաքի անդ ի տեղին, որ Կոնդի քաղ անվանիր, Էին յրիստոնեայք փոշայք, Դ՛ [100] ասն, մեծաստունք և բաշասիրտք, վարժք զհնու պատանդագին» (Նրևանցի, 1938, էջ 16): Գումարված խորհրդակցության ընթացքում հայ-բոշաների առաջնորդներից մեկը՝ Դազարտ Բաբուրեանը, դիմելով ինքնավարապետության կազմակերպիչներից Գրիգոր վարդապետին, հայտարարում է. «Վարդապետ, աստատիկ ևս գերկու հարիսր քաշամարտիկ երիտասարդս ունին, որոց ամենբեւանն ունին զգլնս և վարժք են սրոյ և հրացանց արծակեղոց» (անդ.): Ուշագրավ է, որ Նրևանցին զործածում է *փոշայ* ձևը, որն անշուշտ արդյունք է արևմտահայ արտասանության<sup>3</sup>: Մինուլյն ժամանակ նույն գլխի երկու այլ տեղերում հանդիպում ենք *բոշայ* տարբերակին, այսպես՝ «Վզդ եղև բոշայիցն, որք յայլ քաղս կային, եկին հասին անդ երեք հարիսր մանգամայն և մարտ եղլ սրով և թվանկաւ, յաղբեցին թշնամեաց խնամօրն Աստուծոյ...» և «Յայնմ նուագի չորեք հարիսր սպառազենք ի հայոց անաի և քառասուն բոշայք եղեն խոցք և անկան ի մահիճս, այլ ոչ մեռան» (անդ., էջ 18-19):

Որքան մեզ հայտնի է լեզվաբաններին ցարդ չի հաջողվել պարզել *բոշա* բառի ծագումը: Մեր կարծիքով, սակայն, բառը ավելի լին է քան 17-րդ դարում սրա առաջին գրավոր վկայությունը և հավանաբար պետք է դասվի բնածայնական կամ հնչաիմաստային (իդիոֆունիկ) ծագման անունների շարքին, ինչպես օրինակ՝ *գնշու*. *զազա* և այլն<sup>4</sup>: Այն արևմտահայ արտասանությամբ՝ *բոշա* ձևով, փոխառվել է նաև քուրքերենի անատոլիական բարբառներում և մինչև օրս էլ գործածական է ներկայիս Թուրքիայի տարածքում ապրող՝ 1915թ. ցեղասպանությունից հետո մահմեդականացած, բայց դեռևս հայկական ինքնագիտակցությամբ հայ-բոշաների առնչությամբ: Հայ-բոշաների համար որպես անվանում սակավ դեպքերում կիրառվում էին/են *մաղագործ*, *հայ մաղագործ*, *մաղագործ հայ* եզրերը, որոնք, անշուշտ, արդյունք են վերջիններիս մաղագործության արհեստով և ընդհանրապես հյուսածո իրերի (կողով, գամբյուղ, սալա և այլն) արատադրությամբ զրգովելու: Հայ-բոշաները հաճախ գերադասում են ոչ բոշային ներկայանալ հենց այս անունով:

**Տեղաբաշխումը և թվաբանակը:** Հայ-բոշաները ներկայումս բնակվում են Հայաստանում, Վրաստանում և Թուրքիայում: Նրանց թվաբանակի մասին ճշգրիտ վիճակագրական տվյալներ չկան<sup>5</sup>:

Հայաստանում հայ-բոշաները տեղաբաշխված են.

Երևան - Բանարեռի Բոշի Թաղ կամ Ժամի (Մուրք Հակոբ եկեղեցի) Դուռ կոչվող հատվածում՝ մոտ 140 ընտանիք, Մարի Թաղի Բոշի Մայրա կամ Բոշի Թաղ ամվանվող մասում՝ մոտ 70 ընտանիք, Նոր Նորքի զանգվածներում՝ մոտ 12 ընտանիք, Ընդգավիթի Բոշի Մայրա քաղամասում՝ մոտ 8 ընտանիք, Մայրաշում՝ 5 ընտանիք, Նոր Ավանում՝ 3 ընտանիք: Հայ-բոշաների առանձին ընտանիքներ կան նաև Երևանի այլ շրջաններում՝ Լենինգրադյան պողոտայում, Չարբախում և այլուր:

Այժմ երևանբնակ դարձած հայ-բոշաների գերակշիռ մասը ներկայիս Հայաստանի Հանրապետություն է ներգաղթել 1915թ. հետո Արևմտյան Հայաստանից՝ Կարինից (Էրզրում), Բասենի գյուղերից, Կարսի մարզից

և Սեբաստիայի նահանգից՝ հաստատվելով Երևանում 1950-ականներից հետո միայն:

Երևանում մինչև 1960-ական թթ. հայ-քոշաներ են ապրել նաև ներկայիս *Պոչկինի տարալսնցում* այժմ Երիտասարդության պալատին հարող քաղամաստում, որը կոչվում էր *Բոշի Թաղ*: Այստեղի բնակիչները տեղափոխվել են *Նորքի զանգվածների* նորակառույցներ (Մինասյան, 1995, էջ 5): 1920-40-ականներին այսօրվա քաղաքապետարանի շենքի հետնամասում՝ նախկին *Յախի Մեղան* կոչվող տարածքում ևս ապրել են հայ-քոշաներ, որոնք տարածքի շինարարական իրացման հետևանքով սփռվել են Երևանի տարբեր շրջաններում (անդ.)<sup>6</sup>:

*Գյումրի* - *Բոշի Մայլա* կոչվող քաղամաստում՝ մոտ 15 ընտանիք: Մոտավորապես 10 ընտանիքներ էլ ապրում են Գյումրիի տարբեր մասերում: Սյանք բոլորն էլ Ներգաղթել են 1829թ., որոշ մասը՝ նաև 1915թ.-ից հետո, հիմնականում Կարինից և Բասենի գյուղերից, մասամբ՝ Կարսից:

*Վանաձոր* - *Բոշի Թաղ* հատվածում՝ 4 ընտանիք, որոնք 1929թ. Կարինից ներգաղթածներ են:

*Արտաշատ* - 6 ընտանիք: Այստեղ են հաստատվել 1960-ական թթ. Կարինից և Բասենի գյուղերից 1915թ. ներգաղթածներ են:

*Արովան* - մոտ 4 ընտանիք: Հաստավել են 1970-ական թվականներին:

*Նոր Խարբերդ* - մոտ 20 ընտանիք: Ներգաղթել են Հունաստանի Սալոնիկ քաղաքից 1948-ին: Սալոնիկում ապաստանել էին 1915թ. փախչելով Ստամբուլից:

*Կոտայքի* մարզ - *Ջրաբեր* գյուղում՝ 3 ընտանիք: Այն նախկինում կոչվում էր *Բոշի գյուղ*: 1915թ. Էրզրումից և Կարսից ներգաղթածներ են: Քանաքեռի հայ-քոշաների որոշ մասը ևս մինչև այժմյան բնակության վայրում հաստատվելը ապրել է այս գյուղում:

Վրաստանում հայ-քոշաները բնակվում են հիմնականում հայաշատ շրջաններում.

*Ախալքալաք* - *Բոշի Մայլա* քաղամաստում՝ մոտ 35 ընտանիք: Առանձին ընտանիքներ բնակվում են նաև Ախալքալաքի շրջանի գյուղերում:

*Ախալցխա* - հիմնականում *Բոշի մայլա* կամ *Վերի Պլան* կոչվող քաղամաստում՝ մոտ 18 ընտանիք:

*Շակայի* շրջան - *Դամալա* գյուղում՝ մոտ 25 ընտանիք, *Ղրզղ-Քիլիսա* գյուղում՝ 6 ընտանիք: Առանձին ընտանիքներ բնակվում են նաև բուն Շակա ավանում:

*Շուլավերի* շրջան - *Շահումյան* գյուղում՝ 5 ընտանիք: Ներգաղթել են 1924թ. Ստամբուլից:

Հայ-քոշաների որոշ ընտանիքներ կան նաև *Թբիլիսիում*, *Գորիում* և *Աջարիայում*, որտեղ նրանք տեղափոխվել են հիմնականում Ախալքալաքից և Ախալցխայից վերջին տասնամյակների ընթացքում:

Վրաստանաբնակ հայ-քոշաների գերակշիռ մասը այս տարածքներում հայտնվել է 1929թ.՝ ներգաղթելով Կարինից և Բասենի դաշտի գյուղերից:

Թուրքիայում հայ-քոշաներ են բնակվում.

*Արդվինի (Արտվինի)* գավառ - 6 գյուղերում՝ 80 ընտանիք, 445 հոգի:

Արդամոճի (Արտամոճ) գավառ - 15 գյուղերում՝ 93 ընտանիք, 938 հոգի:

Բորչխայի (Բորչքայի) գավառ - 8 գյուղերում՝ 27 ընտանիք, 258 հոգի:

Մավասաթի գավառ - 21 գյուղերում՝ 74 ընտանիք, 785 հոգի:

Նշված բոլոր վայրերում հայ-բոշաների ընդհանուր թիվը կազմում է 2 487 անձ (Bennighaus, 1991, p. 49):

1968-74 թթ. ընթացքում թուրքական իշխանությունների կազմած գաղտնի զեկույցում Արդվիմի շրջանում հաշվվել են 1 879 *փոշա* (իմա՝ հայ-բոշա) (անդ.):

Ըստ որոշ տվյալների ցայսօր հայ-բոշաներ են բնակվում նաև *Կաս-տամոնուի, Կարսի, Ադրիսի, Էրզրումի, Էրզինջանի (Երզնկա), Սվազի (Սե-քաստիայի), Թուրքի (Եփրոկիա) և Ռիզեի* շրջաններում: Ուշագրավ է, որ Ստամբուլի հայերը բոշա են կոչում Կաստամոնուի բոլոր հայ բնակիչներին անխտիր:

Հավանական է համարվում, որ Թուրքիայում հայ-բոշաների ընդհա-նուր թիվը կարող է հասնել մոտ 20 000 մարդու (Bennighaus 1991, p. 49):

Անցյալում հայ-բոշաների տեղաբաշխման և թվաքանակի վերաբեր-յալ գրականության մեջ առկա են ոչ միանշանակ՝ հաճախ իրարամերժ տվյալներ, որոնք, նաև աղյուսակների տեսքով, մենք կներկայացնենք ստորև: Ինչպես արդեն վերևում ասվեց, հայ-բոշաների առաջին վիճակա-գրությունը բերում է Աբրահամ Երևանցին. 1724թ. 100 տուն Երևանի Կոնդ թաղամասում, որոնք, փաստորեն կարող էին դուրս բերել 200-300 մարտիկ (Երևանցի, 1938, էջ 16, 18-19): Ըստ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեան-ցի, Երևանի Կոնդ (Թափաբաշ) թաղի հայ-բոշաները, լինելով Արևմտյան Հայաստանից ներգաղթածներ, 1700թ. այստեղ էին տեղափոխվել Հրազդան գետի աջ ափին գտնվող երևանաձոր՝ Նորագյուղից (Սմբատեանց, 1895, էջ 8): Նույն ինդիկնակի վկայությամբ, դեռևս 19-րդ դարավերջին կանգուն էին Նորագյուղի նրանց եկեղեցու պատերն ու բեմը (անդ.):

Ռուսական Կայսրությանը միացված Երևանի մարզի հայ բոշաների մասին սեփական հաշվարկների համաձայն տեղեկացնում է Шопен-ը.

*Աղյուսակ 1. 1829-32թթ., ըստ Шопен-ի (1852, с. 539)*

| Տեղաբաշխումը      | թիվը                               | անվանումը                   |
|-------------------|------------------------------------|-----------------------------|
| Армянская Область | 46 семейств<br>101 муж.<br>94 жен. | боша армянские              |
| Армянская Область | 4 семейств<br>9 муж.<br>8 жен.     | боша татарские <sup>7</sup> |

Paspati-ն գնչուներին նվիրված իր հայտնի երկում ամբողջությամբ մեջ է բերում բողոքական քահանա А. Н. Michael-ի նամակը, որտեղ տվյալներ կան Թուրքիի (Եփրոկիայի) հայ-բոշաների թվաքանակի մասին.

| Տեղաբաշխումը        | թիվը                                                   | անվանումը  |
|---------------------|--------------------------------------------------------|------------|
| Tokat               | 170 persons<br>(30 households)<br>90 male<br>80 female | Posha, Lom |
| Morshovan (Մարզվան) | 150 families                                           | Posha, Lom |
| Bozook<br>(Բոզոկ)   | most numerous                                          | Posha, Lom |

Փաթկանով-ը՝ իմնվելով Ե. Գ. Вейденбаум-ի տրամադրած ձեռագրի, Մ. Ս. Мелисов-ի հաղորդած բանավոր տեղեկությունների և Ռուսական Հայաստանի պաշտոնական վիճակագրության վրա, ներկայացնում է հետևյալ տվյալները.

Աղյուսակ 3. 1832- 87 թթ., ըստ Փաթկանով-ի (1887, сс. 69-71)

| Տեղաբաշխումը                                                            | թիվը            | անվանումը                       |
|-------------------------------------------------------------------------|-----------------|---------------------------------|
| Ахалцыхский уезд,<br>Апхурский участок,<br>селения Мугареш и<br>Зигилия | 54 душ          | цыгане, боша                    |
| Тифлисская губерния,<br>Палка                                           | ---             | цыгане говорящие по<br>армянски |
| Елизаветпольская<br>губерния, Карабаг                                   | Небольшое число | цыгане (боша)                   |
| Эриванская губерния                                                     | Небольшое число | боша                            |
| Армянский округ                                                         | 100 дым         | цыгане, поша                    |

Արևմտյան Հայաստանում, մասնավորապես, Սեբաստիայի վիլայեթում հայ-քուշաների տեղաբաշխման և թվաքանակի մասին առաջնակարգ նշանակության տեղեկություններ է տրամադրում Գարեգին արքեպիսկոպոս Սրվանդատյանը.

| Տեղաբաշխումը                                      | թիվը (անձ) | անվանումը       |
|---------------------------------------------------|------------|-----------------|
| Շապին Գարահիսարի մյութասարիֆություն, Ծիպերի գյուղ | 250        | մաղագործ        |
| Սամսոնի մյութասարիֆություն, Պաֆրա քաղաք           | 290        | մաղագործ հայք   |
| Ամասիո մյութասարիֆություն, Մարզվան քաղաք          | 481        | մաղագործ (քոշա) |
| Ամասիո մյութասարիֆություն, Վեզիր-Ջուվուռ ավան     | 280        | մաղագործք       |
| Ամասիո մյութասարիֆություն, Զիլե քաղաք             | 93         | մաղագործք       |

Նույն աղբյուրը նշում է, թե «Վեզիր Զյուփյուրեն մինչև Գասթամունի կը տարածվին Հայ Մաղագործաց բնակությունները, և իրենց կեդրոն կը համարվի Պոլսյատ: Ասոնք զարմանե մինչև ձմեռն կը սփռվին գեղեր և քաղաքները մինչև Սևաստ (Սեբաստիա). միայն ձմեռը իրենց խրճիթները կը քաշվին: ... Պոլսյատ Մաղագործ Հայոց թիվը 6-7000 կը հաշվեին, ի բաց առյալ ամոնք որ ալ և ալ քաղաքաց և գյուղից մեջ բնակություն հաստատած էին» (էջ 200):

Հայ-քոշաների ուսումնասիրության ռաիվիրաներից Գրիգոր Վանազեանը, հենվելով սեփական դիտարկումների վրա, ներկայացնում է տվյալներ Ռուսական Կայսրության կովկասյան տիրույթներից.

Աղյուսակ 5. մինչև 1892թ., ըստ Վանգեանի (1892, էջ 1047-48)

| Տեղաբաշխումը                     | թիվը (տուն) | անվանումը |
|----------------------------------|-------------|-----------|
| Ախալքալաք                        | 25          | հայ քոշա  |
| Ախալցխա                          | 16          | հայ քոշա  |
| Ալեքսանդրապոլ                    | 40          | հայ քոշա  |
| Դարս                             | 25          | հայ քոշա  |
| Ախալքալաքի գավառ, Եխտեյա գյուղ   | 8           | հայ քոշա  |
| Ծալկայի վիճակ, Դամալա գյուղ      | 20          | հայ քոշա  |
| Ծալկայի վիճակ, Դըզլ-քիլիսե գյուղ | 4           | հայ քոշա  |

Համաձայն նույն հեղինակի. «Ավելի մեծ բովոյ և հին անփոփոխ աստանդակաճ կյանքով ապրող բոշաներ կան վերջին պատերազմով [1878-79թթ. ռուս-թուրքական պատերազմը] նվաճած երկիրներում, առավելապես Աջարիայի Փանեկ և Փարտուզ կոչված գավառներում: Այս վերջինների բիվր գեթ մոտավորապես չեմ կարող դնել ...: Նոցա [հայ-բոշաների] մեծագույն մասը ապրում է Տաճկա-Հայաստանում, գլխավորապես Սինոպի և Թոխաթի (Եփրոկիա) կողմերը» (Վանցեան, 1892, էջ 1047):

Աղյուսակ 6. մինչև 1894թ., ըստ Վանցեանի (1894, էջ 1074)

| Տեղաբաշխումը                            | բիվր (տուն) | անվանումը        |
|-----------------------------------------|-------------|------------------|
| Ալեքսանդրապոլ և գավառ                   | 55          | հայ-բոշա         |
| Ալեքսանդրապոլի գավառ, Բոտ-Ախալուր գյուղ | 2           | հայ-կաթոլիկ-բոշա |
| Կարս քաղաք                              | 20          | հայ-բոշա         |
| Կարսի գավառ, Չալիմ գյուղ                | 20          | հայ-բոշա         |
| Ախալքալաք և գավառ                       | 31          | հայ-բոշա         |
| Ճալկա                                   | 20          | հայ-բոշա         |
| Ախալցխա                                 | 16          | հայ-բոշա         |
| Օթի և գավառ                             | 17          | հայ-բոշա         |

Միևնույն աղբյուրը տեղեկացնում է, որ «Բոշաներ կան նաև Կարնում և իր շրջակայքում, դեպի Տրապիզոն տանող ճանապարհի ցամ ու ցրիվ» (Վանցեան, 1894, էջ 1075): Գնահատելով հայ-բոշաների ընդհանուր բիվր նրանց բնակության բոլոր վայրերում, Վանցեանը գրում է. «Համենայն դեպս բոշաների բիվմ ամբողջովին է հավանական է որ 15 000 -ից անց չլինի» (անդ., էջ 1076):

Ակն քաղաքի հայ-բոշաների մասին սեփական դիտարկումներն է ներկայացնում Շանիկեանը.

Աղյուսակ 7. մինչև 1895թ., ըստ Շանիկեանի (1895, էջ 60)

| Տեղաբաշխումը                       | բիվր (տուն) | անվանումը           |
|------------------------------------|-------------|---------------------|
| Ակն քաղաք, Վերին Թաղ՝ Խնկաձորի մոտ | 10-15       | հայ բոշա, մաղազործք |

Նույն հեղինակի տվյալներով Ակնի հայ-բոշաները այստեղ են հաստատվել Սեբաստիայից (Սևաստ) և Տյուրիկից: Ակնի հայ-բոշաներից Շանիկեանը տեղեկացել է, որ վերջիններս բնակվում են նաև Մալաթիա և Կամախ քաղաքներում (անդ., էջ 61, 64):

Ակն քաղաքի հայ-բոշաների մասին Քեչեանը գրում է. «... իրենց կարգին հիմնած են հողատիրոջ միահարկ տներով քաղ մը - Բոշա-

ներու քաղ անվամբ - ակնցիեն անջատ. քաղաքին բարձունքը Կասպանա լեռան առջև, Խնկաձորին ակունքի աջ թևին վրա» (Քէչեան, 1943, էջ 54):

Երվանդ Լալայանը Զավախքին նվիրված իր ուսումնասիրության մեջ անդրադարձնում է նաև Ախալքալաքի հայ-բոշաճներին.

*Աղյուսակ 8. մինչև 1896թ., ըստ Լալայանի (1983, էջ 87)*

| Տեղաբաշխումը    | քիվը             | անվանումը |
|-----------------|------------------|-----------|
| Ախալքալաք քաղաք | 17 տուն՝ 40 հոգի | հայ բոշա  |

Վրթանես Փափագեանցը օգտվելով, վերևում մեր մեջ բերած աղբյուրներից և իր կալմից չիժատակվող հեղինակներից, տյումադրում է հետևյալ տվյալները<sup>8</sup>.

*Աղյուսակ 9. մինչև 1898թ. ըստ Փափագեանցի (1899, էջ 34-35)*

| Տեղաբաշխումը                                                                               | քիվը (տուն)         | անվանումը |
|--------------------------------------------------------------------------------------------|---------------------|-----------|
| Բոյբաթ                                                                                     | ավելի քան 6000 հոգի | հայ-բոշա  |
| Մարգվան                                                                                    | 481                 | բոշա      |
| Մեգիր-Քյոփրու                                                                              | 280                 | բոշա      |
| Զիլե                                                                                       | 93                  | բոշա      |
| Բաֆրա                                                                                      | 290                 | բոշա      |
| Էրզրումի վիլայեթ, Էրզրում քաղաք և Բասենի գյուղեր (Ալջաքրուք, Թորթան, Հասան-դալե, Հեթթև ևն) | 300                 |           |
| Կարս                                                                                       | 20                  | բոշա      |
| Կարսի Զայիմ գյուղ (բոշա-Զայիմի)                                                            | 20                  | բոշա      |
| Ախալքալաք                                                                                  | 31                  | բոշա      |
| Ախալցխա                                                                                    | 16                  | բոշա      |
| Օլթի և շրջակայք                                                                            | 17                  | բոշա      |
| Բորչալուի գավառ, Շալկա                                                                     | 20                  | բոշա      |
| Լոռի                                                                                       | 5                   |           |

Նույն հեղինակը նշում է. «Հայաստանի գրեթե ամեն կողմերում կարելի է հանդիպել հայ-բոշաճների: Նրանք ցրված, բնակություններ են հաստատել կամ ավելի ճիշտն ասել, միջավայր են ընտրել այն նահանգները, որոնց մեջ հայ ազգաբնակչությունը ավելի շատ՝ բացառությամբ կազմում է միայն Վասպուրականի նահանգը, ուր շատ քիչ

կան նրանցից: Մեծ մասամբ նրանք ապրում են Մեքսատիայի (Սվազ) մահանգում, ... : Կան նաև բոշաներ Ալկնում, Մարզվանում և Փոքր-Ասիայի զանազան կողմերում» (Փափագեանց, 1899, էջ 34-35):

Հայ-բոշաների թվի վերաբերյալ միակ պաշտոնական վիճակագրությունը հրապարակվել է 1926թ. մարդահամարի նյութերում:

*Աղյուսակ 10. ըստ 1926թ. համամիութենական մարդահամարի*

| Տեղաբաշխումը                  | թիվը (հոգի)                 | անվանումը |
|-------------------------------|-----------------------------|-----------|
| Ընդամենը ՀԽՍՀ-ում             | 23<br>14 արական<br>9 իգական | բոշա      |
| Երևանից բացի քաղաքային վայրեր | 8<br>4 արական<br>4 իգական   | բոշա      |
| Գյուղական վայրեր              | 15<br>10 արական<br>5 իգական | բոշա      |

Ըստ մի շարք աղբյուրների ընդհուպ մինչև 19-րդ դարի կեսերը հայ-բոշաներ են եղել նաև Երևանում, Գանձակում, Շամախիում և Թիֆլիսում, ուրոնք հետագայում ամբողջովին տարրալուծվել են (Վանցեան, 1897, էջ 1398; 1892, էջ 1018, Փափագեանց, 1898, էջ 35): Թիֆլիսի ծովածած հայ-բոշաների մասին Վանցեանը գրում է. «...Թիֆլիզի հայացած բոշաները այսօր վաճառականությամբ են պարսպում, մեզա կոչում են «բոշի տղերք» (1897, էջ 1399):

Բացի այս, նախկինում հայ-բոշաներով բնակեցվածության մասին կարող են վկայել *բոշա* բաղկացուցիչը պարունակող հետևյալ պատմական տեղանունները (ՀՀՇՏԲ, 1986, էջ 729)։

*Բոշա* - ավերակ գյուղ Երևանի մահանգի Շարուր-Դարալագյազի գավառում, Շարուրի դաշտում, ճշգրիտ տեղադրությունը անորոշ է:

*Բոշա Ղշաղ* - գյուղ Հայկական մարզի Երևանի գավառի Շարուրի մահալում: Երբեմն հիշվում է նաև որպես լքված և ավերված բնակավայր:

*Բոշախի գյուղ* կամ *Բոշայի Կաղրան* - գյուղ Արևմտյան Հայաստանում, Խարբերդի մահանգի Ակնի շրջանում, Եփրատի ձախ կողմում:

*Բոշի Գյուղ* - գյուղակ Երևանի մահանգի Ալեքսանդրապոլի գավառում, Ախուրյան գետի ձախ կողմում: Հետագայում լքվել է:

*Ամփոփում:* Ստորև աղյուսակի տեսքով՝ ներկայացնում ենք հայ-բոշաների այժմյան տեղաբաշխման և բվաքանակի ընդհանուր պատկերը՝ Հայաստանի և Վրաստանի յուրաքանչյուր ընտանիքը միջին հաշվով համարելով 5 անձ, որն անշուշտ մեր հաշվարկին հաղորդում է չափազանց մոտավոր բնույթ: Բացի այս, նշված երկու երկրի համար մենք աղյուսակում զետեղել ենք *այլ վայրեր* տողը, որտեղ տեղադրել ենք 10-ական ընտանիք:



*Աղյուսակ 11. Հայ-բոշաների այժմյան տեղաբաշխումը և ընդհանուր թիվը*

| Տեղաբաշխումը                        | թիվը<br>(ընտանիք /<br>անձ) | մեկնաբանություն |
|-------------------------------------|----------------------------|-----------------|
| <b>Հայաստան</b>                     | <b>310 / 1 550</b>         | <b>մոտավոր</b>  |
| Երևան                               | 238 / 1190                 |                 |
| Գյումրի                             | 25 / 125                   |                 |
| Նոր Խարբերդ                         | 20 / 100                   |                 |
| Արտաշատ                             | 6 / 30                     |                 |
| Վանաձոր                             | 4 / 20                     |                 |
| Արովյան                             | 4 / 20                     |                 |
| Կոտայքի մարզ,<br>Ջրաբեր գյուղ       | 3 / 15                     |                 |
| <i>Այլ վայրեր</i>                   | <i>10 / 50</i>             |                 |
| <b>Վրաստան</b>                      | <b>99 / 495</b>            | <b>մոտավոր</b>  |
| Ախալքալաք                           | 35 / 175                   |                 |
| Ախալցխա                             | 18 / 90                    |                 |
| Ծալկայի շրջան,<br>Դամալա գյուղ      | 25 / 125                   |                 |
| Ղզրլ-Քելլխա գյուղ                   | 6 / 30                     |                 |
| Ախալցխա                             | 18 / 90                    |                 |
| Շուլավերի շրջան,<br>Շահումյան գյուղ | 5 / 25                     |                 |
| <i>Այլ վայրեր</i>                   | <i>10 / 50</i>             |                 |
| <b>Թուրքիա (հս.-արլ. շրջաններ)</b>  | <b>274 / 2 487</b>         | <b>ընդամենը</b> |
| Արտվինի գավառ,<br>6 գյուղ           | 80 / 445                   |                 |
| Արտանուշի գավառ,<br>15 գյուղ        | 93 / 938                   |                 |
| Բուրջբայի գավառ,<br>8 գյուղ         | 27 / 258                   |                 |
| Սափսատի գավառ,<br>21 գյուղ          | 74 / 785                   |                 |
| <b>Ընդհանուր</b>                    | <b>683 / 4 532</b>         | <b>մոտավոր</b>  |

Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ սլատմական կտրվածքով ոչ միայն սահմանափակվել է հայ-բոշաների տարածման աշխարհագրությունը, որը նախկինում ընդգրկում էր Արևմտյան Հայաստանի մեծ մասը՝ Խարբերդի, Սեբաստիայի, Էրզրումի, Տրապիզոնի վիլայեթները և Կարսի մարզը, բացառությամբ ավելի հարավ գտնվող Վանի և Բիթլիսի (Բաղեշի) վիլայեթների, այլև զգալի նվազել է վերջիններիս թիվը, որը արդյունք է մահ 1915թ. ցեղասպանության ընթացքում բազմահազար հայ-բոշաների նախնիների:

THE GEOGRAPHICAL DISTRIBUTION AND NUMBER OF THE  
ARMENIAN BOSHA FROM THE HISTORICAL PERSPECTIVE  
(Summary)

The article refers to the geographical distribution and number of the Armenian-Bosha – a people of Gypsy origins, who has nowadays lost perhaps all the ethnic criteria that can distinguish it as a minority distinct from the Armenians. The author, based on various sources and his own observations, has for the first time attempted to discuss the above issue from the historical perspective. The comparison clearly shows that one of the main reasons for the limitation of the geographical distribution and decrease of the Armenian-Boshas' number was the Genocide of the Armenians in the Ottoman Empire in 1915, during which thousands of Armenian-Boshas were massacred.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գնչուների գաղթի ժամանակաշրջանի, ալիքների և ուղիների վերաբերյալ առկա է մեծածավալ գրականություն, որի ամփոփ տեսությամբ ծանոթանալու համար տես Hancock, 1988:
2. Այս աշխատանքում մենք ամենուրեք գործածում ենք *հայ-բոշա* եզրը՝ տուրք տալով 19-րդ դարավերջի հայալեզու գիտական գրականության ավանդույթին (տես Փափագեանց, 1899; Վանցեան, 1892) և ցանկանալով շեշտել այս հանրային ներկայումս հայ ժողովրդի անքակտելի մաս հանդիսանալու հանգամանքը:
3. Փոշայ ձևի կիրառությունը արևելահայ պատմիչի կողմից անուղղակի վկայությունը կարող է հանդիսանալ այն փաստի, որ 1724թ. արդեն երևանաբնակ դարձած հայ-բոշաները, քերևա, այստեղ էին տեղափոխվել արևմտահայ բարբառների տարածման շրջաններից և Աբրահամ Շրևանցին հիշյալ տարբերակը կարող էր լսած լինել հենց նրանցից՝ արևմտահայ արտասանությամբ: Բացի այս, վերոհիշյալ գրությունը կարող է լինել նաև ձեռագիրը արտագրողի կողմից թույլ տրված վրիպակ:
4. Այս մասին մենք պատրաստել ենք մի առանձին հոդված, որը լույս կտեսնի մոտ ապագայում:
5. Խնդիրը բարդանում է նաև նրանով, որ այժմյան հայ-բոշաները անբողջությամբ հայացած են, ուստի և նրանց թվաքանակի մասին ճշգրիտ վիճակագրության կազմումը արդեն իսկ անհնարին գործ է: Հայաստանի և Վրաստանի կապակցությամբ ներկայացվող տվյալները արդյունք են լոկ մեր անձնական դիտարկումների:
6. Հետաքրքիր է, որ հայ-բոշաները մալթերտում էին ինչ-որ առումով մեկուսացած քնակատեղեր հաստատել հիմնականում բլուրների

լանջերին: Մասնավոր գրույցի ընթացքում այս հանգամանքի վրա մեր ուշադրությունը հրավիրեց Հարություն Մինասյանը:

7. Ըստ ամենայնի *слова татарские* անվան տակ պետք է հասկանալ այն գնչուներին, ովքեր ավելի հայտնի են *դարաչի* անունով, սակայն ի տարբերություն իրենց ազգակիցների, բնակվել են հայկական միջավայրում:
8. Փափագեանցը, օգտվելով Սրվանձոյանցից, Մարզվան, Վեզիր-Քյուրբու, Զիլե և Բաֆրա բնակավայրերում հայ-բոշաների թվի կապակցությամբ, սխալմամբ գործածում է *տուն* դասանիշը, միջոցն սկզբնադրություն հաշվարկը կատարված է *անձով*:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

- Երևանցի, Ա. 1938. Պատմություն Պատերազմացն 1721-1736թ. Երևան  
Լալայան, Ե. 1983. Երկեր, հտ. 1. Երևան  
ՀՀՇՏԲ 1986. Հայաստանի և Հարակից Շրջանների Տեղանունների  
Բառարան. Կազմ. Թ. Խ. Հակոբյան և այլք., հտ. 1. Երևան  
Ճանիկեան, Յ. 1895. Հնուրիներ Ակնայ. Թիֆլիս  
Մինասյան, Հ. 1995 Բոշաներ. *Նարեկ*, N 9(53), էջ 5  
Ոսկանյան, Վ. 1998-2001թթ. հայ-բոշաների ուսումնասիրության ընթացքում  
գրառած և ձայնագրած դաշտային նյութեր (անտիպ)  
Սմբատեանց, Մ. 1895. Տեղեկագիր Գեղարքունի ծովազալո գաւառի  
Սրվանձոյանց, Գ. 1982. Երկեր, հտ. 2. Երևան  
Վանցեան, Գ. 1892. Հայ բոշաներ. «*Մուրճ*», N 7-8, էջ 1047-1064; N 9, էջ  
1310-1321  
Վանցեան, Գ. 1894. Պատմական ակնարկ բոշաների անցեալից. *Մուրճ*, N 7-  
8, էջ 1066-1088  
Վանցեան, Գ. 1897. Հայեր Բոշաներից. «*Մուրճ*», N 10, էջ 1394-1403  
Փափագեանց, Վ. 1899. Հայ-բոշաներ (Ազգագրական ուսումնասիրություն).  
Արտատպած Ազգագրական Հանդեսից. Թիֆլիս  
Քանաքեռցի, Զ. 1870. Զաքարեայ Սարկավագի Պատմագրություն.  
Վաղարշապատ  
Քեչեան, Մ. 1943. Ալն և Ակնցին. Պուրբշ [Բուխարեստ]  
Патканов, К. 1887. Цыганы. Несколько слов о наречиях закавказских цыган:  
Боша и Карачи. СПб.  
Шопен, И. 1852. Исторический памятник состояния Армянской Области в  
эпоху ее присоединения к Российской Империи. СПб.  
Benninghaus, R. 1991. Les Tsiganes de la Turquie Orientale  
“*tudes Tsiganes*” 37(3): 47-60  
Hancock, I. 1988. The Development of Romani Linguistics. In M. A. Jazayeri &  
W. Winter (eds.). *Languages and Cultures. Studies in Honor of Edgar C.*  
*Polomé*: 183-223. Berlin - New York - Amsterdam  
Paspatis, A. 1870. tudes sur les Tchingiannos ou Bohmniens de. l'Empire  
Ottoman. Constantinople

# ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ

## ՐԱԲԱՅԱՆ ՆԱԽԸ

ՀԱՅ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ  
ԸՆԴԴԴԻՍԱԴԻՐ ՌԻՇԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ (1902)

Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի Փարիզի առաջին համաժողովը լուսարանվել է մի շարք աշխատություններում<sup>1</sup>: Սակայն սակավ ուշադրություն է հատկացվել հայ բնդաբական կուսակցությունների խաղացած դերին: Սույն հոդվածում, օգտագործելով ժամանակի հայ մամուլի նյութերը, կփորձենք ավելի համակողմանիորեն անդրադառնալ հիշյալ խնդրին:

Համաժողովը անց է կացվել 1902թ. փետրվարի 4-9-ը: Նրա նպատակն էր առանձին գործող երիտթուրքական խմբերը և Օսմանյան կայսրության ոչ բոլոր ժողովուրդների բաղաբական կազմակերպությունները միավորել արդույիսամիլյան ռեժիմի դեմ:

Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների շարունակվող և ուժ հավաքող ազգային-ազատագրական պայքարը երիտթուրքերին ստիպում էր հակազդեցության միջոցներ գտնել, որոնցից մեկն էլ երիտթուրքական կազմակերպությունների միավորումն էր ու մեկ միասնական կուսակցության ստեղծումը: Երիտթուրքերը մախ և առաջ ենթադրում էին կուսակցության շարքերում եղած լուրջ տարածայնությունների հաղթահարում<sup>2</sup>, ինչը հնարավորություն կտար ոչ միայն ուժեղացնելու պայքարը Աբդուլ Համիդի դեմ, այլ նաև լինելու ավելի հզոր, քան ոչ բոլոր ժողովուրդների կազմակերպությունները:

Երիտթուրքական բոլոր կազմակերպություններին միավորում էին Աբդուլ Համիդի բռնապետական ռեժիմի տապալման, 1876թ. սահմանադրության վերականգնման, պառլամենտի գումարման, երկրում քայքայող բռնությունների անցկացման, կայսրության ամբողջականության պահպանման հիմնահարցերը: Նրանց հիմնական տարածայնությունները ծավալվում էին կայսրության ապագա պետական կառուցվածքի, սուլթանի իրավունքների սահմանափակման, ազգային հարցերի, ինչպես նաև բոլոր նպատակներին հասնելու ուղիների ու մեթոդների ուղեգծի շուրջ: Մահմեդականների մի մասը հակված էին հեղափոխության և բռնի գործողությունների, իսկ մյուս մասը՝ Միհեդ Ռիզայի գլխավորությամբ, բացարձակապես դեմ էին դրան<sup>3</sup>: Տարածայնությունները հատկապես խորացան Թուրքիայի ներքին գործերին եվրոպական միջամտության առնչությամբ երիտթուրքերի երկու նշանավոր պարագլուխների՝ Միհեդ Ռիզայի և Մեհմեդ Սաբահեդդինի միջև:

19-րդ դարի 90-ական թթ. երիտթուրքերի շարժման կենտրոնը դարձավ Փարիզը: Թուրք ազատականների ծավալված ակտիվ գործունեության շնոր-



քում, որը իրավասու կլիներ պահպանել Օսմանյան կայսրության ինքնավար երկրների պետական միությունը<sup>9</sup>:

Հնչակյանները Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի ճնշված ժողովուրդների համագործակցության անհնարինությունը բացատրում էին ժողովուրդների աստիճանական-քաղաքական զարգացման տարբեր աստիճաններում գտնվելու փաստով և, հետևաբար, մաս մրանց տարբեր նպատակների գոյությամբ: Սակայն կայսրության ժողովուրդները ունեին ընդհանուր շահեր, որոնք ավելի ուժեղ էին արտահայտվում, քան մասնավոր շահերը<sup>10</sup>:

Հարկ է նշել, որ գաղափարական այս հիմնական տարբերությունից բացի (համերաշխ գործունեության անհնարինությունը), երիտթուրքական միասնական կուսակցություն, որպես այդպիսին, գոյություն չուներ, քանի որ դրանք բոլորն անհատներ էին, որոնք չունեին սերտ միություն, և «մրանց մեջ եղած կապը քաղաքական, հասարակական լինելուց աւելի, արևելքին յատուկ ընտանությունն է»<sup>11</sup>:

Հնչակյանների և երիտթուրքերի միջև բանակցությունների և կարծիքների փոխանակման արդյունքում, Հնչակյան կուսակցությունը եկավ այն համոզմունքին, որ ազգային հարցերում երիտթուրքերի և Աբդուլ Համիդի վարած քաղաքականության միջև ոչ մի էական տարբերություն չկա<sup>12</sup>: Արևմտահայության ազատագրության հարցը բարձրացնելով՝ Հնչակյան կուսակցությունը նպատակ չուներ Արևմտյան Հայաստանն անջատել Օսմանյան կայսրությունից և ստեղծել հայկական պետություն: Վերջինս նպատակ էր հետապնդում Թուրքիայի կազմում ինքնավարություն հաստատել, որը կթերևացներ հայության վիճակը և Թուրքիայում սոցիալիստական կարգեր կհաստատեր:

Այսպիսով, ընդհանուր համաձայնության և փոխզիջման բացակայության արդյունքում մինչև 1906թ. կասեցվեցին բոլոր տեսակի հարբերությունները հնչակյան կուսակցության պաշտոնական մարմինների, դեկավար անձանց և երիտթուրքերի զանազան հոսանքների, խմբակցությունների և նրանց պարագլուխների հետ<sup>13</sup>:

Ինչ վերաբերում է երիտթուրքերի և դաշնակցականների փոխհարաբերություններին, չնայած լուրջ տարաձայնություններին, Հայ Հեղափոխական Դաշնակցությունը իր համաձայնությունը տվեց մասնակցելու Փարիզի առաջին համաժողովին: Դեռևս 1895-1896թթ. դաշնակցականների և Ժնևում գործող երիտթուրքերի միջև կապեր էին հաստատվել: «Դրոշակի» խմբագրությունը դրականորեն արձագանքեց Սաբահեդդինի և Լուրճուլլահի, իֆչպես մաս Թումալի Հիլմիի կողերին՝ համընդհանուր կոնգրես հրավիրելու կապակցությամբ: Համագործակցության և միավորման այս կոչը, չնայած իր քազմաքիվ խոչընդոտներին, այնուամենայնիվ, Հայ Հեղափոխական Դաշնակցության կողմից դիտվեց իբրև մի դրական քայլ՝ միևնույն բռնակալության տապալման գործում<sup>14</sup>: Բննարկման հիմքում ընկած էր հայ-թուրքական համագործակցության խնդիրը, որն, ըստ երիտթուրքերի, իր հանգուցալուծումը կստանար հետևյալ պայմաններով. հրաժարվել ուրույն հայկական դատից, միջազգային պայմանագրերից, հեղափոխական միջոցներից՝ սրից, հրազենից, ռումբի գործածությունից և երիտթուրքերի հետ միասին համիդյան բռնությունը տապալել սոսկ խաղաղ միջոցներով: Սակայն հետագայում

որոշ հանգամանքներ թուրքիային հասկացրեցին, որ մարդկային պատ-  
մության մեջ երբեք առանց աղյան, առանց բռնության ազատություն չի  
նվաճվել և սուրբանի բռնակալությունը միայն կռվով է հնարավոր  
տապալել<sup>15</sup>:

Ըննադատելով ազգային հարցերում երկոտրույքերի վարած քաղաքականությունը՝ Դաշնակցությունը առաջադրեց ֆեդերատիվ դեմոկրատական կազմակերպության ստեղծման գաղափարը, ըստ որի տաճկահայատական ժողովուրդները, յուրաքանչյուր իր ներքին, տեղական ինքնավարությամբ հանդերձ, կազմելու էին մի ամխախտ ամբողջություն<sup>16</sup>:

Որով հայ պատմաբաններ նշում են, որ եթե Հնչակյան կուսակցությունը հետագայում, որեց ինքնուրույն հայկական պետություն ստեղծելու հարցը, ապա դաշնակցությունը սկզբից մինչև վերջ հաստատ մնաց օսմանյան ֆեդերացիայի սկզբունքին<sup>17</sup>:

Դաշնակցություն կուսակցությունն առաջինն էր, որ ողջունեց համաժողով հրավիրելու գաղափարը, քանի որ առաջին անգամ Օսմանյան կայսրության այլադավան մերկայացուցիչները պետք է համախմբվեին՝ «համերաշխ գործունեության ծրագիր մշակելու»։ Առաջին անգամ տարբեր ուժեր միավորվելով՝ պետք է Եվրոպային և պաշտոնական թուրքիային ելույթ տալին, որ հրաճեք, իրենց այլազանությունքը հանդերձ, մերկայացնում են օղոտի ուսման նպատակը՝ իրոքված միևնույն բռնապետության դեմ<sup>18</sup>։

[illegible]

Զմայած հայ քաղաքական կուսակցությունների միջև տարա-  
ձայնություններին, հայ պատգամավորները, հավատարիմ մախնական  
խորհրդակցություններում համախոսաբար հանդես գալու պայմանավորվա-  
ծությամբ, գործեցին միասնաբար և ինչպես ժամանակին բնորոշ էր «Դե-  
ռակ», համաժողովը տեսավ ոչ թե երկու կուսակցության ներկայացուցիչ-  
ների, այլ Հայ ռառո ներկայացնող վեց հայերի<sup>20</sup>:

Համաժողովին մասնակցում էր նաև 1860-70ական թթ. լուսավորչական շարժման առաջնորդներից փարիզաբնակ Մյուսա Չերազը, որը չհաբե-  
լով որևէ կուսակցության՝ հանդես եկավ դաշնակցական և հնչակյան կու-  
սակցությունների հետ միասին<sup>21</sup>:

Հաշվի առնելով այն խողովրդներ, որ Ֆրանսիական կառավարությունը միայն մի խումբ ազդեցիկ քաղաքական գործիչների դիմումների հիման վրա բույաարեց համաժողովի գումարումը, այն, պայմանավորվածությամբ համաձայն, պետք է կրեր մասնավոր բնույթ, արձանագրությունները հրատարակվելուց առաջ պետք է ներկայացվեին Ֆրանսիական կառավարությանը, իսկ մամուլի ներկայացուցիչները չէին կարող ներկա զամվել<sup>22</sup>:

Համաժողովում մարերի փոխանակությունը ընթացավ հիմնականում երկու հիմնահարցերի շուրջ.

ա) Միայն պրոպագանդայով և հրատարակություններով չի կարելի հեղափոխություն կատարել. պետք է աշխատել հեղափոխական շարժմանը ապահովել մահ զինյալ ուժերի մասնակցությունը:

բ) Փորձել օսարեկոյա կառավարությունների միջամտությունը հրավիրելու եղանակով երկրում բարենորոգումներ անցկացնել<sup>23</sup>:

Հայ քաղաքական կուսակցությունները համաժողովը սկսելուց առաջ իրենց հստակ քաջասական դիրքորոշումը արտահայտեցին համաժողովի լեզուն բուրբերենն ընդունելու վերաբերյալ: Նրանց պահանջով համաժողովում զուգահեռաբար գործածվեց մահ Ֆրանսերենը:

Դաշնակցական և ինչպե՞ս պատգամավորները վիճարկեցին մահ մակեդոնական կոմիտեների քաջակայության հարցը, և նրանց պահանջով «Դիօշակի» միջոցով մակեդոնական հեղափոխական կազմակերպությունների մամակ ուղարկվեց, որը մակեդոնական կողմում արձագանք չգտավ: Համաժողովում հայ պատգամավորները հրատարակավ բողոքեցին մակեդոնական խնդրի հանդեպ երիտարքերի դիրքի դեմ և նրանց պահանջով արձանագրության մեջ նշվեց մակեդոնական կոմիտեների ներկայացուցիչների քաջակայության փաստը:

Համաձայն «Նոր կեանքի» երիտարքերը, փաստորեն, հավակնում էին պնդել, թե մակեդոնական հարց գոյություն չունի: «Եթե չկա մակեդոնական հարց, չկար մահ Բուսլյա-Հերցեգովինայի հարց, չկար Չինոգորիայի հարց, սերբական և բուլղարական հարց, քայց սրանք բոլորն էլ բաժանվեցին տանկական կայսրությունից այսօր իրենց ազատ ու անկախ գոյությամբ ապացուցում են, որ ոչինչ չի կարող ոչնչացնել ազգի իրավունքները»<sup>24</sup>:

Մակեդոնացիները համարվելով «խռովարարներ»<sup>25</sup> չէին հրավիրվել համաժողովում, ինչը մեկ անգամ ևս հաստատում էր այն փաստը, որ բուրբ ազատականները մակեդոնացիներին մույնիսկ իրեն ազգ չճանաչելով, չեն ընդունում մահ մակեդոնական դատի գոյությունը:

Հայ պատգամավորները հրաժարվեցին քվարկել համաժողովին ներկայացված բոլոր այն որոշումները, որոնց ինչ-ինչ կետերի համաձայն չէին և նշեցին, որ կցանկանային Թուրքիան տեսնել որպես դաշնային պետություն, մինչդեռ երիտարքերի որոշումները կենտրոնացման, ճուճման և մույնացման էին տանում: Նրանք բողոքեցին որոշումներից մասնավորապես 4-րդ կետի դեմ, առաջ քաշելով այն թեզը, որ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը նախատեսված է միայն հայկական մահանգների համար և չի կարող տարածվել կայսրության մյուս մահանգների վրա: Համաժողովի հայ պատգամավորները հայտնեցին, որ իրենք չեն կարող 1876թ. սահմանադրությունն ընդունել որպես «օսմանյան ժողովուրդների քաղաքական ազա-





Ինչպես փաստում է Վարսեղյանը՝ «Փարիզի առաջին կոնգրեսից հակահեղափոխության հետ բախում էր մի անհնարին շովինիզմ, համախալսմական ազգայնամոլություն: Դաշնակցության պատգամավորները վատ զգացին իրենց այդ մթնոլորտում, միությունը վիժեց»<sup>31</sup>:

Համաժողովից առաջ և նրա ընթացքում տեղի ունեցած մի շարք փաստեր վկայում են, որ թուրքիան ամեն կերպ ձգտում էր ջնջել 61-րդ հոդվածը, մայիսյան ռեֆորմները և այդպիսով հայերի և քրիստոնյա մյուս ժողովուրդների վրա տարածել օսմանյան քաղաքականությունը:

Համաժողովում մահմեդական ներկայացուցիչների միջև ծագած պատակտումը վերստին ապացուցեց, որ միավորման և միասնական քաղաքական կուսակցության ստեղծման երիտթուրքերի գաղափարը չիրականացավ: Ընդհակառակը, համաժողովից հետո նկատելի չափով թուլացան երկու ընդդիմադիր ուժերի միջև հաստատված կապերը, ինչը և զմալով ավելի խորացրեց արդեն իսկ սեռյա տարածայնությունները<sup>32</sup>:

Միայն կատարյալ լավատեսը կարող էր կոնգրեսից ակնկալել որևէ կոնկրետ արդյունք: Հետաքրքրականն այն է, որ հիմնական պատակտումը զարգանում էր առավել թուրքական, քան տարբեր ազգություններին պատկանող խմբավորումների միջև<sup>33</sup>:

Վերջին նիստի ժամանակ երիտթուրքերի կողմից արված այն հայտարարությունը, թե հայ պատգամավորները հրաժարվում են սահմանադրական վարչակարգ հաստատելու խնդրում համագործակցել թուրքերի հետ, չէր համապատասխանում իրականությանը: Սա կարող էր Եվրոպայում և թուրքիայում վնասակար մեկնաբանությունների տեղիք տալ, այդ պատճառով էլ հայ պատգամավորները պահանջեցին հայտարարության մեջ ճշգրտումներ կատարել:

Հայ պատգամավորները հրաժարվեցին նաև անդամակցել թուրք ազատականների կողմից ստեղծված մնայուն կոմիտեին, քանի որ նրանք արդեն իսկ որոշակի ռուսգերեր ունեցող կոմիտեի անդամներ են, բայց միևնույն ժամանակ առաջարկեցին երկու կոմիտեների միջև մշտական կապ ու համագործակցություն հաստատել: Փաստորեն կոմիտեն կազմվեց միայն թուրք ազատականներից:

Ընդհանուր առմամբ օսմանյան ընդդիմադիր ուժերի առաջին համաժողովը անհաջողությամբ ավարտվեց: Երիտթուրքերի շարքերում եղած տարածայնությունները և հենց կոնգրեսի բազմազգ կազմը արդեն իսկ կանխորոշում էին բուռն վիճաբանությունների մթնոլորտ: Համաժողովի մասնակից պատվիրակների մի զգալի մասը արտահայտում էր կայսրության ազատատենչ քրիստոնյա քնակչության տրամադրությունները: Արդի վարչակարգի տապալման գաղափարում միաբան լինելով հանդերձ, նրանք տարակարծիք էին պայքարի ուղիների և մեթոդների հարցում:

1902թ. համաժողովի ձախողումը բացասաբար անդրադաձավ նաև երիտթուրքական հրատարակչությունների վրա: Համաժողովի արդյունքները ստիպեցին երիտթուրքերին իրենց գործունեությունը ծավալել ավելի շատ թուրքիայում՝ ընդլայնելով թուրքերեն լեզվով հրատարակչական գործը<sup>34</sup>:

Համաժողովը մեկ անգամ ևս ապացուցեց, որ երիտթուրքական ուժի մասին այն չափազանցեցված կարծիքը, որ Եվրոպան նախապես ուներ,

պայմանավորված էր զուտ երևակայությամբ, և թուրքիան, ըստ էության, դեռ քաղաքականապես այդքան հասուն չէր: Ուշագրավ է, որ եվրոպական մամուլում տեղ-տեղ միայն հիշատակվեց համաժողովի մասին և այն էլ կատարյալ անտարբերությամբ:

Համաժողովը հրավիրելու գաղափարը, իհարկե լավ էր, եթե «թուրք ընդդիմախոսները ետին մտքեր չունենային»<sup>35</sup>: Համաժողովի նախաձեռնությունը ստանձնողները իրենցից կուսակցություն չէին ներկայացնում, նրանք լուրջ անհատներ էին, որոնք իրենց առջև նպատակ էին դրել կայսրության բոլոր հայատակների աղաք ու անժխտելի պահանջները կեղծ, «ընդհանուր բարեմարդումներու» գործադրությամբ խեղդել<sup>36</sup>:

Այս ամենին քաջատեղյակ, օսմանյան ընդդիմադիր ուժերի առաջին համաժողովին մասնակցած հայ քաղաքական կուսակցությունները, այնուամենայնիվ, գնացին համագործակցության՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դեմոկրատական թուրքիան ավելի նպաստավոր կլինի հայ ժողովրդի համար: Մի կողմ թողնելով միջկուսակցական տարածաշրջանները, հակադրվելով երիտթուրքերի ծայրահեղ ազգայնական մշտումներից, նրանք հանդես եկան մեկ միասնական ճակատով:

Մեր համոզմամբ երիտթուրքերի մոտ այնքան խորն էր արմատավորված ազգայնամոլությունն ու մեծապետական շովինիզմը, որի վկայությունն է, ի դեպ, այսօրվա հայ-թուրքական հարաբերությունների իրողությունն ու թուրքիայի վերաբերմունքը Հայաստանի Հանրապետության նկատմամբ, որ հայ քաղաքական կուսակցությունները դեռ այն ժամանակ հազիվ թե կարողանային իրենց գործունեությամբ բեկումնային փոփոխություններ կատարել:

### BABAYAN NAIRA

#### THE ROLE OF ARMENIAN POLITICAL PARTIES IN THE FIRST CONGRESS OF OTTOMAN OPPOSITION AT PARIS IN 1902 (Summary)

The following paper aims to represent the role of Armenian political parties in the first Congress of the Ottoman opposition forces that took place at Paris in 1902. This Congress aimed to bring together different political and ethnic minorities of the Ottoman Empire, who shared in common the desire to overthrow the existing regime in Turkey and reestablish constitutional order. The participation of such political parties as Armenian Revolutionary Federation (Dashnaktsutyun) and New Hinchak Party, as well as their cooperation with the Young Turks, were based on the assumption, that Armenians would benefit from democratic Turkey. However Armenian delegates, despite great efforts, couldn't bring about drastic changes, for they faced the strong nationalist-cauvinist policy of the Young Turks.

In fact, the Congress proved once again, that Turkey didn't own the necessary political maturity to fit the imaginary image of the Young Turkish Power which Europe initially had.

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Տե՛ս Մ. Կոչար, Армяно-турецкие общественно-политические отношения и армянский вопрос, Ереван, 1988.
2. Հր. Ռ. Սիմոնյան, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 104:
3. Մ.Վարանդեան, Վերածննդի հայրենիքը եւ մեր դերը, Ժընև, 1910, էջ 68:
4. Ս. Սապահ-Գիլեան, Պատասխանատուները, Պէյրոս, 1974, էջ 149.
5. Ю.А. Петросян, Младотурецкое движение, Москва, 1971, с. 198-199.
6. Արդու Համլիի զարմիկներ՝ Մեհմեդ Սաբահեդդինը եւ Ահմեդ Լուքֆուլլահը իրենց հոր՝ Դամատ Սահմուդ փաշայի հետ ակտիվ գործունեություն էին ծավալել Փարիզում:
7. «Դրօշակ», 1902, փետրվար, N 2, էջ 23:
8. «Հնչակ», 1902, N 2, էջ 12:
9. Ս. Սապահ-Գիլեան, Երիտասարդ Թուրքիա, Պարիզ, 1908, էջ 56-57.
10. Ա.Ս.Համբարյան, Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին (XIX դարի վերջ XX դարի սկիզբ) Երևան, 1990, էջ 207:
11. «Հնչակ», 1902, N 2, էջ 14:
12. Մ. Կոչար, Армяно-турецкие общественно-политические отношения и армянский вопрос, с. 99.
13. Ս. Սապահ-Գիլեան, Պատասխանատուները, էջ 195:
14. «Դրօշակ», 1901, ապրիլ, N 2, էջ 34:
15. Մ.Վարանդեան, Հ.Յ.Դաշնակցության պատմություն, Բ հատոր, Գահիրե, 1950, էջ 4:
16. «Դրօշակ», 1900, հոկտեմբեր, N 8, էջ 14-115:
17. Հր. Ռ. Սիմոնյան, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունն ու քաղաքականությունը, Երևան, 1996, էջ 106:
18. «Դրօշակ», 1902, մարտ, N 3, էջ 34:
19. Համագործակցության մասին տե՛ս Մ.Վարանդեան, Վերածննդի հայրենիքը եւ մեր դերը, էջ 66-67:
20. «Դրօշակ», 1902, մարտ, N 2, էջ 23:
21. Մասնակիցների թիվը ըստ Մ. Վարանդյանի շուրջ 40 էին, ըստ «Մշակի»՝ 45-50, ըստ Յ. Պետրոսյանի՝ 60-70, ըստ Հր. Սիմոնյանի՝ 60-ից ավելի, Ռամզանուլի մոտ՝ շուրջ 47:
22. «Մշակ», 1902, փետրվար, N 25, էջ 3:
23. Bayur Y.H., Türk inkılâbı tarihi, cilt II, kısım IV, Ankara, 1952 s. 43.

24. «Նոր կենք», 1902, N1, էջ 14:
25. Մ.Վարանդեան, Հ.Յ.Դաշնակցության պատմություն, էջ 3; М. Кочар, Армяно-турецкие общественно-политические отношения и армянский вопрос, с. 106:
26. «Դրօշակ», 1902թ., փետրվար, N 2, էջ 24-25:
27. Ջ. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք առաջին, Երևան, 1982, էջ 132:
28. «Դրօշակ», 1902թ., փետրվար, N 2, էջ 25:
29. Նույն տեղում, էջ 25; М. Кочар, Армяно-турецкие общественно-политические отношения и армянский вопрос, с. 104-105.
30. «Դրօշակ», 1902թ. մարտ, N 3, էջ 34:
31. Մ.Վարանդեան, Վերածնունդ հայրենիքը եւ մեր դերը, էջ 68:
32. Г. З. Алиев, Турция в период правления младотурок, с. 61-62.
33. Ramsaur E.E, The Young Turks: Prelude to the Revolution of 1908, New Jersey, 1957, p. 66.
34. Шпилькова В.И., Младотурецкая революция 1908-1909гг., Москва, 1977, с. 43.
35. Ս.Սապահ-Գիլեան, Պատասխանատուները, էջ 195:
36. «Նոր կենք», 1902, N 2, էջ 14:

**ԹՈՒՐԻՔԻԱՅՈՒՄ ԲԱԳՂԱՐԱԿԱՆ ԼԻԴԵՐՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԻ  
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ**

Հայտնի ճշմարտություն է, որ քաղաքականությունը անձնավորվում է առաջնորդներով, և քաղաքական համակարգը չի կարող գործել առանց համապատասխան գործող անձանց՝ քաղաքական առաջնորդների: Իսկ յուրաքանչյուր երկրի քաղաքական ղեկավարության (լիդերության) բնույթը պայմանավորված է այդ երկրի պատմությամբ, գաղափարախոսությամբ և արժեքներով:

Այս համատեքստում մեզ համար հետաքրքրական կարող է լինել Մերձավոր և Միջին Արևելքի տարածաշրջանում առաջին ազգային պետություններից և այսօր գլխավոր աշխարհաքաղաքական, ռազմական և տնտեսական դերակատարներից մեկի՝ Թուրքիայի Հանրապետության քաղաքական ղեկավարության բնույթի ուսումնասիրումը, որը հետագայում կարող է դառնալ վերոհիշյալ հիմնահարցի ավելի ծավալուն և օբյեկտիվ հետազոտության ներածական մի օրինակ:

Թուրքիայի զարգացումը մշտապես որոշակիորեն պայմանավորված է եղել նրա ղեկավարների անձեռով ու վարվող քաղաքականությամբ: Ինչպես փաստում է գերմանացի թուրքագետ Կարլ Գյոթլիոզենը, «Ժամանակակից Թուրքիան, առանց որևէ կասկածի, հանդիսանում է Քեմալ Աթաթյուրքի ստեղծագործությունը»<sup>1</sup>: Այս պնդման հետ, թերևս, դժվար է չհամաձայնվել:

Օրինաչափ է, երբ պատմական բեկումնային շրջաններում ի հայտ է գալիս քարիզմատիկ լիդերության անհրաժեշտությունը: Իշխանությունը նման դեպքերում կրում է խիստ անձնավորված բնույթ: Քարիզմատիկ առաջնորդն իր վրա վերցնում է հասարակության համախմբման և արդյականացման առաքելությունը՝ դառնալով ճգնաժամի հաղթահարմանն ուղղված քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային ծրագրերի նախաձեռնողն ու կազմակերպիչը: Ըստ ամերիկյան թուրքագետ Դ. Ռասթոուիս, «քարիզմատիկ ղեկավարությունը ճգնաժամային ղեկավարության տեսակ է»<sup>2</sup>:

Քեմալ Աթաթյուրքը հենց այդպիսի առաջնորդ էր, որը շաղախում էր ամբողջ թուրքական քաղաքական կյանքը՝ կենտրոնացնելով իր ձեռքերում անսահմանափակ իշխանություն ի դեմս Հանրապետության նախագահի, իշխող միակ՝ Հանրապետական-Ժողովրդական կուսակցության գլխավոր նախագահի և Ջինված Ուժերի գերագույն հրամանատարի պաշտոնները: Նա իրոք ուժեղ կազմակերպչական ունակությունների, ռազմական և դիվանագիտական տաղանդի տեր մարդ էր, որը ղեկավարվում էր այն համոզմունքով, որ մեկ անհատը կարող է փոխել իրավիճակը և տանել դեպքերի ընթացքը իր ուզած կույրով<sup>3</sup>: Իր քաղաքական մտածելակերպում առաջնորդվելով թուրքական ազգային ավանդույթով՝ հեղոսների, «ժողովրդի հոր», լուսավորչի<sup>4</sup> պաշտամունքով, Աթաթյուրքը ձգտում էր պատմության մեջ մտնել որպես հենց որպես հերոս: Այդ պատճառով էլ Աթաթյուրքի ուժեղ ավտորիտար իշխանությունը հանդես եկավ «գլուսավորյալ» բռնապետի և

ժողովրդի կողմից սիրված «ազգի խոր» կերպարների համադրմամբ: Ե՛վ Արաքյուրթը, և՛ նրա շրջապատը համոզված էին, որ թուրք ժողովուրդը դեռևս ընդունակ չէ ժողովրդավարական կառավարմանը և գգոմ է վերևից կառավարվելու անհրաժեշտությունը<sup>5</sup>:

Գնահատելով թուրքիայի Հանրապետության առաջին նախագահ Քեմալ Աթաթյուրքի քաղաքականությունը՝ հարկ է նշել, որ այն, մեր կարծիքով, որոշվում էր երկու գերակայություններով՝ 1) ազգային անկախության ձեռքբերումն ու պաշտպանությունը, և 2) նորաստեղծ Հանրապետության արդյունավետացումը։ Աթաթյուրքն ու նրա զինակիցները իրենց առջև դրել էին արդյունավետ ազգային օրգանիզմի և պետության ամրապնդման և առողջացման խնդիր՝ ջանալով հստակ նորոշել այդ խնդրի լուծման մեթոդաբանությունը, որն ինքը՝ Աթաթյուրքը բնութագրում էր այսպես. «Հաջողության հասնելու համար հարկավոր է հետևել ծրագրին, որը լիովին կհամապահանգեցնի մեր այսօրվա իրավիճակին, մեր պայմաններին, օրայնցիկը՝ հասարակական պահանջմունքներին, ինչպես նաև կիսմածայնեցիկը՝ արդյունավետության պահանջներին։ Մենք պետք է հրաժարվենք բոլոր տեսակ մեծ, բայց ֆանտաստիկ նախագծերից, խորաքափանց հայացքով մշակենք իրականությունը, շոշափենք այն և հասկանանք, թե ինչով արժեն զբաղվել և ինչը սկսել կյանքի կոչել»<sup>1</sup>։

[illegible][illegible]

վանդություն, որն արտահայտվում էր անհատի, հասարակության և իրավունքի հանդեպ պետության կամ նրա կողմերի գերակայությամբ:

Եթե հետևենք Թուրքիայում քաղաքական զարգացման տրամաբանությանը, կարելի է տեսնել, որ վերոհիշյալ ավանդույթը իր տեղը գտավ նաև հետագա տարիներին: Այսպես, Դեմոկրատական կուսակցությունը (ԴԿ) 1940-ական թվականների երկրորդ կեսին և 1950-ական թվականների առաջին կեսին փորձեց փոխել քաղաքական ղեկավարության բնույթը և դիմեց հասարակությանը՝ սեփական քաղաքականության համար լայն աջակցություն ձեռք բերելու նպատակով, ինչը և բույլ տվեց գրեթե անցավայի եղանակով իրականացնել քեմալական քաղաքական համակարգի ապամոնոտաժումը և սահմանադրական ճանապարհով նոր քաղաքական ընտրամուն իջեցնելու փորձը: Սակայն 1950-ական թթ. 2-րդ կեսին ԴԿ առաջնորդը՝ Հանրապետության վարչապետ Ալման Մեմդեռեթը վերդարձավ քաղաքական ղեկավարման նախորդ մոդելին՝ փորձելով համոզել զալ «ազգի խոր» կամ «մարգարեի» կերպարով: Նման տեսակի քաղաքականությունը ի վերջո հանգեցրեց հասարակության և հատկապես ռազմա-քաղաքականության վերնախավի կողմից Մեմդեռեթի օտարմանը և 1960թ. մայիսի 27-ի ռազմական հեղաշրջման միջոցով նրա տապալմանը:

Ռազմական հեղաշրջումների ժամանակաշրջանում (1960-1980թթ.) ի հայտ եկավ թուրքական լիդերության ևս մի առանձնահատկություն. զինվորական ղեկավարները գերծ մնացին քաղաքական իշխանությունը իրենց ձեռքերում երկար պահելու և երկիրը զինվորական բռնապետության միջոցով տնականորեն ղեկավարելու գայթակղությունից՝ նախընտրելով վերստեղծել քաղաքական համակարգը և իշխանությունը վերադարձնել քաղաքացիական ինստիտուտներին և քաղաքական ուժերին, միաժամանակ աշախուրջ հետևելով նրանց վարքագծին<sup>8</sup>:

1980-ական թթ. Թուրքիան կրկին կանգնեց լուրջ փոփոխությունների անհրաժեշտության առաջ: Այդ խնդիրը իրականացնելու առաքելությունը ստանձնեց «Մայր-Հայրենիք» աջակենտրոն կուսակցության առաջնորդ Թուրքթեք Օզալը, որը 1983թ. դարձավ վարչապետ, իսկ 1989-ին՝ նախագահ: Նա նախաձեռնեց երկրի համար իրատալ և խորը կառուցվածքային, տնտեսական և սոցիալական բարեփոխումներ, որոնք բերեցին թուրքական պետության և տնտեսության ավելի ազատական և բաց մոդելի ստեղծմանը: Բացի այդ, Օզալի կառավարման օրոք փորձ կատարվեց ճանապարհ բացելու այնպիսի երևույթների ճանաչման համար, ինչպիսիք են էրնիկական բազմազանությունը, աշխարհիկ և խղամական ինքնության համադրությունը, ինչպես նաև երկրի սահմաններից դուրս թուրքական ազդեցության տարածման քաղաքականության իրականացումը:

Պետք է նշել, որ Արաբյուրքից և Բեյրութից հետո Թուրքիայում գործում էր «երկգլխանի» կառավարման համակարգը, երբ, մի կողմից, պետության զուխը Հանրապետության նախագահն էր, իսկ, մյուս կողմից, երկրի ղեկը գտնվում էր կառավարության ղեկավարի՝ վարչապետի ձեռքերում: Այդ երկվությունը վաղ կերպով արտահայտվեց 1980-ական թթ. ընթացքում, երբ վարչապետ Օզալի քաղաքականությունը հաճախ բախվում էր նախագահ Է. Էվրեմի կարծի տեսակետների հետ, և հատկապես 1990-





քաղաքական կյանքում, ինչը խոստանում է, որ Թուրքիայի նոր արդիականացումը լինելու է քաղականին տեղական և քաղո մի գոյությունք:

Եզրափակելով՝ կարելի է մի քանի հետևություններ անել.

1/ Թուրքական ազգային պետության՝ Թուրքիայի Հանրապետության կայացմանը նպաստող հիմնական գործոններից մեկը եղել է այդ պետականության գաղափարի կրողը և երկրի արդիականացման շարժիչ ուժը հանդիսացող ազգային առաջնություն և նրա շուրջ համախմբված ընտրանում տոտ քաղաքական կամքի և ուժի առկայությունը, ինչի արդյունքում ժամանակակից Թուրքիայի քաղաքական կյանքի դիմամիկան անընդիատ որոշվել է նրա լիդերների ծրագրերով և հավակնություններով:

2/ Հանրապետության քաղաքական լիդերները գերազանցապես նախընտրել են ղեկավարման ավտորիտար, պատերճախիտական («ժայրապետական») ոճը, որն արդաիայտվել էր պետության կառավարման համար իշխանական, քյոշոկրատական և ուժային ռեսուրսների կենտրոնացման ուղու մեջ:

3/ Ինչպես անցյալում, այնպես էլ ներկայում և տեսանելի ապագայում քուրքական պետության գոյությունը, առաջընթացը կամ հետընթացը ընդհանրապես պայմանավորված են եղել և լինելու քաղաքական ղեկավարների կայացրած որոշումներով և, հետևաբար, պետական ինստիտուտների՝ նախագահական իշխանության և կառավարության իշխանության, քաղաքական ուժերի և քանակի կշիռը և դերը մեծ չափով որոշվելու են քաղաքական լիդերների անահատականություններով:

4/ Քաղաքական ղեկավարության պատմական դերը սովորաբար գնահատվում է երեք հիմնական չափանիշներով՝ պատասխանատվություն, օրինականություն և արդյունավետություն: Եվ այս առումով Թուրքիայի վերջին վկայում է, որ առանց պատասխանատու ղեկավարության պետական շինարարության և արդյունավետ ու ազատ հասարակության կազմավորման գործընթացը չափազանց բարադանում է:

5/ Ուսումնասիրելով Թուրքիայի օրինակը՝ կարելի է փաստել, որ XX դարի ընթացքում այդ երկրին հատուկ էր ղեկավարության ավտորիտար քարիզմատիկ տեսակը, որտեղ իշխանությունը հիմնվում է ազգային առաջնությունների անհատականությունների քացառիկության և առաքելության նկատմամբ իրենց հետևորդների կամ զանգվածների հավատի վրա: Այդպիսի ղեկավարները հավակնում են հանդես գալ որպես ազգի մարմնավորում, նրանք են որոշում իրենց երկրի զարգացման ուղին: Լիդերության մման տեսակը, ի դեպ, չէր հանդիսանում միակը՝ ունենալով քազում մմանակումներ Մերձավոր և Միջին Արևելքի պետություններում, ինչը առիթ է ընձեռնում խասելու քաղաքական ղեկավարության ընդհանուր տիպաբանական ընդհանրության շուրջ, հարց, որի քննարկումը քաղականին արդիական է ամբողջ տարածաշրջանի պատմա-քաղաքական ուսումնասիրությունների համար:

# ON THE QUESTION OF THE CHARACTERISTICS OF THE TURKISH POLITICAL LEADERSHIP

The characteristics of the political leadership of state is formed by history, ideologies and values of society. It is especially actual in Turkey's case, because one of the main factors promoted to the process of establishment of the Turkish national state – the Turkish Republic – was the being of the political will and force under national leader and consolidated elite which were statehood idea carrier and force of the country's modernization. As a result the dynamics of the political life in modern Turkey was permanently conditioned by the programs and ambitions of its leaders.

During the history of the Turkish Republic its political leaders mostly preferred an authoritarian, paternalistic style of leadership. The role and weight of the state and political institutions would be largely defined by the political leadership characteristics. Especially in such country as Turkey the process of the state-building and the formation of modern society very depend on the responsible and strong leadership.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

- [illegible]

**ԱՄՆ-Ի ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՆԳԱՆ-ԻՐԱՆԱԿԱՆ ՆԱՎԺԱՅԻՆ  
ՎԵՃԻ ՀԱՐՅՈՒՄ**

1901թ. անգլիացի գործարար Վիլյամ դ'Արսին շահից կարողացավ կոնցեսիա ստանալ երկրի տարածքի <sup>5</sup>/<sub>6</sub>-րդ մասում նավթի հետազոտական աշխատանքներ կատարելու համար: 7 տարի անց Մեսջեդե-Մուլեյմանում՝ Պարսից ծոցի մոտ հայտնաբերվեցին նավթի ահռելի պաշարներ, որի շնորհիվ ձևավորվեց Անգլո-Պարսկական նավթային ընկերությունը (1935թ.-ից՝ Անգլո-Իրանական նավթային ընկերություն)<sup>1</sup>, որը, չնայած անվանը, ամբողջությամբ գտնվում էր անգլիացիների ձեռքում: ԱԽՆԸ-ն աշխարհի հզորագույն նավթային ընկերություններից մեկն էր: Այն ուներ 59 դուստր ձեռնարկություն<sup>2</sup>, որոնք տեղաբաշխված էին Իրանում, Քուվեյթում, Եգիպտոսում և այլուր: Այն միավորում և վերահսկում էր նավթ արտահանող 4 ընկերություններ, տրանսպորտային 4 ընկերություններ, 4 նավթագտարան, նավթի քաշման և վաճառքի 19 ընկերություններ<sup>3</sup>: ԱԽՆԸ-ն ուներ իր սեփական օդակայանական ապարատ: Ընկերությունն Իրանում ազատված էր մրցատուրքերից և եկամտահարկերի վճարումից: Կարելի է ասել ԱԽՆԸ-ը պետություն էր պետության ներսում:

Մյուսն էրկրորդ աշխարհամարտը Անգլիան տիրապետող էր ինչպես Իրանում, այնպես էլ Սերձավոր և Միջին Արևելքի երկրներում: Սակայն երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Սերձավոր և Միջին Արևելքում տեղի ունեցավ ուժերի վերադասավորում: Եթե մինչ երկրորդ համաշխարհային պատերազմը ԱՄՆ-ը էական ազդեցություն չուներին Իրանի նկատմամբ, ապա հետպատերազմյան շրջանում նկատվում է այդ ազդեցության էական աճ: Նոր իրավությունների պայմաններում Միացյալ Նահանգներին անհրաժեշտ էին նոր շուկաներ, նավթի ձեռքբերման աղբյուրներ, ռազմավարական նշանակություն ունեցող տարածքներ և այլն: Դրա հետապայում իրականացվեցին ԱՄՆ-ի զինված ուժերի այնտեղ գտնվելու շնորհիվ, իսկ հետո՝ Ա. Միլսպոյի և ամերիկյան մյուս խորհրդականների ակտիվ գործունեությամբ: Համաձայն 1944թ. հուլիսի 23-ի պետդեսպարտամենտի բյուլետենի՝ Հերբերտ Հուվեր կրտսերը և Ա.Ա. Կերտիսը ժամանեցին Իրան, նրանք «պետք է ջանային Իրանում նավթային կոնցեսիա ձեռք բերել»<sup>4</sup>: Լիմելով բավականին հարուստ երկիր, ի հակադրություն պատերազմից հետո սնանկացած երկրների, ԱՄՆ-ն տնտեսական և ռազմական օգնությունների միջոցով փորձում էին հասնել իրենց նպատակներին:

Սակայն Իրանում դեռ ուժեղ էր Մեծ Բրիտանիայի ազդեցությունը, քանզի արդյունաբերության միակ ճյուղը, որ զարգացում էր ապրում, դա նավթարդյունաբերությունն էր, որը, կարելի է ասել, ամբողջությամբ գտնվում էր ԱԽՆԸ-ի ձեռքում, այսինքն՝ Անգլիայի (ԱԽՆԸ-ի բաժնետոմսերի 56 % պատկանում էր անգլիական կառավարությանը): Եվ քանի որ Իրանի բյուջեն ինքնակամում լցվում էր Անգլիայի հսկողության տակ գտնվող ընկերության միջոցով, ուստի կարելի է համարակորեն նշել, որ Իրանի, ինչպես ար-

տարբին, այնպես էլ ներքին քաղաքականությունը գտնվում էր այդ հզոր տե-  
նությունյան վերահսկողության ներքո: Սակայն առկա էին ԱԽՆՀ-ի հետ կապ-  
ված բազում խնդիրներ, որոնք հուզում էին Իրանի ժողովրդին: Հատ 1933թ.  
կոնցենտրման համաձայնագրի, ԱԽՆՀ-ը պարտավորվում էր մասնապատ-  
րաստել և առաջադրել իրանցիների պատասխանատու պաշտոններ: Բայց  
նույնիսկ 1946 թ. տվյալներով, չնայած չնչին վարձատրությամբ՝ օրական 36  
հեղալ ամենամասը և սև աշխատանք կատարող բանվորների 96%-ը իրանցի-  
ներն էին: ԱԽՆՀ-ում աշխատող արաբներն ու հնդիկներն ավելի բարձր էին  
վարձատրվում քան իրանցիները (համապատասխանաբար, 70-80 ռեալ, 40-  
45 ռեալ)<sup>5</sup>: Այսպիսով, Մեծ Բրիտանիան անտեսում կամ խախտում էր  
1933թ. կոնցենտրման համաձայնագրի մի շարք կետեր, որոնք անարժագան-  
ք էին կապող մնալ: 1938-1945թթ. ԱԽՆՀ-ի մարտի եկամուտը կազմում էր 34  
էլին կապող մնալ: 1938-1945թթ. ԱԽՆՀ-ի մարտի եկամուտը կազմում էր 34  
էլին կապող մնալ: 1938-1945թթ. ԱԽՆՀ-ի մարտի եկամուտը կազմում էր 34  
էլին կապող մնալ:

1949թ. աշնանին Իրանում ձևավորվեց «Ազգային հակառակ»-ը, որը դեկլարացիոն էր Սուհամմեդ Մոսադեղել (Մոսադեղ ալ-Մալքանե), որին հարեցին Իրանի բազմաթիվ ազդեցիկ ուժեր՝ մտավորականությունը, կողմնակապետությունը, աշխատավորությունը, ուսանողությունը, ինչպես նաև մի շարք կուսակցություններ՝ Հիրան», «Ազատության խմբակցություն», «Ֆեդայյան-է-կուսակցություններ»։ Արագ, «Անկախություն», «Հիրանի ազատության միություն»<sup>8</sup>: Դիշտ գնահատելով ստեղծված իրավիճակը և մի կողմ թողնելով իրենց կուսակցական տարածայնությունները՝ այս ուժերը համախմբվեցին մի գաղափարի շուրջ՝ պայքարել ընդդեմ ԱԽՆԸ-ի և հասնել Իրանի նախկին ազգայնացմանը։ 1951թ. մարտի 7-ին Ռազմարմայի սպանությունից հետո,<sup>9</sup> վարչապետ նշանակված Հուսեյն Ալայի կառավարությունն ընդգծված անգլիաներ քաղաքականությամբ էր իրականացնում։ Ուստի, հասկանալի է, որ նա դեմ էր նախկին ազգայնացման գաղափարին և հարկ եղած դեպքում դիմում էր կտրուկ և ծայրահեղ միջոցների:

«... Երբ հարկ էր դրվում զինվորական» և նրա համախոհ ուժերի

քարկել բոլոր մրանց, ովքեր կվործեն ձեռք բերել ազգայնացված նավթը: Ի սպառնույց դրան, 1952թ. հունիսին Ալեքսանդր Կանգլենցը ելավ «Ռուզ Մարի» նավթի լցանավթ /տանկեր/, որը բեռնված էր 1000 տոննա նավթով<sup>10</sup>: Հունվարին Ալեքսի վերին դատարանը հայտարարեց, որ խտրական և ճապոնական նավերին վրա գտնվող նավթը Անգլիայի սեփականությունն է: Այնուամենայնիվ, գործընթացը հաջողվեց միայն Ալեքսանդր, իսկ Իտալիայի և Ճապոնիայի դատարանները ճանաչեցին պայմանագրի օրինականությունը<sup>11</sup>:

Այդ նույն ժամանակ Մերձավոր Արևելքի ամերիկյան ընկերությունները բավականին օգտվեցին ԱՆՆԸ-ի անհաջողություններից, որպեսզի լրացնեն Իրանի նավթի արտահանման դադարեցման պատճառով առաջացած վակուումը, ԱՐԱՄԿ-ն Սաուդյան Արաբիայում մեծացրեց նավթի տարեկան արդյունահանումը 200 մլն քարեից 300 մլնի, իսկ Քուվեյթում՝ 128-ից մինչև 273 մլն քարեի: Սակայն, մյուս կողմից Իրանում առաջացած իրական վակուումը, Արադանի նավթավերամշակման գործարանի փակման պատճառով, իրական սպառնալիք էր կարտելին<sup>12</sup>:

Ամերիկյան մի շարք ազդեցիկ քաղաքագետներ (Հեյրերտ Հուվեր կրտսերը, Մաքս Թորնթերթը, Ջորջ Մաքքին, Ա.Ա. Քեքքիսը), ելնելով Միացյալ Նահանգների քաղաքական ու տնտեսական շահերից, քննադատում էին ԱՆՆԸ-ին: Այդ քաղաքականության ենթատեքստը հանգում էր նրան, որ Վաշինգտոնը ցանկանում էր իր բաժինն ունենալ իրանական հարուստ նավթային պաշարներից: Իրանում ևս առկա էին քաղաքական ուժեր, որոնք ԱՆՆԸ-ի դեմ ծավալած պայքարում նպատակահարմար էին գտնում դիմել ԱՄՆ-ի աջակցությանը: Օգտվելով այդ պատևին առիթից Վաշինգտոնը առաջարկեց իր աջակցությունը անցյալ-իրանական նավթային տարածայնության կարգավորման հարցում: Ինչպես Բրիտանական կառավարությունը, այնպես էլ ԱՆՆԸ-ն այլընտրանքն չունեին, քանի որ երկրերը համաշխարհային պատերազմից հետո Մեծ Բրիտանիայի ազդեցությունը Մերձավոր և Միջին Արևելքում նկատելիորեն թուլացել էր:

1951թ. ապրիլի 9-19-ը կողմերը ժամանեցին Վաշինգտոն: Մեծ Բրիտանիայից պահանջեցին ճանաչել Իրանի նավթի ազգայնացման փաստը: Ի պատասխան, Անգլիան առաջարկեց մեծացնել Իրանի եկամտաբաժինը և պատասխանատու պաշտոններ առաջարկեց իրանցիներին ԱՆՆԸ-ում: Իրանի կառավարությունը իր անհամաձայնությունը հայտնեց այս առաջարկին և բանակցությունները մտամ փակվեցին: «Մենք,- գրում է Անտոնի Իդենը,- չէինք կարող համաձայնվել ամերիկյան վերջին առաջարկության հետ, որը կարծես մտադրված էր հեռացնել անգլիական տեխնիկական անձնակազմին Իրանից և անգլիական բավականին արժեքավոր ակտիվների հանձնումը Իրանին: Մենք նմանապես չէինք կարող համաձայնվել բռնազրավմանը՝ առանց փոխհատուցման սկզբունքի: Ըստ իս, առավել լավ է չունենալ պայմանագիր, քան ունենալ վատը»<sup>13</sup>: Սրան հետևեց Հարթի Թրյունենի մամակը, ուղղված Մոսկվային և Երվին, որտեղ կոչ էր անում խնդիրը շուտափույթ լուծել «համուն համընդհանուր շահերի»: Ապա 1951 թ. հունիսի 3-ին ԱՆՆԸ-ի տնօրինությունը հայտարարեց, որ պատրաստ է վերսկսել բանակցություններն Իրանի կառավարության հետ: Անգլիական կողմը խոստացավ անմիջապես Իրանին վճարել 10 մլն. ֆունտ ստեռլինգ և 1951թ.

այլև առիթ կհանդիսանար Խորհրդային Միության միջամտությանը: Ինչպես նշեց Ալեանը 1951թ. մայիսի կեսերին՝ «Ռազմական ուժ կարող ենք օգտագործել միայն Իրանի կառավարության հրավերի կամ թևկիսման կոմունիստների հեղաշրջման փորձի և կամ էլ վասնզավոր հարձակումներից Բրիտանիայի հպատակների էվակուացման դեպքում»<sup>21</sup>:

ԱՄՆ-ի՝ Իրանի նկատմամբ մեծան «բարեկամ» քաղաքականությունը վկայում է այն մասին, որ Վաշինգտոնում շատ լավ հասկանում էին, քի ռազմական միջամտության արդյունքում, ինչպիսի հնարավորություն կընձուռնվի Խորհրդային Միությանը: Վերջինս կարող էր օգտվել 1921թ. սլայմնագրից, ըստ որի Խորհրդային Միությունը իրավունք ուներ իր ռազմական ուժերը մտցնել Իրան, երև որևէ մեկ այլ՝ երրորդ կողմ օգտագործեր երկիրն իրեն ռազմական ընդդեմ Խորհրդային Միության:

ԱՄՆ-ն Իրանի բիվ մեկ գործընկերն էին ներմուծման բնագավառում<sup>22</sup>, այսինքն՝ նա գրավել էր Իրանի շուկան: Մեծարանակ օգնությունների շնորհիվ Իրանի ժողովրդի զգալի մասն իրենց երկրի առաջընթացը տեսնում էին ԱՄՆ-ի հետ սերտ համագործակցության մեջ, և Միացյալ Նահանգներն այս ամենը վաճառելի տակ դնել էին պատրաստվում:

Միևնույն ժամանակ ԱՄՆ-ը ցանկանում էին շուտափույթ լուծել այս խնդիրը, քանզի տարածաշրջանում կային մեծատիպ այլ խնդիրներ և Իրանի օրինակով նրանք մույնպես կարող էին գլուխ քարծրացնել, ինչը ձեռնադր չէր Անգլիային, առավել ևս՝ ԱՄՆ-ին: Թե՛ Անգլիան և թե՛ ԱՄՆ-ը համոզված էին, որ երեք ընդհանրապես հնարավոր լինեց համաձայնության գալ, ապա միայն մեկ այլ և ոչ այս կառավարության հետ: Մոսադեղին անհրաժեշտ էր չեզոքացնել՝ դիմելով ցանկացած միջոցի, ներառյալ նաև Իրանում առկա ուժերը, քարոզչությունը և դիվանագիտական ճնշումները<sup>23</sup>: ԱՄՆ-ի Կենտրոնական Հետախուզական Վարչությունը մշակեց այնպիսի մի ծրագիր, որը կարող էին իրականացնել խիստ զաղանի պայմաններում, միևնույն ժամանակ հասնել իրենց բաղձալի հաղթանակին:

Այս նույն ժամանակ, Ազգային Դակաաում նկատվեց առաջին լուրջ ճեղքը՝ 1953թ. մարտին կուսակցությունից դուրս եկան Քաշանին, Մակկին, Բադայը և Խաերի-գադեն, ինչպես նաև «Իրանի աշխատավորների կուսակցությունը», Խալիլ Մալեքիի «Նիքույե սեվում» կուսակցությունը<sup>24</sup>:

Ազգային Դակաաի ալանդապաշտ և ժամանակակից քեների միջև տարածայնությունները հստակ զագաքմակեաին, երբ Մոսադեղը «Պառլամենտի» խնդրեց իր արտակարգ լիազորությունները երկարացնել ևս 12 ամսով: Ընդդիմանալով խնդրանքին, կոերական մի շարք գործիչներ հեռացան Ազգային Դակաաից և կազմեցին իրենց սեփական Իսլամական Փակ խմբակցությունը (Ֆրակցիում-ե Իսլամ)<sup>25</sup>:

Նախագահ Դ. Էյզենհաուերը կարող շրջադարձ կատարելով և հրաժարվելով նախկին վարչակազմի քաղաքականությունից, որոշեց աջակցել նախարարություններողներին: ԱՄՆ-ի նորընտիր նախագահը 1953թ սկզբին հեքրական մամլո ասուիսի ժամանակ հայտարարեց, որ. «ԱՄՆ-ի կառավարությունը կձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի կանխվի «կոմունիստական վտանգը Իրանում»<sup>26</sup>: Իսկ Չարլզ Բուլանը, ԱՄՆ-ի արտաքին գործերի նախարարության պաշտոնյաներից մեկը,





կալվեցին: Ջահեդին շտապեց իրեն հռչակել Իրանի նոր վարչապետ: Շուտով հայտնի դարձավ, որ ԱՄՆ-ը վերսկսում են իրենց օգնությունների ծրագիրը: Մեծաքանակ օգնությունները հող էին նախապատրաստում, որպեսզի նավթի բնագավառում Իրանում ԱՄՆ-ը և Անգլիան հասնեն նոր և առավել ձեռնտու հաշտությունների: Սկզբում ԱՄՆ-ը պահանջեցին ԱԻՆԸ-ի արժեքների 75%-ը, հետո համաձայնվեցին ստանալ արժեքների 50%-ը, սակայն 50%-ին հավակնում էր ԱԻՆԸ-ն և դեռ պետք էր որոշակի արժեքներ տրամադրել «Ռոյալ Դատչ Շելլ»-ին և «Կոմպանի ֆրանսեզ դե փեթրոլ»<sup>33</sup>: Հոկտեմբերի սկզբին Վաշինգտոնի աջակցությամբ վերսկսվեցին փոխհարաբերությունները Մեծ Բրիտանիայի և Իրանի կառավարությունների միջև: Իսկ դեկտեմբերի 5-ին պաշտոնապես հայտարարվեց դիվանագիտական հարաբերությունների վերականգնման մասին:

Ամերիկացիները կարծիք հայտնեցին, որ այլևս հարկ չկա, որպեսզի անգլիացի մասնագետները վերադառնան Իրան, քանի որ նավթարդյունաբերության վերականգնման գործը ցանկալի էր հանձնարարել այլ երկրի մասնագետներին, մասնավորապես, ամերիկացիներին<sup>34</sup>:

1954թ. օգոստոսի 5-ին Թեհրանում և Լոնդոնում տպագրվեցին պաշտոնական հայտարարություններ, որոնք հստակեցնում էին նավթի հետ կապված նոր պայմանագրի կետերը: Իրանի կառավարությունը Անգլիային զիջում էր շատ ավելին, քան կարող էին ենթադրել իրանցիները: Նոր պայմանագիրը ուժի մեջ էր մնալու մինչև 1979թ., ցանկության դեպքում կարող էին երկարացնել մինչև 1994թ.: Նավթի արտահանման մեծաշնորհը պատկանելու էր կոնցեռնին և այլն<sup>35</sup>: Այն, ինչ այժմ Մեծ Բրիտանիան առաջարկում էր Իրանին, ավելի քիչ էր, քան առաջարկում էր ԱԻՆԸ-ն 1951թ. անարդյունավետ բանակցությունների ժամանակ: Այս կոնսուրցիումում ԱԻՆԸ-ի մասնաբաժինը կազմում էր 40% (որպեսզի խուսափի ավելորդ շահարկումներից, 1955թ. դեկտեմբերից կոչվեց Բրիտանական նավթային ընկերություն), «Ռոյալ Դատչ Շելլ»-ինը՝ 14%<sup>36</sup>, 40% անցավ ամերիկյան 5 ընկերությունների՝ «Գուֆ Օյլ Բորփորեյշն», «Մոքոնի-Վակում Օյլ Բորփորեյշն», «Ստանդարտ Օյլ Բոմպանի (Նյու Ջերսի)», «Ստանդարտ Օյլ Բոմպանի օֆ Բալիֆորնիա» և «Թեխաս Բոմպանի» (յուրաքանչյուր ունեցի 8 %) և «Բոմպանի ֆրանսեզ դե փեթրոլ»-ին 6%<sup>37</sup>: Որպես ԱԻՆԸ-ի իրավահաջորդ, բրիտանական ընկերությունը 60% արժեքների փոխարեն համաձայնվեց ստանալ 600 մլն. դոլար: Նախատեսվում էր վճարումը կատարել արտահանվող նավթի յուրաքանչյուր բարելից հավաքելով 10 ցենտ<sup>38</sup>:

1954թ. ԻԱՆԸ-ի ձեռքում, փաստորեն, մնացին միայն Նաֆթ-ե Շահի նավթահանքերը, որտեղ տարեկան ստանում էին 300 հազար տոննա նավթ, և Քերմանշահի ու Նաֆթ-ե Շահի նավթաքոր գործարանները<sup>39</sup>:

ԱՄՆ-ի կառավարությունը, բավարարված լինելով պայմանագրի կետերից, Իրանին 10 միլիոն դոլար օգնություն հստակացրեցին: Իսկ նոյեմբերին ԱՄՆ-ն Իրանին առաջարկեցին ևս 127,3 միլիոն դոլար: Չնայած այս օգնություններին, ԱՄՆ-ը և Անգլիան ավելի շատ էին խանդավառված, քան Իրանը: Երբ Ուինստոն Չերչիլը շնորհավորական նամակ հղեց շահ Մոհամմեդ Ռեզային, վերջինս շատ սառն արձգանքեց դրան՝ նշելով. «Ես համոզ-

ված են, որ Դուք արեցիք այն ամենը, ինչ հնարավոր էր, որպեսզի հասնեք պատվաբեր համաձայնության»<sup>40</sup>:

Ի՞նչ ստացան ԱՄՆ-ը այս ամենից: Իրենց պրագմատիկ քաղաքականության շնորհիվ Միացյալ Նահանգները, որոնք մինչև երկարոյ համաշխարհային պատերազմը ըստ էության մասնակցություն չունեին իրանական նավթի շահագործման գործում, անգլո-իրանական նավթային անհամաձայնության ժամանակ, դառնալով «միջնորդ», կարողացան ձեռք բերել Իրանի «սև ոսկու» 40%-ը: Բացի այդ, Իրանում իրենց «մասնագետների» ներկայությունը, հնարավորություն էր ստեղծում հարկ եղած դեպքում միջամտել Իրանի ներքին գործերին և ազդեցության հավելյալ լծակներ ձեռք բերել այդ երկրի քաղաքական և տնտեսական կյանքի նկատմամբ:

Որպես ամփոփում, ցանկանում ենք մեջ բերել Մ. Մուսադեհի հուշերից մի հատված, որով նա հերքում է իրեն ուղղված բոլոր մեղադրանքները, ապացուցելով, որ ինքը ոչ՝ ԱՄՆ-ի, ոչ՝ էլ առավել ևս Խոյնիդային Միության կամակատարը չի եղել, և որ իր կյանքի ու գործունեության ամենակարևոր գործոնը եղել է անսահման սերն ու նվիրվածությունը հայրենիքի հանդեպ. «Ես իմ կառավարման ամբողջ ընթացքում, Իրանի քաղաքականության մեջ ազդեցիկ օտար պետություններից ոչ մեկի հետ, լինի Ամերիկան, Անգլիան քե Խորհրդային պետությունը, ոչ մի համաձայնություն չեմ ունեցել և իմ պետության ու հայրենիքի շահերը ամեն ինչից, մոյնիսկ ինձնից վեր եմ դասել, և այն, ինչ ասել ու արել եմ, ամբողջը եղել է Իրանի ժողովրդի օգտին և այն, ինչ էլ այս երկրում իմ դեմ տեղի ունեցավ, օտար երկրների ծրագրով էր ու իրականացավ իմ որոշ հայրենակիցների կարգադրությամբ»<sup>41</sup>:

Ամփոփելով վերը շարադրվածը, կարելի է նշել, որ Իրանը, հանձինս Մուհամմեդ Մուսադեհի, փորձ արեց պաշտպանել իր երկրի շահերը՝ արդարացիորեն հարգանք պահանջելով ինքնուրույնության հանդեպ: Փորձեց ազգայնացնել այն, ինչ գտնվում էր իր երկրի ընդերքում և շահույթ ստանալ դրանից՝ ի քայրօրություն իր ժողովրդի՝ ձեռքազատվել գերտերությունների ճիրաններից:

Սակայն այս պայքարում Իրանը պարտություն կրեց, քանի որ վճռական պահին մասնատվեց և ազգային միության գաղափարին փոխարինելու եկան միջկուսակցական նեղ շահերը:

### ISKANDARYAN GOHAR

#### THE USA POSITION IN THE ANGLO-IRANIAN OIL DISPUTE (Summary)

The paper deals with the position of the US in respect with the dispute of Anglo-Iranian Oil Company, which began in 1950-1951. After the Second World War the US needed new markets, oil fields, and strategic environments. Using the debate between Iran and Great Britain, the US proposed itself as a "mediator" and, due to that, got the 40 per cent of the Iranians oil. Furthermore, their own "specialists" were to work in Iran oil industry. In addition, the presence of "experts" in Iran allowed to interfere with its internal affairs. As an issue in the

USA policy, the oil crisis in Iran was inherited by Eisenhower from the Truman presidency. The two administrations gave a different emphasis to the crisis. While Truman's concern was focused primarily on the nationalization of the Iranian oil industry, Eisenhower was faced with the constitutional crisis in Iran, that had originated in the oil issue, but evolved into a struggle for political control over the country.

#### ԾԱՆԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. О'Коннор, Империя нефти, Москва, 1958, с. 364.
2. Иран. Очерки новейшей истории, Москва, 1976, с. 171.
3. М.Нишанов, Антиимпериалистическое движение в Иране (1951-1953), Ташкент, 1973, с.11.
4. М.В. Попов, Американский империализм в Иране в годы Второй Мировой Войны, Москва, 1956, с. 221.
5. М.Нишанов, Антиимпериалистическое движение в Иране, с. 17.
6. М.В. Попов, Американский империализм в Иране в годы Второй Мировой Войны, с. 218.
7. О'Коннор, Империя нефти, с. 460.
8. М.Нишанов, Антиимпериалистическое движение в Иране, стр 37:
9. Ռազմարանի ստանվեց «Ֆեդայան-ն իսլամ» խմբակցության անդամներից մեկի կողմից (Ervand Abrahamian, Iran Between Two Revolutions, New Jersey, 1983, p. 268.):
10. Л.Элвелл-Саттон, Иранская нефть, Москва, 1956, с. 370-371.
11. George Lenczowski, The Middle East In World Affairs, New York, 1956, p. 138.
12. О'Коннор, Империя нефти, с.458.
13. Мемуары Антони Идена, "Международная жизнь", N 4, 1960, с. 131.
14. Иран. Очерки новейшей истории, с. 199.
15. George Lenczowski, American Presidents and the Middle East, London, 1990, p. 36.
16. ԱՐՄՄԿՕ-Արարա-Ամերիկյան Նավթային Ընկերություն: И.В. Самыловский, Экспансия Американского империализма на Ближнем и Среднем Востоке, Москва, 1955, с. 51.
17. Л.Элвелл-Саттон, Иранская нефть, с. 281-282.
18. А.Г.Стамболцян, Внутренняя политика правительства национальной буржуазии Ирана 1951-1953 гг., Ереван, 1984, с. 42.
19. G.Lenczowski, The Middle East In World Affairs, p. 193:
20. Л.Элвелл-Саттон, Иранская нефть, с. 284-255:
21. James A. Bill, The Eagle and the Lion.The Tragedy of American-Iranian Relations, London, 1988, p. 75.
22. Иран. Экономика, история, историография, литература (сборник статей), Москва, 1976, с. 48, Политика США на Ближнем и Среднем Востоке (США и страны СЕНТО), Москва, 1960, с. 255.
23. Л.Элвелл-Саттон, Иранская нефть,с. 290.

24. МНшанов, Антиимпериалистическое движение в Иране, с. 110.
25. Ervand Abrahamian, Iran Between Two Revolutions, 1983, p. 276.
26. О'Коннор, Империя нефти, с.280.
27. Հայ-ի նման ասրիյա-ի քաղաքներ-ի խարեշի, (Արաարին հարաբերությունների պատմություն), համար 4, Թեհրան, 1379 (2000թ.), էջ 92-93(պարսկ.):
28. Материалы по Востоку, Ташкент, 1966, с. 39.
29. Ervand Abrahamian, Iran Between Two Revolutions, p 279.
30. Դորրոր Մոհամմեդ Մոսադեղ, Խարերար վա քաղեմարն դորրոր Մոհամմեդ Մոսադեղ, (Մոհամմեդ Մոսադեղի հուշերը), Լոնդոն, (իրաւ. քիւր չի նշվում), էջ192(պարսկ.):
31. Иран. Очерки новейшей истории, с. 244.
32. Peter Avery, Modern Iran, London, 1965, p 438.
33. И.В. Самыловцкий, Экспансия американского империализма на Ближнем и Среднем Востоке, с. 56.
34. Л.Элвелл-Саттон, Иранская нефть, с. 394.
35. Նույն տեղում, էջ 399:
36. 1907թ. փետրվարին «Ռոյալ Դ-աալ» («Նիդերլանդական քաղաքական» և անգլիական «Շեյք» ընկերությունները (վերջինս այդ ժամանակ ֆինանսական ծանր վիճակի մեջ էր գտնվում) ստորագրեցին վերջնական միաձուլման մասին համաձայնագիր: Ըստ որի, արժեքների 60%-ը պատկանում էր «Ռոյալ Դ-աալ»-ին և միայն 40%-ը «Շեյք»-ին /Ա.Բ. Բուրսենկո, Нефтяные войны (конец XIX-начало XXв.), Ленинград, 1985, стр 94. /:
37. Peter Avery, Modern Iran, p 453-454.
38. Нефтяная промышленность капиталистических стран Западной Европы, Ближнего и Среднего Востока, Дальнего Востока, Канады и Латинской Америки, Москва, 1959, стр125.
39. Иран. Проблемы экономического и социального развития в 60-70-е годы, М 1980, стр 67.
40. Л.Элвелл-Саттон, Иранская нефть, стр 406.
41. Դորրոր Մոհամմեդ Մոսադեղ, Խարերար վա քաղեմարն դորրոր Մոհամմեդ Մոսադեղ, էջ 192:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՆՈՎԵԼ. ԺԱՆՐԻ ՉԵՎԱԿՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻՅԱԼՆԵՐՆ  
ՈՒ ԿԱԶՄԱԿՈՐՄԱՆ ԳՈՐԾԵՐԹԱՅԸ

«Նովելն հարագատ է ժողովրդին ինչպես ոչ մի այլ ժանր, որ գոյութուն ունի ժամանակակից արաբական գրականության մեջ, և այն ամենալայն ճանաչումն ունի», - գրում է Մահմուդ Ամին ալ-Ալիյիմ<sup>1</sup>:

Ժամանակակից նովելի առաջին արգասիքների ի հայտ գալը արաբական արձակ գրականության մեջ վերաբերում է 19-րդ դարի 80-ական թվեթին: Սակայն միայն 20-րդ դարի 30-ական թվականներին նովելը, ստանալով ռեալիստական շարադրանքին հատուկ գծեր, դառնում է առանձին ինքնուրույն ժանր և մի քանի տասնամյակների ընթացքում մնում ամենատարածվածն ու սիրելին: Այն բավականին ճման է արաբական գրականության ավանդական ժանրերին, ինչպիսիք են մականման և նաղիրան: Խրատական ու զվարճալի այս պատմվածքների կորիզը սովորաբար հանդիսանում էին հերոսի սրամիտ և դիպուկ արտահայտությունները: Հաճախ հերոսը պատմական անձ էր ներկայացվում, որին ավանդույթը վերագրում էր այս կամ այն թևավոր խոսքերը: Այս տեսակ պատմվածքների առանցքը հերոսի հնարամտության, դժվար իրավիճակներում արագ ելք գտնելու, բանավեճը շահելու, հակառակորդին տեղին ասված մի քառով թևաքափ անելու ունակության, մտքի ճիշտ բռնչքի օգնությամբ սեփական կյանքը փրկելու, խալիֆին զվարճացնելու և փորձաքննությունից խուսափելու քայլերի մի միասնություն էր: Սակայն իր իրական հաջողությունը նովելը կապում է ժանրի նորության և թեմատիկայի ակտուալության հետ: 19-րդ դարի վերջի, 20-րդ դարի սկզբի նոր սոցիալ-քաղաքական և մշակութային իրողությունը արաբական գրականության առջև նոր խնդիրներ էր դնում, առաջ էր քաշում մարդու, անձի պատկերման նոր մոտեցում: Այս խնդիրների լուծման համար Նահդայի միջոցով վերածնված ավանդույթների վրա հիմնվելը բավական չէր: Այսպիսով, եվրոպական գրականության փորձին դիմելը բնական և անխուսափելի ճանապարհ էր:

Եգիպտոսում նոր ժանրի հիմքում հին և նոր՝ ավանդական ու ժամանակակից գրական նորմերի, մեթոդների և հնարքների միախառնումն էր: 19-րդ դարի 80-ական թվականներին այս սինթեզի քիչ մակատելի գործընթացը հետագայում արագանում է: 19-րդ դարի վերջից մինչև Առաջին աշխարհամարտ, այս գործընթացը կարելի է պայմանականորեն բաժանել երկու փուլի: Առաջինի համար խորհրդանշական է ավանդական սկզբնաձևի գերիշխող դերը, որի սահմաններում տեղավորված է նոր ոճ, նոր բովանդակություն: Երկրորդ փուլի ընթացքում արդեն նկատվում է հեռացում ավանդական նորմերից և գեղարվեստական արտահայտման նոր միջոցների և ձևերի կիրառման ձգտում:

Եգիպտական նովելի զարգացման առաջին քայլերից դարձավ կարճ պատմվածքի՝ մականմանի դասական ձևի կիրառումը: Եգիպտացուն հոգեհարազատ ձևով են գրված Ալի Մուբառաթի «Ալամ ադ-Դիմը», Իբրահիմ ալ-Մուվեյյիի «Մուսա իբն Իսամի պատմվածքը» և այլն: Ժամանակա-

գրական առումով առաջինը համարվում է Ալի Մուրադաբի «Ալամ ադ-Դինը», որը հրատարակվել է 1882թ. Ալեքսանդրիայում<sup>2</sup>:

Գլխավոր հերոսը, որի անունով է վերնագրված նովելը, եգիպտացի շեյխ է, որը ճանապարհորդում է իր որսյալ Բուրխան ադ-Դինի և անգլիացի մի արևելագետի հետ Եգիպտոսով և մի քանի եվրոպական երկրներով՝ զննելով այդ երկրների տարբեր անկյունների կյանքը, որն էլ հետո քննարկումների և համեմատությունների նյութ է դառնում:

Այս ստեղծագործության մեջ իրենց արտացոլումն են գտել Եվրոպայի և Եգիպտոսի կյանքի տարբեր կողմերը՝ կենցաղը (հարսանյաց արարողությունների նկարագրություններ, եվրոպացիների և եգիպտացիների մի շարք տոներ, ավանդույթներ), առևտուրը, արյունաբերությունը, գյուղատնտեսությունը և այլն: Մեծ տեղ են գտել նովելում նաև լուսավորությանը վերաբերող խնդիրներ<sup>3</sup>:

Սրան հաջորդում է Իբրահիմ ալ- Մուվեյլիհիի ստեղծագործությունը՝ «Մուսա իբն Իսամի պատմվածքը կամ աշխարհի հայելին» («Հադիս Մուսա իբն Իսամ աու միռաբ ալ-ալամ»), որն հրատարակվել է 1899թ. «Միսլաբ ալ-Շառկոյում»: Սակայն այն ամհայտ մնաց ընթերցողների լայն շրջանակին, քանի որ հրատարակվել էր միայն ստեղծագործության առաջին մասը: Ստեղծագործության մեջ սուր է դրված 19-րդ դարի վերջի եգիպտական իրողությունը՝ Եգիպտոսի և եգիպտացու վիճակը անգլիական բնառակալության՝ ներքո: Իբրահիմ ալ- Մուվեյլիհին քննադատում է ոչ միայն ընդհանուր առումով ժամանակակից իրողությունն ու մարդկային էությունը, այլև դրա կոնկրետ արտահայտումներն ու օրինակները: Առավել սրտիցմբ էն ներկայացվում այն հատվածները, որտեղ նա համեմատականներ է անցկացնում եգիպտացիների և անգլիացիների միջև<sup>4</sup>: Նույն ոգով է գրված նաև Իբ-բահիմի որսյալ՝ Մուհամեդ ալ-Մուվեյլիհիի «Իսա իբն Հիշամի պատմվածքը կամ Ժամանակի մի հատված» («Հադիս Իսա իբն Հիշամ աու Ֆատուա մին ազ-զաման») ստեղծագործությունը, որն իբրև առանձին ստեղծագործություն հրատարակվել է 1907թ. ( մինչ այդ այն հրատարակվել է փոքրիկ մակամաների տեսքով 1906թ. «Միսրախ ալ-Շառկոյում»): Շատ արար գրականագետներ գտնում են, որ սյուժեն վերցված է Նուրամի այն սուրայից, որտեղ պատմվում է յոթ քնած նախահայրերի մասին: Սակայն, ինչպես նշում է Է. Ա. Ալլի-Չադեն, ավելի ճիշտ կլիներ տեսնել միայն սյուժեի քերական մեամություն, քանի որ վերցված է ընդհանուր մոտիվը՝ մայրը, որն արթնանում է քաղում տարիներ տևած քնից և ընկնում է օտար միջավայր:

Ալ-Մուվեյլիհիի հերոսը երազում տեսնում է, որ լուսնկա մի գիշեր գրոսնում է գերեզմանոցում գերեզմանաքարերի շարանների միջով՝ խորհելով կյանքի իմաստի և դժվարությունների մասին: Անսպասելիորեն նրա առջև քացվում է մի գերեզման, և մի մարդ է հայտնվում: Նրա խոսքերից Իսա իբն Հիշամը իմանում է, որ իր առջև վաղուց մահացած մի փաշա է, որն եղել է Մուհամեդ Ալլիի զինակիցներից: Իսամ ուղեկցում է փաշային Կահիրե և Ալեքսանդրիա, օգնում է ծանոթանալու նոր Եգիպտոսի քաղաքներին, գրույցներ վարում նրա հետ: Փաշան քննադատությամբ է ընդունում նոր Եգիպտոսի կյանքն ու իրականությունը, բոլոր չարիքների պատճառը տեսնում է

Անգլիային ենթարկվելու մեջ, Եվրոպային մամական փորձերում՝ հիշեցնելով ընթերցողին իր ժամանակաշրջանի Եգիպտոսը:

Նաղիմ Ալիի արդարացի գնահատականի համաձայն՝ «Իսա իրն Հիշամի պատմվածքը» նոր արարական գրականության լավագույն աստիճինի ստեղծագործություններից մեկն է համարվում<sup>5</sup>: Եվ իրոք, այն պայտմակում է 19-րդ դարի վերջի եգիպտական իրականության և հասարակության կտրուկ քննադատություն: Հեղինակը վաղովված է քառի քարքերի քայքայմամբ, դատավորների անարդարությամբ, հարուստների անկշտությամբ և այլն: Ալ-Մուվեյլիին մկարագրում է կենցաղային մի շարք դրվագներ տարբեր խավերի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ ներկայացնելով նրանց կյանքն առ ժամանակաշրջանի Եգիպտոսի տարբեր անկյուններում: Նշենք նաև, որ այս ստեղծագործությունը մտել է նույնիսկ հանրակրթական դպրոցների պարտադիր ծրագրի մեջ, և նրա օրինակով դիտարկվել է ոչ միայն ստեղծագործության խոր իմաստը, այլև նրա մաքուր արաբերեն լեզուն և գեղեցիկ շարադրանքը:

Այսպիսին էին վաղ ժամանակաշրջանին պատկանող նովելները՝ գրված ճանապարհորդական օրագրերի և Եգիպտոսին հուզող հիմնահարցերի շուրջ գրույցների և խրատական օրինակների կոմպոզիցիայով: Այս օրինակներին կարելի է ավելացնել նաև Հաֆիզ Իբրահիմի «Սատիիի գլշերները» («Լալալի Սատիի», 1906), Աիշա Թեյմուրի նովելները և այլն:

Իբրև գրականության զարգացման և նովելի ժանրի ձևավորման նախադրյալ է հանդես գալիս նաև վերոհիշյալ ժամանակաշրջանում քայքայմաչական գործի կտրուկ զարգացումը: Սակայն դիտարկենք, թե ինչպես էին տեղի ունենում այս քարգմանությունները: Գրական քարգմանությունների հետ մեկտեղ տարածում են ստանում նաև այսպես կոչված «ազատ քարգմանությունները», երբ քարգմանիչը, ծանոթանալով քարգմանվող ստեղծագործության բովանդակությանը, փաստորեն գրում էր իր սեփական ստեղծագործությունը՝ համաձայն եգիպտացի ընթերցողի պահանջների: Նա փոխում էր շատ դեպքերում և՛ գործողության վայրը, և՛ գլխավոր հերոսներին անունները՝ ավելի ադապտացնելով եգիպտական հասարակությանը: Թարգմանիչը (ավելի արդարացի կլինի կոչել նրան հեղինակ - Ն.Կ.) ստեղծագործությանը երբեմն ավելացնում է իր կողմից գրված պարբերություններ և, ընդհակառակը, իր հայեցողությամբ կրճատում է շատ պարբերություններ:

Դիտարկենք կոնկրետ մի օրինակ Մուստաֆա Լուտֆի ալ-Մանֆալուտիի քարգմանություններից: Օտար լեզուներին անմանոք լինելը չէր կանգնեցնում նրան: Իր համար քարգմանում էին միջնորդները, շատ անգամ բանավոր կամ արտահայտում էին ստեղծագործության հիմնական պոմեն, իսկ նա սյուժեի կմախքին հենվելով՝ ստեղծում էր իր շարադրանքը:

Ե. Ռոստանի «Սիլրանո դե Բեթեբակ» պիեսի քարգմանության մասին ալ-Մանֆալուտին գրել է, որ չնայած բնագրի հետ որոշ տարբերությունների, նա պահել է հիմնական գաղափարն ու ոգին: Թարգմանված տարբերակում պիեսը կոչվել է «Բանաստեղծը կամ Սիլրանո դե Բեթեբակ» («Աշ-Շալա աու Սիլրանո դե Բեթեբակ»): Ստեղծագործությունը, ըստ նրա խոսքերի, ֆրանսերենից քարգմանել է Մուհամմադ Աբդ աա-Մալամ ալ-Ջուդեյին և խնդրել նրան, «հատելով ավելորդ ճյուղերը՝ դարձնել քատերական քեմա-

դրական պիես»։ Ալ-Մանֆալուտին կատարել է նրա խնդրանքը և ապա պիեսը դարձրել է մի պատմվածք, որպեսզի ընթերցողը հմարավորություն ունենա տեսնելու քոթի վրա այն, ինչ կտեսնի հանդիսատեսը թատրոնում<sup>6</sup>։ Եվ քանի որ ալ-Մանֆալուտին իր ելույթամբ շատ խորը զգացմունքային անձնավորություն էր, նրա թարգմանությունները ստանում էին յուրահաւատկ նուրբ սենսիվենտալ նրբերանգ։ Վերցնենք բոլորիս քաջ հայտնի Ա. Դյումայի «Կամելիազարդ տիկինը» ստեղծագործությունը։ Այսպիսի անհատական տարբերակում այն տրոհվում է երկու առանձին մասերի։ Առաջին մասը կոչվում է «Չոհր» («Աղ-Դահլիյա»), այն պարունակում է ստեղծագործության հիմնական բովանդակությունը, իսկ երկրորդը կոչվում է «Մարգարիտայի օրագիրը» («Մուգաքքառաք Մադառեք»), որն այստեղ գրավում է ողջ ստեղծագործության կեսը և լի է ալ-Մանֆալուտի կողմից ավելացված մոտ-րումներով և հիշողություններով, ոյունք գրի է առել Մարգարիտան։ Շարա-դյանքը վարվում է երրորդ դեմքից, որը և ցույց է տալիս, որ արաբ ընթեր-ցողին ավելի հարազատ է օրագրային պատմվածքի տարբերակը, ինչպես մենք նշել ենք վերևում։ Այնուամենայնիվ, «Կամելիազարդ տիկինը» առավե-լագույնն մոտ է ներկայացված բնագրին, սակայն իրադարձությունները տրվում են համաձայն ժամանակագրական ընթացքի։ Հեղինակը թարգմա-նելիս երանգավորում է ստեղծագործությունը յի պաշտպան վայելարեկված և ցածր կնոջ՝ արդարացնելով նրան և մեղադրելով դրանում հասարակության բարբերը։ Փոխված է նաև հերոսուհու նամակի տեքստը։ «Այս վերջինն է, ինչ կա մեր մեջ, Արման։ Մի փորձիր վերսկսել մեր հարաբերությունները։ Եվ մի հարցրու ինձ ոչինչ պատճառի մասին։ Պատճառ չկա, բացի նրանից, որ ես այչպես եմ ուզում ... Մնաս բարով»<sup>7</sup>։

Զմայած բնագրում Մարգարիտան գրում է, որ պատրաստվում է դառնալ ուրիշի սիրուհին, և որ Արմանը պարտավոր է վերադառնալ իր հոր և իր ընտանիքի մոտ, խնդրում է ներել իր պատճառած տառապանքները և շնորհակալություն հայտնում իր կյանքի երջանիկ պահերի համար։

Սակայն վերադառնաճք նովելի ստեղծման մախաղոյալներին։ Հենց այն փաստը, որ «Կամելիազարդ տիկինը» մասնատվում է երկու մասի, խոսում է այն քանի մասին, որ արաբ ընթերցողին հարկավոր էր կարճ, լակոնիկ ստեղծագործություններ, որոնք մոտ կլինեին ընթերցողի հոգում, կբարձրացնեին նրա մտքին համահունչ պրոբլեմներ և այդ ամենը կներկայացվեր առավելագույն գեղեցկությամբ։

Փաստորեն, եզիպտական նովելի ստեղծման և կյանցման գործըն-թացը տեղի էր ունենում 19-րդ դարի վերջի 20-րդ դարի սկզբի լայն սոցիալ-քաղաքական և մշակութային փոփոխությունների ժամանակաշրջանում։ Սկսած 20-րդ դարի 20-ական թվականների կեսից եզիպտական կարճ պատմվածքները սկսում են ձեռք բերել ռեալիստական ուղղվածություն։ Մու-համմեդ Թեյմուրի պատմվածքներում սկսեցին հայտնվել քաղմախավ հա-սարակության անդամներ, ինչպես պրոբլեմներով և դժբախտություններով տարված աղքատներ, այնպես էլ հարուստ, շքեղ կյանքով ապրող անբա-նեք։ Ինչենք նրա «Նախակրթական դպրոցի դասը» («Դաուս ֆիլ-բուքբա»), «Մատաուրիյա սրճարանում ռամազանը» («Ռամադան ֆի կոլավա Մատա-տիյա »), «Աղբատներին՝ ձրի» («Լիլ-ֆուքառա մաջանան») և այլն։



Իսա և Շիխասսա Ուրեյդ եղբայրների ստեղծագործությունները հիմնականում կանանց իրավունքների պաշտպանությանն են վերաբերում՝ «Ես քո համար եմ...» («Էմա լաբա...»), «Կանանց Լուրյունը» («Էմ-մազա ան-նիսանիյյա»):

Թեյմուր և Ուրեյդ եղբայրների ստեղծագործություններից շատերը կարելի է արդեն համարձակորեն դասել ռեալիստական մոդելի շարին և եզրակացնել, որ 20-րդ դարի առաջին քառորդին արդեն ստեղծվել էին բավականաչափ նախադրյալներ ռեալիստական մոդելի ժանրի կայացման համար: Մինչ այս ժամանակաշրջանը ընկած մոտ կես դար տևած շրջանի նշանակությունը կայանում է նրանում, որ կարճ գեղարվեստական շարադրանքի ձևը սկիզբ է առնում միջնադարյան մոդելից՝ իր գաղափարական և գեղարվեստական հնարավորություններով սահմանափակ, անցնում կիսագեղարվեստական և կիսահրապարակախոսական պատմվածք-ակնարկի միջով, կլանում քաղցմանչության ձեռք բերած եվրոպական առանձնահատկությունները և դառնում առանձին գեղարվեստական ռեալիստական ստեղծագործություն իր բոլոր ժանրային վառ արտահայտումներով: «Նրոնիշյալ հեղինակները խրենց ստեղծագործական ջանքերով հիմք դրեցին եզիպտական գրականության մոր փուլին, երբ գրական ասպարեզում հայտնվեց Մահմուդ Թեյմուրը, որը և համարվում է արաբական գրականության մեջ մոդելի ժանրի հիմնադիրը:

#### KARAPETYAN NAIRA

#### EGYPTIAN NOVEL THE PRECONDITIONS OF THE FORMATION OF THE GENRE OF NOVEL AND THE PROCESS OF ITS ESTABLISHMENT (Summary)

At the third decade of the XX century the Novel got the characteristic lines of a realistic work and became a separate genre in the Egyptian Literature. The amalgamation of the new and the old, the up-to-date and the ancient, came as the basis of the new genre. Also European Literature, with its translations into Arabic, helped the process of the formations of the genre. The first Egyptian novel is Ali Moubarak's "Alam ad-Din". But the founder of the new genre is Mahmud Teymour.

#### ՄԱՀՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Махмуд Амин ал-Алим. Новые ценности в современной египетской литературе, "Современная арабская литература", М, 1969, с. 54.
2. Крымский А. Е., История новой арабской литературы 19 начало 20 в., М, 1971, с. 199-200.
3. Долинина А. А., Очерки истории арабской литературы нового времени. Египет и Сирия. Публицистика 1870-1914гг., М, 1968, с. 34.
4. Али-Заде Э. А., Египетская новелла. Зарождение и формирование жанра, "Наука", 1974, с. 42.
5. 'Adi Nadim, Tarikh al'adabul arab, Haleb, 1954, p. 542.
6. Al Manfaluti Mustafa Lufti, Asha'ir au Siranu di Berjerak, Cairo, 1955, p. 4-5.
7. Al Manfaluti-Mustafa Lufti. Al'ibrat, Majmu'ati ruwayat kghasira, Cairo, 1955, p. 125.

**ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԻՍՐԱՅԵԼԻ ԳՈՐԾՈՐԸ ԼԻՔԱՆԱՆՅԱՆ  
ԳՐԱԺԱՄՈՒՄ (1975-1990 թթ.)**

1960-ականներին Լիբանանը ապրում էր խորը ճգնաժամ: Այդ ճգնաժամի արդյունքում էլ, որ 1975թ. այստեղ բռնկվեց քաղաքացիական պատերազմ, որը որոշ ընդհատումներով տևեց մոտ 15 տարի:

Իրենց հետագոտորյուններում մեր կողմից ուսումնասիրվող խընդրին անընդամենը անդամակցել են Ն. Հովհաննիսյանը<sup>1</sup>, Ռ. Կարապետյանը<sup>2</sup>, Ս. Ստոկլիցկինը<sup>3</sup>, Լ. Վոլմուկը<sup>4</sup>, Պ. Սիլը<sup>5</sup>, Ի. Ռաբինովիչը<sup>6</sup>, Հ. Քոքքանը<sup>7</sup>, Զ. Սալիբին<sup>8</sup>, Դ. Գորդոնը<sup>9</sup>, Ա. Դավիշանը<sup>10</sup>, Զ. Բադրադունին<sup>11</sup>, Ե. Պիլիկինը<sup>12</sup> և այլք:

Ճգնաժամը հիմքում ուներ մի շարք գործոններ՝ քաղաքական, սոցիալական, տնտեսական և կրոնական: Երկրի յուրահատուկ քաղաքական կառուցվածքը, որը հիմնված է կրոնա-դավանական սկզբունքի վրա, նրա սոցիալական և տնտեսական խնդիրները, 1960-70-ականներին լիբանանյան մուսուլմանների, հատկապես դրուզների և շիաների քաղաքական ակտիվացումը, ինչպես նաև 1960-ականներին պաղեստինցիների մեծ ներհոսքը Լիբանան (մասնավորապես Հորդանանի 1970թ. ճգնաժամից հետո, երբ ՊԱԿ-ը, Յ. Արաֆաթի գլխավորությամբ, հիմնավորվոց Լիբանանում) նպաստեցին երկրում հաստատված փխրում հավասարակշռության խաթարվումը, առաջացրեցին ուժերի պառակտում և բևեռացում: Սյ լողմից լիբանանյան ժախեղ՝ ազգային-ազգային-հայրենասիրական ուժեր, որոնք միավորվել էին «Ազգային շարժման»՝ Հարաքաթ ալ-Վաթանի մեջ, սերտորեն աջակցում և օժանդակում էին պաղեստինցիներին ու պահանջում էին սոցիալական, քաղաքական և տնտեսական քաբեփոխումներ, իսկ մյուս կողմից լիբանանյան աջեր՝ «Լիբանանյան ճակատ», որը դեմ էր Լիբանանում պաղեստինցիների ներկայությամբ, նրանց աճող ազդեցությանն ու վերջիններիս կողմից Լիբանանի տարածքի օգտագործմանը Իսրայելի դեմ պայքարում: Բացի այդ, լիբանանյան քրիստոնյաները, մասնավորապես մարոնիները, փորձում էին սատակ մուսուլմանների քաղաքական ակտիվացումը և դրանով իսկ անփոփոխ պահպանել Լիբանանի հատուկ քրիստոնեական բնույթն ու նրանում քրիստոնյաների արտոնյալ կարգավիճակը: Հարկ է նշել, որ Լիբանանում սկսված քաղաքացիական պատերազմի հենց սկզբից, Արևմուտքում և Իսրայելում փորձեր էին արվում լիբանանյան հակամարտությունը ներկայացնել որպես քրիստոնյաների և մուսուլմանների միջև ծավալված կրոնական պատերազմ: Ուրվագծելով մեզն ախեմա, արևմտյան երկրներում ծախս՝ ազգային- հայրենասիրական ուժերը ներկայացվում են որպես մուսուլմանական, իսկ աջ ուժերը՝ քրիստոնեական: Սակայն այստեղ կրոնական գործոնը որևէ դեր չէր խաղում: Այս կամ այն ճակատի մեջ միավորումը տեղի է ունեցել ոչ բն ինչ-որ կրոնական, այլ որոշակի սոցիալ-քաղաքական սկզբունքների հիմքի վրա: Լիբանանյան հակամարտությունը հակասությունների մի բարդ համգույց է, որի հիմքում ընկած են քաղաքական միտումներ<sup>13</sup>:

Լիբանանյան ճգնաժամում, քացի վերը նշված ներքին գործոններից, զգալի դեր ունեին նաև այնպիսի արտաքին գործոններ, ինչպիսիք են՝ Սիրիան և Իսրայելը։ Սիրիան չէր կարող անհատորոշ մնալ Լիբանանում կատարվող դեպքերին, քանի որ այն Լիբանանը մշտապես համարել է «Մեծ Սիրիայի» անբաժան մաս<sup>14</sup>։ Պաշտոնական Դամասկոսի կարծիքով, Լիբանանում կատարվող դեպքերը նպատակ ունեին շեղել Սիրիայի ուշադրությունը Իսրայելի դեմ պայքարից և մասնատել Լիբանանը, ինչը Սիրիան երբեք չէր կարող համոզվածել։ Սիրիայի գործողությունները Լիբանանում հիմնականում ուղղված էին Լիբանանի միասնականության ու անկախության, ինչպես նաև հենց իր՝ Սիրիայի ազգային անվտանգության ապահովմանը<sup>15</sup>։ Երբ Լիբանանում իրավիճակը դուրս էր եկել թույլատրելի սահմաններից, իսկ երկրի կառավարությունը կորցրել էր կատարվող դեպքերի վրա իր վերահսկողությունը, Սիրիան 1976թ. հունվարին անմիջականորեն միջամտեց Լիբանանյան իրադարձություններին՝ Լիբանան ուղղարկելով ՊԱՏ-ի (Պաղեստինյան Ազատագրության բանակի) Յարմուկ՝ բրիգադի մի քանի ջոկատներ<sup>16</sup>։ Բրիտանացի ուժերի լայնածավալ ռազմական գործողությունների արդյունքում Լիբանանը կանգնած էր մասնատման վտանգի առջև։ Սիրիան Լիբանանի միասնականության և անկախության պահպանման նպատակով ուղեգրեց «զա դալիբ վա լա մադլուբ» (ոչ հաղթող և ոչ պարտվող) կարգավորման տարբերակը։ Այսինքն՝ Սիրիային ձեռնադրել չէր ոչ Լիբանանի ծախացումը և պաղեստինյան ուժերի հաղթանակը, ոչ էլ բրիտանացի մարտիների կողմից դեկավարվող Լիբանանի գոյությունը։ Հարկ է նշել, որ Սիրիան բավական զգույշ էր վերաբերվում նաև պաղեստինցիների ներկայությանն ու նրանց ազդեցության աճին Լիբանանում։ Նրանց հաղթանակը կարող էր վտանգել Լիբանանում բազմաթիվ համայնքների խաղաղ գոյակցությունը և կրոնա-դավանական համակարգով հաստատված փխրուն հավասարակշռությունը, կարող էր բացասական արձագանք ունենալ Իսրայելում և պատճառ հանդիսանալ սիրիա-իսրայելյան նոր բախման համար, ինչը տվյալ պահին ձեռնատու և ցանկալի չէր Սիրիայի համար։ Եվ, վերջապես, ազգայնական, հեղափոխական Լիբանանը, քաղաքական և գաղափարական առումներով ավելի ձախ, քան բաասական Սիրիան, չէր կարող ընդունվել Դամասկոսի կողմից, որի համար «մրցակից բաասական Իրաքը միանգամայն բավական էր»<sup>17</sup>։ Նշենք, որ Դամասկոսը զգայական մակարդակում երբեք հակառակ չի եղել պաղեստինցիներին, սակայն Սիրիան վերջիններիս հիմնականում դիտում է որպես կարևոր և գործնական միջոց տարածաշրջանում իր սեփական շահերի իրականացման համար։ Ուստի պաղեստինցիներին արդյունավետ օգտագործելու համար անհրաժեշտ էր, որպեսզի նրանք կառավարելի լինեն՝ տվյալ դեպքում Լիբանանում։ Աստղի համար Արաֆաթը նման էր «անգոր հրետանու», որը կարող էր միայն պատերազմ հայտարարել, սակայն ի վիճակի չէր հաղթել այն։ Այնուամենայնիվ, պետք է նշել, որ Սիրիան միջամտեց Լիբանանում տեղի ունեցող իրադարձություններին ոչ թե պաղեստինցիներին կամ էլ բրիտանացիներին, այլ Լիբանանը որպես «քաղաքական միավոր փրկելու համար, որի կայունությունն ու անվտանգությունը կենսական նշանակություն ունեն հենց Սիրիայի համար»<sup>18</sup>։

Ինչ վերաբերում է Սիրիայի Լիբանան ներխուժման նկատմամբ Իսրայելի դիրքորոշմանը, ապա Իսրայելը, հետևելով ԱՄՆ-ի խորհրդին, դեմ չէր, քանի դեռ Սիրիայի գործողությունները Լիբանանում կրում էին կայունացնող բնույթ, սաստում էին պաղեստինցիներին և ուղղված չէին Իսրայելի դեմ: Պ. Սիլլ նույնիսկ նշում է գոյություն ունեցող եռակողմ ԱՄՆ-Սիրիա-Իսրայել «կարմիր գծի» չգրված համաձայնագրի մասին, որի համաձայն, Իսրայելը համաձայնվում էր Լիբանանում սիրիական ներկայության հետ մինչև հյուսիսում անցնող Սիդոն-Ջիզզին գիծը<sup>19</sup>:

Ներխուժումից կարճ ժամանակ անց Լիբանանի մեծ մասը հայտնվեց սիրիական իսկողության տակ, սակայն երկրում բախումները դեռ շարունակվում էին: Արաբական երկրների վերաբերմունքը սիրիական ներխուժման համդեպ միանշանակ չէր և նույնիսկ դատապարտվեց արաբական երկրների մասնավորապես, Եգիպտոսի կողմից, որը միանալով Իրաքին, Լիբիային և ՊԱԿ-ին, փորձեց հակազդել սիրիական գործողություններին<sup>20</sup>:

1976թ. հոկտեմբերի 18-ին Առ-Ռիադում կայացավ արաբական երկրների ղեկավարների համաժողովը, որին մասնակցեց նաև ՊԱԿ-ի նախագահ Յ. Արաֆաթը: Համաժողովի մասնակիցները քննարկեցին Լիբանանում ստեղծված իրավիճակը և կրակի դադարեցման հնարավոր տարբերակները: Այստեղ Ասադի հաջողվեց որոշակիորեն բարելավել սիրիա-եգիպտական հարաբերությունները<sup>21</sup>: Մյ թանի օր հետո, հոկտեմբերի 20-26-ին Կահիրեում տեղի ունեցավ արաբական երկրների ղեկավարների հաջորդ հանդիպումը, որի ընթացքում վավերացվեցին Ռաբատում ընդունված որոշումները, այդ թվում ամենակարևորը՝ որոշվեց կազմավորել Լիբանանում «կարգն ու օրինականությունը վերականգնելու նպատակով արաբական խաղաղապահ ուժեր», որոնք կազմված էին հիմնականում սիրիական ուժերից<sup>22</sup>: Այսպիսով, Սիրիան վերածվեց de-facto և de-jure Լիբանանում կայունություն ապահովող միակ գործնական և օրինական ուժի<sup>23</sup>:

Ինչ վերաբերում է Իսրայելի գործունի, ապա վերջինս դեռ վաղուց փայփայում էր հարավային Լիբանանում «անվտանգության գոտի» ստեղծելու ծրագրերը<sup>24</sup>: 1960-ականների վերջին Լիբանանում բնակվում էին շուրջ 250 հազ. պաղեստինցիներ, որոնք կենտրոնացած էին պաղեստինյան փախստականների 15 ճամբարներում, գտնվում էին Բեյրութի արվարձաններում և երկրի հարավում, որտեղից պաղեստինյան զինված ջոկատները հարձակումներ էին կատարում Իսրայելի հյուսիսային բնակավայրերի վրա: Այս հանգամանքը օգտագործելով՝ Իսրայելը պաղեստինցիներին պատժելու պատրվակով իրեն իրավունք էր վերապահում գրոհներ և հարձակումներ կատարել Լիբանանի տարածքում<sup>25</sup>: Դեռևս 1969թ. նոյեմբերի 3-ին Կահիրեում ստորագրվել էր համաձայնագիր, որով սահմանվել էին պաղեստինցիների իրավունքներն ու գործողություններին բնույթը Լիբանանում, որի հիմնական իմաստն այն էր, որ Լիբանանում հաստատված պաղեստինցիները իրավունք ունեին մասնակցելու պաղեստինյան դիմադրության շարժմանը, բայց և պարտավոր էին հարգել Լիբանանի անկախությունն ու անվտանգությունը<sup>26</sup>:

1968թ. դեկտեմբերին, երբ Աբեյքի օդանավակայանում պաղեստինյան ահաբեկիչների կողմից գրոհի ենթարկվեց Իսրայելի օդանավը, Իսրայել-

լի հրամանատարությունը, որպես պատասխան քայլ, կազմակերպեց օդային հարձակումը Բեյրութի միջազգային օդանավակայանի վրա, որի ընթացքում ոչնչացվեցին 13 լիբանանյան ուղևորական ինքնաթիռներ<sup>27</sup>։ Այս գլոխով Իսրայելը նպատակ ուներ վախեցնել «պաշտոնական» Լիբանանին, ամրապնդել լիբանանյան քրիստոնյաների դիրքերը և խորացնել լիբանանցիների հակակրամքը պաղեստինցիների հանդեպ։ Սակայն Իսրայելի գլոխի արդյունքում Լիբանանի իսլամ բնակչության համակրամքը պաղեստինցիների հանդեպ էլ ավելի ամրապնդվեց։ 1972թ. սեպտեմբերին, երբ Մյունխենի օլմպիական խաղերի ժամանակ, պաղեստինյան «Սև Սեպտեմբեր խմբի» կողմից իրականացվեց իսրայելցի ինը մարզիկների և մարզչի սպանությունը, Լիբանանը նորից ստիպված էր փոխհատուցել։ Երկու օր անընդմեջ իսրայելյան օդային ուժերը Միջերկրական ծովի ողջ երկայնքով ռմբակոծում էին Լիբանանի տարածքը՝ պատճառելով մեծ մարդկային կորուստներ և ավերածություններ<sup>28</sup>։ Նույն թվականից սկսած Իսրայելը վարում էր «չհայտարարված պատերազմ» Լիբանանի հարավային շրջանների դեմ։ Իսրայելը նպատակադրվել էր, հենվելով լիբանանյան քրիստոնյաների վրա, Լիբանանից դուրս քշել պաղեստինցիներին և ոչնչացնել ՊՂԱ-ն ու նրա ղեկավարությամբ։ Իսրայելի օժանդակությամբ և աջակցությամբ կազմավորվեց «Լիբանանի հարավի ազատագրման բանակը», որի կորիզը կազմում էին հիմնականում կազմալուծված լիբանանյան բանակի քրիստոնյա զինվորները և, որը Իսրայելի դրոշմաբար հարավում պատերազմում էր պաղեստինյան զինված միավորումների դեմ<sup>29</sup>։ 1973թ. ապրիլի 10-ին, իսրայելյան հատուկ ծառայությունների 30 աշխատակիցներ, ժամանելով Բեյրութ և խմբերի բաժանվելով, կազմակերպեցին մի շարք հարձակումներ. այդ թվում՝ Բեյրութի Վերդեն փողոցում իրականացրեցին ՊՂԸ-ի ակամավոր գործիչներ Մուհամեդ Նաջարի, Արվանի, Ջամալ Նասերի սպանությունները<sup>30</sup>։ Իսրայելի ակտիվությունը Լիբանանում էլ ավելի աճեց, երբ 1977թ. մայիսին Իսրայելում իշխանության եկավ «Լիկուդ» աջ կուսակցությունը։

1978թ. սկզբին ողջ Լիբանանը, այդ թվում և Բեյրութը, բաժանված էին երկու մասի։ Կառավարությունը փաստորեն կորցրել էր երկրում կատարվող դեպքերի վրա իր հսկողությունը։ Աճել էին աջ քրիստոնեական ուժերի թվը, որոնք աջակցում էր Իսրայելը և, որոնք ավելի հաճախակի էին ձեռնարկում զինված բախումներ միջառաքական ուժերի վրա, որոնք կազմված էին հիմնականում սիրիական զորամիավորումներից<sup>31</sup>։

Թեև Լիբանանի հարավում գտնվող պաղեստինյան ջոկատները զսպվում էին հիմնականում լիբանանյան բանակի կողմից, այնուամենայնիվ, երբեմն հարձակումներ էին իրականացնում Իսրայելի հյուսիսային բնակավայրերի վրա։ 1978թ. մարտին պաղեստինյան ջոկատներից մեկի հարձակման արդյունքում մեծ թվով իսրայելցիներ գոհվեցին։ Ի պատասխան, մարտի 15-ին իսրայելյան բանակը ներխուժեց հարավային Լիբանան։ Սիրիական պաշտոնական աղբյուրներն իսրայելյան ներխուժումը հիմնավարեցին հետևյալ կերպ. «Այն Սիրիայի և Պաղեստինյան հեղափոխության դեմ ուղղված ամերիկա-սիոնիստական քաղաքական վերջին քայլերից մեկն էր հանդիսանում»<sup>32</sup>։ Սիրիան անմիջապես արձագանքեց այս ներխուժմանը և Արաբական Ջսպման ուժերի տրամադրության տակ դրեց երկրի օդային

ուժերը, իսկ Ասադը հայտարարեց, որ «Սիրիան մշտապես կանգնած կմնա պաղտոստինյան հեղափոխության կողքին», այն համարելով իր «ազգային պարտքի մի մասը»<sup>33</sup>։ 1978թ. սկսած Սիրիական զորքերը Լիբանանում որոշակի իսկականություններ ունեին երկրի մայրին ղեկավարության հետ, որոնք համագործակցելով և օժանդակություն ստանալով Իսրայելից, ուղղակիորեն պայքարում էին Լիբանանում սիրիական ներկայության դեմ։ Այդուհանդերձ, սիրիական ուժերը Լիբանանում հաջողությամբ կատարում էին իրենց հիմնական խնդիրը՝ հակազդել իսրայելական հարձակմանը և կանխել Լիբանանի մասնատումը։

1978թ. մարտի 15-ին իսրայելյան 30 հազ. բանակը ներխուժելով հարավային Լիբանան՝ գրավեց մինչև Լիտանի գետն ընկած շրջանները (երկրի ողջ տարածքի 1/10-ը մասը)։ Այս քայլը Իսրայելը իրականացրեց Վաշինգտոնի խնայողությամբ։ Լավատեղյակ իսրայելյան մեկնարան Ա. Կապելյուկը նշեց, որ «այդ հարձակումը իրականացվեց այն բանից հետո, երբ ԱՄՆ-ն հասկացրեց, որ դեմ չի լինի, եթե միայն իսրայելյան ներխուժումը դուրս չգա «թույլատրված սահմաններից»»<sup>34</sup>։

Լիբանանի և այլ արաբական պետությունների պահանջով հրավիրվեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ, որը 1978թ. մարտի 19-ին ընդունեց բիլ 425 որոշումը՝ Լիբանանում կրակի դադարեցման և իսրայելյան զորքերի անմիջապես դուրս բերման մասին։ Որոշվեց նաև կազմավորել ՄԱԿ-ի ժամանակավոր ուժեր՝ 4000 մարդ, որոնք պետք է մեկնեին Լիբանան։ Այդուհանդերձ, Իսրայելի զորքերը Լիբանանի տարածքը լրեցին միայն 1978թ. հունիսին և սահմանի երկայնքով 10կմ գոտին փոխանցեցին ոչ թե ՄԱԿ-ի ուժերին, այլ լիբանանյան բանակի նախկին մայրու Հադդադին<sup>35</sup>։ Այսպիսով, Իսրայելի ղեկավարությունը իրականացրեց իր վաղուց փայփայած ծրագիրը՝ ստեղծելով «անվտանգության գոտի» Լիբանանի տարածքում։ 1979թ. ապրիլի 19-ին Հադդադը իր կողմից վերահսկվող տարածքում (850կմ, մոտ 100 հազ. բնակչությամբ, որից 40 հազ. քրիստոնյաներ, իսկ 60 հազ.՝ մուսուլման շիաներ), հռչակեց «Անկախ Լիբանան» պետությունը։ Ողջ զինամթերքը, այդ թվում տանկեր և ծանր հրետանի, մատակարարվում էր Իսրայելի կողմից։ Թե՛ Լավիվը մույնիսկ վարձատրում էր Հադդադի զինվորներին<sup>36</sup>։

Հարկ է նշել, որ Լիբանանում ՊԱԿ-ի գործողություններին հակահարված տալու ժամանակ իսրայելյան բանակը փորձում էր խուսափել սիրիական ուժերի հետ ուղղակի բախումներից։ 1978թ. օգոստոսին Իսրայելի վարչապետ Բեգինը մույնիսկ մերժեց սիրիական զորքերին օդային հարված հասցնելու աջ քրիստոնյաների խնդրանքը, չնայած միևնույն ժամանակ հայտարարեց, որ Սիրիայի կողմից լիբանանյան քրիստոնյաների նկատմամբ «ցեղասպանություն» իրականացնելու դեպքում Իսրայելը չի կարող անտարբեր մնալ։ Այս գործում էական դեր էին խաղում մարոնիները, որոնք հրահրում էին բախումներ սիրիական ուժերի հետ՝ փորձելով Իսրայելին ներքաշել դրանց մեջ։ Օգտվելով Էմմի-Դևիդում եղիպտա-իսրայելյան համաձայնագրի ստորագրումից հետո Սիրիայի տարածաշրջանային դիրքերի բուլացումից և Լիբանանում նրա ունեցած ղեկավարություններից, աջ քրիստոնեական ուժերը 1980թ. վերջին հսկողություն հաստատեցին Լիբանանի արևելքում գտնվող Բեքաա հարթավայրի կենտրոնական քրիստոնեական

Զահլե՛ք քաղաքի վրա: 1981թ. ապրիլին, երբ սիրիական ուժերը փորձեցին վերջիններս դուրս մղել Զահլե՛ք, Իսրայելը ապրիլի 28-ին Զահլե՛քի մոտ խլիճե՛ք 2 սիրիական տրանսպորտային ուղղաթի՛ռ<sup>37</sup>:

Որպեսզի Իսրայելը գրկվեր Լիբանանի վրա օդային գրոհներ կատարելու պատրվակից, ՊԱԿ-ը, Սաուդյան Արաբիայի միջնորդությամբ, 1981թ. հուլիսին ստորագրեց համաձայնագիր, որով դադարեցնում էր իր ռազմական գործողությունները Իսրայելի դեմ Լիբանանի տարածքից<sup>38</sup>: Չնայած ՊԱԿ-ը հետևում էր համաձայնագրի կատարմանը, Իսրայելը վերսկսեց պաղեստինցիների դիրքերի օդային գրոհները: 1982թ. հունիսի 6-ին Լոնդոնում իսրայելյան դեսպանի վրա պաղեստինյան ահաբեկչի կողմից կատարած անհաջող մահափորձից հետո իսրայելյան զորքերը (ցամաքային ուժեր՝ 100 հազ. մարդ, ռազմաօդային և ռազմածովային ուժերի հետ) ներխուժեցին Լիբանան: Այդ ժամանակ Լիբանանում տեղակայված էր 26-28 հազ. սիրիական զորք: Հունիսի կեսերին իսրայելյան զորքերը, չնայած պաղեստինցիների և վրամանյան ձախերի ցույց տված դիմադրության, հասան Բեյրութի արվարձաններ և միացան աջ-քրիստոնեական ուժերի հետ: Սկսվեց Արևմտյան Բեյրութի 80 օրյա պաշտպանությունը<sup>39</sup>:

Պատասխանատվություն զգալով Լիբանանի խաղաղ բնակչության հտազա ճակատագրի հանդեպ և ձգտելով կանխել Լիբանանի մայրաքաղաքի հետագա ավերումը՝ պաղեստինցիների ղեկավարությունը որոշում ընդունեց Լիբանանից իր զինված միավորումների և ՊԱԿ-ի ապարատի դուրս բերման մասին: Մերձեցրել Արևելքում ամերիկյան ներկայացուցիչ Ֆ. Հաբիբը իր կառավարության անունից ելաշխարհոյեց, որ այդ դեպքում 1) իսրայելյան զորքերը չեն մտնի արևմտյան Բեյրութ և 2) կապահովվի Լիբանանում պաղեստինյան փախստականների ճամբարների անվտանգությունը<sup>40</sup>: Սակայն 1982թ. սեպտեմբերի 15-ին իսրայելյան բանակը գրավեց արևմտյան Բեյրութը: Մինչ այդ, 1982թ. սեպտեմբերի 14-ին, սպանվեց երկրի նախագահի պաշտոնը դեռ չստանձնած Բաշիր Ժմաշելը: 1982թ. սեպտեմբերի 17-ի գիշերը պաղեստինյան փախստականների Սաբրա և Շատիլա ճամբարներում Իսրայելը աջ քրիստոնյաների ձեռքով իրականացրեց հազարավոր պաղեստինցիների դաժան սպանությունը: Այս դաժան հանցագործությունը կատարվեց Իսրայելի պաշտպանության մախարաբ Աբիել Շարունի<sup>42</sup> ղադակի օժանդակությամբ և աջակցությամբ<sup>41</sup>: Այս պայմաններում ԱՄՆ-ի ճնշմամբ Լիբանանի կառավարությունը 1983թ. մայիսի 17-ին ստորագրեց լիբանանա-իսրայելյան «խաղաղության մասին համաձայնագիրը», որի համաձայն Լիբանանը հրաժարվում էր Անվտանգության խորհրդի բիվ 508 և 509 որոշումներից, որոնք նախատեսում էին իսրայելյան զորքերի դուրս բերում Լիբանանի տարածքից: Համաձայնագիրը կրում էր ընդգծված հակասիրիական և հակապաղեստինյան բնույթ: Միայն 1984թ. մարտին, երկրում ձևավորված ազգային միասնության կառավարությունը չեղյալ հայտարարեց վերը նշված պայմանագիրը: Այդուհանդերձ իսրայելյան զորքերի դուրս բերումը Լիբանանի տարածքից (բացառությամբ հարավի «անվտանգության գոտուց», որտեղից իսրայելյան զորքերը դուրս բերվեցին 2000թ. մայիսի 24-ին) ավարտվեց միայն 1985թ. հունվարին: Մինչ իսրայելյան բանակը ավերում էր Բեյրութը, Վաշինգտոնը, չնայած Իսրայելի հետ որոշ տարա-

ծայնորությունների, իրականացնում էր իր դաշնակցի քաղաքական և դիվանագիտական պաշտպանությունը: 1982թ. ընթացքում ԱՄՆ-ը, աջակցելով Իսրայելին, 6 անգամ օգտագործեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհիլոյում «վետոյի» իր իրավունքը<sup>43</sup>:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ արաբների մեծամասնությունը գտնում է, որ լիբանանյան ճգնաժամը ամենաշատը ձեռնադրել էր Իսրայելին: Այն ժամանակ շահելու և Սիմա-2 (երկրորդ եգիպտա-իսրայելյան) համաձայնագրի ստորագրումից արաբների ուշադրությունը շեղելու հնարավորություն էր ընձեռում Իսրայելին, որն էլ վերջինս կայտառագավ լավագույնս օգտագործել<sup>44</sup>:

Լիբանանյան ճգնաժամը հաղթահարվեց միայն 1989թ. հոկտեմբերին Թալֆի համաձայնագրի ստորագրմամբ, որով հատուկ հարաբերություններ հաստատվեցին Սիրիայի և Լիբանանի միջև: Թալֆի համաձայնագիրը իրավական տեսանկյունից հնարավոր դարձրեց սիրիական ազդեցության հաստատումը Լիբանանում<sup>45</sup>:

Այսպիսով, Լիբանանը, որին մինչև այժմ հաջողվել էր զերծ մնալ արաբա-իսրայելյան հակամարտությանը ուղղակի մասնակցությունից և գրավել չեզոք դիրք, վերը նշված հանգամանքների շնորհիվ ամբողջությամբ ներքաշվեց մերձավորարևելյան հակամարտության մեջ: Այսօր էլ մերձավորարևելյան հակամարտության ցանկացած սրում իր բացասական հետևանքներն է ունենում Լիբանանի ներքաղաքական կյանքում: Այդ է վկայում 2001թ. ապրիլի 15-ին Իսրայելի կողմից Բեյրութի մոտ տեղակայված սիրիական ռազմական դիրքերի ռմբակոծումը (այսօր Լիբանանում տեղակայված են 35 հազ. սիրիական ուժեր), ի պատասխան շիական ծայրահեղական «Հիզբոլլա» կազմակերպությանը Սիրիայի ցույց տված աջակցության, որը, օգտագործելով Լիբանանի հարավը, գրոհներ է ձեռնարկում Իսրայելի դեմ: Այդուհանդերձ Լիբանանը մերձավորարևելյան հակամարտության մեջ ներքաշված միակ արաբական երկիրն է, որին հաջողվել է առանց Եգիպտոսի օրինակին հետևելու և Իսրայելի հետ անջատ համաձայնագիր կնքելու, իսրայելյան զորքերը ամբողջությամբ դուրս քերել իր տարածքից, չնայած դա պահանջեց տասնյակ տարիներ:

## HARUTUNIAN LILIT

### THE SYRIAN AND ISRAELI FACTORS IN THE LEBANESE CRISIS

(Summary)

In the 1960s Lebanon went through a deep crisis. In 1975 this crisis turned into a Civil War, which lasted nearly 15 years. The Lebanese crisis, the Civil War and the subsequent instability are result of several processes, indigenous to Lebanon, but which have become increasingly intractable due to the pressures of external actors.



In addition to internal factors – political, economic, social, religious and ideological, and external factors – Syria and Israel, which had their own interests in Lebanon, the Palestinian issue became critical for Lebanon after 1970, when the Palestine Liberation Organisation and its military units displaced from Jordan to Lebanon. Due to all these factors Lebanon, which till then had succeeded not to participate in the Middle East conflict, now became wholly involved in it.

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Ն. Հովհաննիսյան, Լիբանանյան ճգնաժամը և հայ համայնքի դիրքորոշումը (1975-1982), Երևան, 1982:
2. Ռ. Կարապետյան, Սիրիա - ամերիկյան հարաբերությունները (1967-1996), Երևան, 2000:
3. С. Стоклицкий, Ливан: Тревоги и надежды, М., 1988.
4. Л. Вольнов, Ливан: Эхо агрессии, М., 1984.
5. P. Seale, Assad and the struggle for the Middle East, London, 1988.
6. I. Rabinovich, The war for Lebanon, 1970-1985, New York, 1985.
7. H. Cobban, The making of Modern Lebanon, Westview Press, 1985.
8. K. Salibi, Crossroads to Civil war: Lebanon 1958-1976, New York, 1976.
9. D. Gordon, Lebanon: The fragmented nation, London, 1980.
10. A. Dawisha, Syria and Lebanese crisis, New York, 1980.
11. Բ. Բաղդադունի, Աս-Սալամ ալ-Մաֆկուդ (արաբերեն՝ Կորցրած խաղաղություն), Բեյրութ, 1984:
12. Е. Пырлин, Ближневосточный лабиринт, М., 1996.
13. Ն. Հովհաննիսյան, Լիբանանյան ճգնաժամը և հայ համայնքի դիրքորոշումը, էջ 32:
14. 1919թ. հուլիսի 2-ին Դամասկոսում հրատարակված «Առաջին Համասիրիական վեհաժողով» որոշումների համաձայն՝ «Մեծ Սիրիան» ընդգրկում է հարավում Տարտուս լեռները, Ակաբան և Ռաֆահը հյուսիսում, Միջերկրականը արևմուտքում և Եփրատն ու Խարուր գետերը արևելքում: Այդ սահմանները ներառում են այսօրվա Սիրիան, Լիբանանը և Իսրայելը: «Մեծ Սիրիայի» կոնցեպցիայի արձատները գնում են դեպի Օմայանների խալիֆայության ժամանակները, երբ Հիջազից հյուսիս ընկած տարածքը («Բիլադ աշ- Շամ», Հյուսիսային Երկիր) առանձին քաղաքական միավոր էր հանդիսանում:
15. Ռ. Կարապետյան , Սիրիա - ամերիկյան հարաբերությունները, էջ 71:
16. TACC, 06.02.1976.
17. "Le Monde", 14 April, 1976.
18. A. Dawisha, Syria and Lebanese crisis, p. 134.
19. P. Seale, The struggle for the Middle East, p. 279.

20. Հունիսի 5-ին Սիրիան և Եգիպտոսը խզեցին իրենց դիվանագիտական հարաբերությունները՝ ետ կանչելով դիվանագիտական ներկայացուցիչներին:
21. Շ. Կարամանուկյան, Արաբական Պետությունների Լիգայի դերը արաբական երկրների հակաիմպերիալիստական պայքարում, Երևան, 1988, էջ 185:
22. P. Seale, The struggle for the Middle East, p. 288.
23. Սիրիական զորքերի քանակը սահմանվեց 30 հազար: Խաղաղապահ ուժերի մեջ մտան նաև Սաուդյան Արաբիայի, Լիբիայի, Սուդանի և այլ երկրների զինվորներ:
24. Ближний Восток и Международное право, М., 1982, с. 83.
25. Арабские страны: История, экономика, политика, М., 1986, с. 249.
26. Ն. Հովհաննիսյան, Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը, էջ 14:
27. S. Mackey, Lebanon: Death of a nation, New York, 1991, p.142.
28. Նույն տեղում, էջ 150:
29. Ближний Восток и Международное право, с. 83.
30. А. Агарышев, От Кэмп-Дэвида к трагедии Ливана, с. 3.
31. Ближний Восток и Международное право, с. 84.
32. Ռ. Կարապետյան, Սիրիա-ամերիկյան հարաբերությունները, էջ 90:
33. «Ալ- Բաա», 17.03.1978:
34. Ближний Восток и Международное право, с. 85.
35. S. Mackey, Lebanon: Death of a nation, p.173.
36. Ближний Восток и Международное право, с. 85.
37. P. Seale, The struggle for the Middle East, p. 284.
38. Ближний Восток и Международное право, с. 86.
39. Л.Вольнов, Ливан: эхо агрессии, с. 8.
40. А. Агарышев, От Кэмп-Дэвида к трагедии Ливана, с. 133.
41. Նույն տեղում, էջ 132:
42. Այսօր Արիել Շարոնը Իսրայելի վարչապետն է:
43. Ближний Восток и Международное право, с. 90.
44. Ե. Պրիմակով, Մի դավադրության պատմություն, Երևան, 1987, էջ՝ 340:
45. ТАСС, 10.09.1990.

**ՋՐԱՅԻՆ ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԷԼՔՈՒՄ**

Ջուրը միշտ էլ ունեցել է բացառիկ նշանակություն Մերձավոր Արևելքի ժողովուրդների տնտեսական և քաղաքական կյանքում:

20-րդ դարում Մերձավոր Արևելքում հակամարտությունների ավանդական պատճառ համարվել է նավթային գործոնը: Պետությունները վիճել են սահմանների ճշգրտման շուրջ՝ հուսալով, որ ավագի յուրաքանչյուր քառակուսի կմ կարող է դառնալ հարստության նոր աղբյուր: Ավելին, այդ սահմանների մեծ մասը որոշվել է նավթի առկայությունը հաշվի առնելով: Մյուսողեռ, ջրային ռեսուրսների օգտագործման հարցը ամենահսկվածական կոնֆլիկտածին գործոնն է Մերձավոր Արևելքի ապագա քաղաքական կյանքում<sup>1</sup>:

Թուրքիայից մինչև Օման, Եգիպտոս և Լիբիա տարածվող բոլոր երկրները այսօր գերխնդիր ունեն ինչպես բավարարել իրենց երկրների ջրային կարիքները, քանզի գնալով խիստ անհամատեղելի է դառնում այդ երկրների բնակչության աճի և ջրի պահանջների տենպերը: Տարածաշրջանի ամենամեծ գետի՝ Նեղոսի ավազանի բնակչությունը կրկնապատկվում է յուրաքանչյուր 30 տարին մեկ, մինչդեռ ջրի քանակը չի ավելանում: Ավելին, գետի ջրերի վերականգման միջին նորման կազմում է 18 օր, իսկ մեծ լճերի-նը՝ 1000 տարի: Եվ սա այն դեպքում, եթե տվյալ ջրային ավազանի վերականգնմանը ոչինչ չխանգարի, այսինքն՝ չլինեն խոշորամասշտաբ օգտագործումներ, ինչն անհնար է Մերձավոր Արևելքում: Այսպիսով ստացվում է ջրային ռեֆիցիտ: Ըստ դոկտոր Ֆալկերմանի մեթոդի, եթե տվյալ երկրի բնակչության յուրաքանչյուր շնչին տարեկան բաժին է ընկնում 1700 խորանարդ մետրից պակաս ջուր, ապա այդ երկրում առկա է «ջրային լարվածություն», իսկ եթե այդ ցուցանիշը 1000 խորանարդ մետրից պակաս է, ապա այդ երկիրը ունի ջրային դեֆիցիտ<sup>2</sup>:

1955թ. ջրային դեֆիցիտ աշխարհում ունեին 7 երկիր, որոնցից երեքը՝ Կատարը, Հնդկաստանը և Բուվեյթը, Մերձավոր Արևելքում: 1990թ. վերտիչյալ յոթին ավելացան ևս 13 երկիր, որոնցից ութը (Ալժիր, Իսրայել, Բահրեյն, Սաուդյան Արաբիա, Սոմալի, Թունիս, Արաբական Միացյալ Էմիրություններ և Եմենը) Մերձավոր Արևելքում: ՄԱԿ-ի տվյալներով 2025թ. ևս յոթ մերձավորարևելյան երկրներ՝ Եգիպտոսը, Երովպիան, Իրանը, Լիբիան, Մարոկկոն, Օմանը, Սիրիան, կմտնեն այդ ցուցակի մեջ, այսինքն՝ Մերձավոր Արևելքում կլինեն 18 երկրներ, որոնք կունենան ջրի դեֆիցիտ<sup>3</sup>: Մերձավոր Արևելքի բնակչությունը 1990թ. 314 միլիոն էր և 2020թ. կլինի 348 միլիոն, իսկ ջրի օգտագործման պահանջը ամեն տարի ավելանում է 470 միլիարդ խորանարդ մետրով<sup>4</sup>: Այն 132 միլիարդով ավել է, քան ամբողջ ջրային պաշարները, այդ թվում՝ պահուստայինը, միասին վերցրած: Դա կլինի լարվածության և կոնֆլիկտածին անցախադեպ աղբյուր: Ստորև բերում ենք մերձավորարևելյան երկրների բնակչության ջրային պահանջների տվյալները.

| <u>Երկիր</u> | <u>Մեկ շնչին բաժին ընկնող ջուր խորանարդ մետր</u> |        |        |
|--------------|--------------------------------------------------|--------|--------|
|              | 1955թ.                                           | 1990թ. | 2025թ. |

|                                       |       |      |      |
|---------------------------------------|-------|------|------|
| 1. Քուվեյթ                            | 147   | 23   | 9    |
| 2. Կատար                              | 808   | 75   | 57   |
| 3. Բահրեյն                            | 1427  | 117  | 68   |
| 4. Սաուդյան Արաբիա                    | 1226  | 306  | 113  |
| 5. Արաբական Միացյալ<br>Էմիրություններ | 6196  | 308  | 176  |
| 6. Հորդանան                           | 906   | 327  | 121  |
| 7. Եմեն                               | 1098  | 445  | 152  |
| 8. Իսրայել                            | 1229  | 461  | 264  |
| 9. Թունիս                             | 1127  | 540  | 324  |
| 10. Ալժիր                             | 1770  | 689  | 332  |
| 11. Լիբիա                             | 4105  | 1017 | 359  |
| 12. Մարոկկո                           | 2763  | 1117 | 590  |
| 13. Եգիպտոս                           | 2561  | 1123 | 630  |
| 14. Օման                              | 4240  | 1266 | 410  |
| 15. Լիբանան                           | 3088  | 1818 | 1113 |
| 16. Իրան                              | 6203  | 2203 | 816  |
| 17. Սիրիա                             | 6500  | 2087 | 732  |
| 18. Թուրքիա                           | 8509  | 3626 | 2186 |
| 19. Իրաք                              | 18441 | 6029 | 2356 |
| 20. Սուդան                            | 11899 | 4792 | 1993 |

Ջրային ռեսուրսների համատեղ օգտագործման վերաբերյալ որևէ կոնկրետ համաձայնագիր չկա: Նախկինում այդ հարաբերությունները կարգավորվել են իսլամի օրենքներով: Շարիաթի կանոններից մեկն ասում է. «Այն մարդը, որը լավ է փոխում, իրավունք ունի առաջինը օգվել այդ ջրից, քայց նա չի կարող այդ նույն ջրի օգտագործումը մերժել այլ մարդկանց և կենդանիներին»<sup>5</sup>: Իսլամ արմատականները ներկայումս սկսել են շահարկել այս կանոնը և մեկնաբանել իրենց ձևով: Գետերի ակունքները վերահսկող երկրները (օրինակ՝ Թուրքիան) պնդում են, որ իրենք պետք է վերցնեն այնքան ջուր, որքան ուզում են, իսկ գետերի ստորին հոսքերում տեղա-կայված երկրները (օրինակ՝ Եգիպտոսը) միշտ առարկել են այս տեսակետի դեմ: Միջազգային իրավունքի անորոշությունը՝ ջրային հարցի հետ կապված, առաջացնում է և առաջացնելու է բազմաթիվ վեճեր: Եգալի դեպքեր կան, երբ ՄԱԿ-ը կամ Միջազգային դատարանը վճիռ արձակած լինեն սահմանային գետերի կամ լճերի ջրերի համատեղ օգտագործման վերաբերյալ:

Ջրային հարցը եղել և մնում է տարածաշրջանային ամենահին հակամարտության՝ արաբա-իսրայելականի առանցքային հարցերից մեկը: Թուրքիան ջրային հարցում լուրջ տարածայնություններ ունի Իրաքի և Սիրիայի հետ<sup>6</sup>:

Մերձավոր Արևելքում առկա են երեք խոշոր «ջրային համկարգեր»՝ Նեղոսի, Տիգրիս-Եփրատյան և Հորդանանի ավազանները, և այս երեք ավազաններում էլ առկա են ջրային լուրջ տարածայնություններ և հակամարտություններ:

## 1. Ջրային տարածայնությունները Տիգրիս-եփրատյան ավազանում:

«Ջրային մտրակի» քաղաքականության օգտագործման լավագույն հմտություն է դրսևւոյում Թուրքիան<sup>7</sup>: Դեռ 1990թ. Թուրքիան որոշեց Արաքսոյի ջրամբարի դիմաց նոր արհեստական լիճ կառուցել և այնտեղ ուղղել Եփրատի ջրերը: Այդ քայլով Թուրքիան Սիրիայից պահանջում էր դադարեցնել օգնությունը Քրդական Աշխատավորական Կուսակցութեանը: Այդ նախագծի իրականացումը ջրային սով կառաջացներ մահ Իրաքում: Իրաքը և Սիրիան, այդ երկու անհաշտ բշմամիները, բողեցին տարածայնությունները և սկսեցին զինված հակազդեցության համատեղ ծրագրեր մշակել: Երեք շաբաթ անց Թուրքիան դադարեցրեց նախագծի իրականացումը:

Թուրք-սիրիական հարաբերությունները այժմ էլ լարված են: Թուրքիան նախատեսում է Եփրատի ավազանում կառուցել 22 ջրամբար, որոնցից առիժն կառուցվել է կեսը: Եթե բոլոր 22 ջրամբարներն էլ կառուցվեն, Սիրիան կկորցնի Եփրատի ջրերի 40 տոկոսը<sup>8</sup>: Եփրատից հետո Թուրքիան նախատեսում է օգտագործել Տիգրիսի ջրերը: Դա ուղղակի հարված է Իրաքի շահերին, որի ջրային պաշարների 90 տոկոսը կազմում են Տիգրիսի ջրերը<sup>9</sup>: Դա կտոյալի Սիրիային և Իրաքին դաշնակցել, չնայած որ 1975թ. այս երկրները քիչ էր մնում բախվեին Սիրիայում աս-Սաուրայի ջրամբարի կառուցման պատճառով: Դեռ 1990թ. սկզբներին Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը հայտարարեց. «Ոչ՝ Սիրիան, ոչ՝ էլ Իրաքը չեն կարող պահանջներ ներկայացնել Թուրքիայի գետերի նկատմամբ, ինչպես, որ Անկարան պահանջ չի ներկայացնում մրանց մավթի նկատմամբ: Մենք իրավունք ունենք ինչ-որ բան կիսելու՝ ջուրը Թուրքիային, մավթը՝ մրանց: Մենք չենք ասում բերեք համատեղ օգտագործենք մավթային պաշարները, մրանք էլ չպետք է ասեն բերեք համատեղ օգտագործենք ջուրը»<sup>10</sup>:

Տիգրիս-եփրատյան ջրավազանը և երկու գետերի միացման շրջանը՝ Շատտ ալ-Արաքը հիմնական պատճառներից մեկն էր Իրան-իրաքյան ուրամյա պատերազմի (1980-1988թթ.): Իրաքը ցանկանում էր Իրանի հետ սահմանը Շատտ ալ-Արաքի կենտրոնից տեղափոխել դրա արևելյան ափը, որից հետո նախատեսվում էր «կառուցել երրորդ գետը» և չորացնել Բասրայից հյուսիս ընկած ճահիճները, որտեղ ապրում էին Իրանի կողմից աջակցություն ստացող ընդդիմադիր շիաները:

## 2. Ջրային տարածայնությունները Նեղոսի ավազանում:

Ջրային հարցում ուժի դիմելու պատրաստ է մահ տարածաշրջանում ամենահավասարակշռվածը համարվող երկրներից մեկը՝ Եգիպտոսը: Դեռ 1979թ. Եգիպտոսի նախագահ Անվար Սադատը խաղաղության պայմանագիր կնքելով Իսրայելի հետ՝ հայտարարեց, «որ երբեք այլևս ոչ մի պատճառով չի պատերազմի Իսրայելի հետ, բացի ջրի պատճառից»<sup>11</sup>: Սադատը ուզում էր ջրային հարցը օգտագործել որպես միջոց Իսրայելի վրա ճնշում գործադրելու համար: 1978թ. Եգիպտա-իսրայելական բանակցությունների ժամանակ իսրայելական կողմը առաջարկեց «ջրի համատեղ օգտագործման» ծրագրի շրջանակներում իրենց տալ Նեղոսի ջրի 1 տոկոսը, այսինքն՝ տարեկան 800 միլիոն խորանարդ մետր ջուր, որը ջրագծով պետք է Նեղոսի արևելյան դելտայից հասցվեր Սինայի բերակղզի, ապա Իսրայել: Սադատը

հույս ունեւր, որ այսպիսով կրօւանար Իսրայելի ջրային կալվածութիւնը Հողաւանանի արեւմտեան ափից և վերջինս չէր առարկի այնտեղ պաղտեստիւն-  
յան ինքնավարութիւն ստեղծելու եզրիւտական ծրագրերի դէմ<sup>12</sup>: Մտաւարը  
հույս ունեւր այդ ջրագիծը հետագայում հասցնել մինչև Հողաւանան և Միլիլա:  
Մաւրաբի այդ մտաւորութիւնները չիրականացան եզրիւտական բանակի  
բարձրաստիճան սպայակազմի և հրամանատարութեան կտրուկ առարկութեան  
պատճառով: Իսկ ՄԱԿ-ի մախկին քարտուղար Բուտրղս Ղալին ուղղա-  
կիւրեմ գգուշացրեց, «որ տարածաշրջանում հաջորդ պատերազմը կլինի  
ջրի պատճառով»<sup>13</sup>:

Եզրիւտաւր ջրային հարցում խնդիրներ ունի Սուդանի, Եթովպիայի  
և Լիբիայի հետ: Եզրիւտաւր անհանգստացնում են այն ծրագրերը, որոնք  
մախատեսում են ջրամբարներ կառուցել Եթովպիայի լեռնային շրջաններ-  
ում: Դեռ 1989թ. նոյեմբերին Կահիրեւում Եթովպիայի դեսպանից բացատ-  
րութիւն պահանջվեց, թէ ինչ են անում իսրայելցի ինյորդները և մախա-  
գծողները Եթովպիայում: Վերջիններս ուսումնասիրում էին Կապույտ Նե-  
ղոսի շրջանը և հնարավոր էին համարում ռազմարկիվ ջրամբարների կառու-  
ցումը, որոնք կպահպանէին 51 միլիարդ խորանարդ մետր ջուր: Եզրիւտա-  
կան պառլամենտը հայտարարեց, որ կսատարի կառավարութեանը, երե  
վերջինս Եթովպիայի դեմ ռազմական գործողութիւններ սկսի<sup>14</sup>: Եվ սա բա-  
ցատրելի էր: Կապույտ Նեղոսը ապահովում է Եզրիւտոս մտնող ջրի 85 տո-  
կոսը: Իսրայելը այսօր էլ չի հրաժարվում Եզրիւտոսի նկատմամբ Եթով-  
պիայի միջոցով «ջրային մտրակի» քաղաքականութիւն վարելու մտքից:

Եզրիւտաւր խնդիրներ ունի մահ Սուդանի հետ, որի տարածքով հո-  
սում է Սպիտակ Նեղոսը, և որին միանում է Կապույտ Նեղոսը: 1959թ. հա-  
մաձայնագրով Եզրիւտաւր սկսեց ստանալ «սուդանեան ջրի» 60 տոկոսը<sup>15</sup>:  
Այսօր Սուդանի արմատական կառավարութիւնը, որը լավ հարաբերութիւն-  
ների մեջ է Իրանի հետ, փորձում է խուսափել այդ պայմանագրից, իսկ Կա-  
հիրեն մեղադրում է վերջինիս և Նեղոսի հետ կապված ցանկացած հարցում  
պատրաստ է դիմելու ռազմական միջամտութեան:

Բարոյութիւններ կան մահ Լիբիայի հետ հարաբերութիւններում:  
Լիբիայի առաջնորդ Քադաֆիի կառուցած արհեստական «Մեծ գետը», որը  
ջուր է ապահովում Լիբիայի հյուսիսին և գոյանում է հզոր պմպիով գետնի  
տակից հանված ջրերից, ագրում է Նեղոսի մակարդակի վրա: Եզրիւտական  
աղբյուրները հաստատում են, որ կան ռազմական գործողութիւնների  
ծրագրեր, որոնք մախատեսում են մոտ ապագայում Չադի և Սուդանի  
հյուսիսի, ինչպես մահ Լիբիայի հարավի գրավում եզրիւտական զորքերի  
կողմից Քադաֆիի մախազօի իրականացումը դադարեցնելու մախատակով:

### 3. Ջրային տարածաւանութիւնները Հողաւանանի ապագայում:

Մերձավոր Արևելքի երրորդ՝ Հորդանանի ջրային ապագան, մա-  
խաղ երկուսի համեմատ չնչին է, և ըստ այդմ էլ այստեղ հակամարտութեան  
հաճախականութիւնը եղել է մնում է ամենամեծը: Հորդանան գետը, չնայած  
իր կարծութեանը, սահմանակից է այնպիսի երկրների, որոնք ռազմական ու-  
ժի գործադրման հարցում ամենափորձվածներն են: Ջրային հարցը խիստ  
ցավագին է Իսրայելի համար: Դեռ 1919թ. Մեծ Բրիտանիայի վարչախոս Լ.  
Տորքին ուղղված մամատում Չ. Վեյզմանը գրում էր. «Նվազագույն պահան-

զը Բալթիոյի իռականագրի իրականացման հետ կապված այն է, որ հրեական ազգային օջախի ստեղծման հարցում սահմանները չեն կարող գծվել՝ ելնելով բացառապես պատմական փաստերից: Մեր պահանջն այն է, որ հաշվի առնվի ժամանակակից տնտեսական կյանքի պահանջները: Պաղեստինի ամբողջ տնտեսական ասպագան կախված է ոռոգման և էլեկտրաէներգիայի համար ջրի մատակարարումից, և այդ մատակարարումը պետք է լինի Հորդանանի ակունքներից և Լիբանանի հարավից»<sup>16</sup>: Սրանք այն շրջաններն են, որոնք հետագայում գրավվեցին Իսրայելի կողմից: Իսրայելի վարչապետ Մոշե Շարետը 1950-ական թթ. այն միտքն էր արտահայտում, որ վերսիիշյալ խնդրի իրականացման համար պետք է Լիբանանի հարավում ստեղծել մարտնչ-քրիստոնեական ռեժիմ<sup>17</sup>: Ջրի օգտագործման շուրջ առաջացած արաբա-իսրայելական ռազմական քախումները ունեն իրենց պատմությունը:

1951թ. հունվարի 21-ին հրեական ազգային ֆոնդը համաձայնվեց ֆինանսավորել 250 միլիոն դոլար արժողությամբ մի նախագիծ, որը նախատեսում էր ոռոգման ցանց ստեղծել Նեգևի անպատում և երուսաղեմի շրջանում<sup>18</sup>: Պարզ էր, որ կառուցման աշխատանքները լինելու էին սլոյական տարածքի և այդ ժամանակ Սիրիայի կողմից վերահսկվող ապառազմականացված գոտիների խախտման հաշվին: Ի պատասխան՝ արաբական երկրները 1956թ. օգոստոսին սկսեցին աշխատանքներ Յարմուկ գետի պլաններում: Մինչ այդ Սիրիան կառուցել էր Ալ-Մակիյաթաթ ջրամբարը, որը տարեկան Իսրայելին գրկում էր 550 միլիոն խորանարդ մետր ջրից: Սակայն ի տարբերություն իսրայելական ծրագրերի՝ արաբական նախագծի արդյունքում Յարմուկի ջրերը նորից դառնալու էին Հորդանան գետ: Իսրայելական օրուժի հարձակումները Սիրիայի դեմ ստիպեցին արաբներին հրաժարվել Յարմուկի ջրամբարի կառուցումից: 1963թ. վերջերին Իսրայելը Գալիլեյան լճի արևմտյան ափին կառուցեց հսկայական պոմպակայան, որը սկսեց տարեկան 440 միլիոն խորանարդ մետր ջուր քաշել Մեռյալ ծովից դեպի Նեգևի անապատ: Նախագիծը կոչվեց «Ջրի ազգային կուրիեր կամ տրանսպորտ»: 1964թ. մայիսի 28-ին Իսրայելը ավարտեց դրա կառուցումը<sup>19</sup>: Իզուր չէ, որ Յասիր Արաֆաթի հիմնադրած «Ֆաթի» խմբի առաջին մարտական գործողությունը 1964-65 թթ. ուղղված էր հենց վերսիիշյալ ծրագրի դեմ<sup>20</sup>: Սիրիան փորձեց հակազդել Բանիաս գետի ջրերը սեփական տարածք ուղղելու միջոցով, սակայն այն արդյունք տվեց:

1963թ. վերջին արաբա-իսրայելական հարաբերությունները հասան իրենց լարվածության գագաթնակետին: Իսրայելի կառավարությունը հայտարարեց Հորդանան գետի ջրերի պատնեշման մասին, ինչը ջրային սով կարող էր առաջացնել հարևան արաբական երկրներում: 1964թ. հունվարի 13-16-ը Կահիրեում հրավիրվեց համաժողով, որին մասնակցում էին 13 արաբական երկրներ: Այստեղ առաջ քաշվեց Հորդանանի ջրերի օգտագործման հակածրագիր<sup>21</sup>: Ծրագրի արժեքը գնահատվեց 6.25 մլն. ֆունտ ստեռլինգ: Ծրագրի իրականացման համար նախատեսվում էր 18 ամիս: Նախատեսվում էր Հորդանան գետի ակունքների հնարավոր մասնակի փակում և հունների շեղում: Որոշվեց ստեղծել Միացյալ Արաբական Հրամանատարություն, որպեսզի Իսրայելի կողմից վերսիիշյալ ծրագիրը ռազմական միջամտությամբ խանգարելու դեպքում նրան հակահարված տրվի<sup>22</sup>:

Ի պատասխան Կահիրեի համաժողովի որոշումների՝ Իսրայելի վարչապետ Էշկոլը հայտարարեց, որ ջրային արտանշը այնուամենայնիվ կդրվի, իսկ արաբական երկրների կողմից Հորդանանի ակտիվները շեղելու դեպքում Իսրայելը կձեռնարկի համապատասխան քայլեր<sup>23</sup>:

1964-66թթ. Իսրայելը հարձակված բիրախ դարձրեց Հորդանանում, Լիբանանում և Սիրիայում գտնվող պոմպակայանները և ջրագծերը: 1967թ. Գոլանյան բարձունքների օկուպացման հիմնական պատճառներից մեկը նաև վերոնշյալ Բանիաս գետի ջրերի օգտագործման հարցն էր: Յուբա-բանջյուր Իսրայելցի գիտի, որ իրենք կարիք ունեն այդ գետի յուբաբանջյուր կարիլ ջրի: Բացի ռազմաստրատեգիական նշանակությունից Գոլանների վերադարձը քոյլ կտա Սիրիային՝ վերահսկել Իսրայելի ջրային քաղաքականությունը: Գոլանների ջրերը ցվում են Գալիլեյան լիճը, որը Իսրայելի միակ մաքուր ջուր ունեցող ափագետն է և ապահովում է Իսրայելի ջրային կարիքների 1/3-ը: Մյուս 1/3-ը գալիս է Հորդանանի արևմտյան ափից<sup>24</sup>: Իսրայելը 1995թ. վաշինգտոնյան բանակցությունների ժամանակ պատրաստակամորեն հայտնեց զորքերը հեռ քաշել մինչև 1923թ. մեծ տերությունների կողմից որոշված սահմանները, և այդ դեպքում Սիրիայի սահմանը կանցներ 16ից 10 մետր հեռավորության վրա<sup>25</sup>: Իսկ Սիրիան պահանջում էր վերականգնել 1967թ. հունիսի 4-ի սահմանները, և այդ դեպքում սահմանը կհասցվեր մինչև ծովափ, որը Սիրիային հնարավորություն կտար վերահսկելու ջրի մի մասը:

Իսրայելի կողմից վերահսկվող ջրի քանակությունը սկսած 1967թ. կազմում է 500 խորանարդ մետր մեկ անձի համար, իսկ 1991թ.՝ 375 խորանարդ մետր, մինչդեռ պաղեստինցիների համար այն կազմում է 180 խորանարդ մետր<sup>26</sup>: Արևմտյան ափում իսրայելական 100 բնակավայրերում ապրող 100 հազար երեաներ օգտագործում են 100 միլիոն խորանարդ մետր ջուր, իսկ 1միլիոն պաղեստինցիներ օգտագործում են ընդամենը 137 միլիոն խորանարդ մետր ջուր<sup>27</sup>: Սա անհամեմատորեն ցածր քանակություն է և քշմամանի պատճառ է: Պաղեստինի արտեզյան ջրերի 80%-ը՝ 615 միլիոն խորանարդ մետր, վերցնում է Իսրայելը<sup>28</sup>: Արարները դա համարում են «պաղեստինյան ջուր», որը թունագրավել է Իսրայելը: Վերջինիս ջրային կարիքների 40%-ը ապահովում են երկու արտեզյան ջրավազաններ, որոնցից մեկը գտնվում է 1947թ. ՄԱԿ-ի կողմից հաստատված իսրայելական տարածքում, իսկ մյուսը՝ Հորդանանի արևմտյան ափում: Այսօր արաբա-իսրայելական վերջնական պայմանագրի խոչընդոտներից մեկը ջրային հարցի շուրջ անհամաձայնությունն է: Քիչ հավանական է, որ Իսրայելը որևէ տարածք կհանձնի առանց տվյալ տարածքի ջրային ռեսուրսների վրա հսկողություն ունենալու: Հարցը ավելի կրթադանա այն առումով, որ 2020թ. Իսրայելի բնակչության թիվը կկազմի 8 միլիոն, իսկ պաղեստինցի արաբ բնակչության թիվը կհասնի 7 միլիոնի: Եվ վերջիններս պետք օգտագործեն մույնրան ջուր, որն այսօր էլ համարում են անբավարար:

Համաշխարհային բանկը խոստացել է ֆինանսավորել Յարմուկի հեռ կապված սիրիական մախսագծերը, եթե Իսրայելի հեռ կնքվի վերջնական համաձայնագիր: Սա ևս պատճառ է, որ Իսրայելը խոստովի համաձայնագրից: Ջուրը սկսում է գրադեցնել կենտրոնական դեր արարա-իսրայելա-



կան վեճում: Հարցը բարդանում է այնքանով, որ այս հարցում հակասություններ կան ոչ միայն Իսրայելի և արաբական երկրների միջև, այլև հենց արաբական երկրների մեջստում և, եթե նախկինում այդ հակասությունները բացվում էին, ապա այժմ դրանք ակներև են:

«Լեռնի իշխող հարցադրումները թույլ են տալիս հանգել հետևյալ եզրակացությունների»

1. Ջրային ճգնաժամը Մերձավոր Արևելքում միշտ էլ առկա է եղել:

2. Ջրային խնդրի լուծումը հնարավոր է միայն տարածաշրջանային համագործակցության միջոցով:

3. Ջրային ճգնաժամը չի լուծվում ոչ քե՛ս այն պատճառով, որ չկան լուծումներ, այլ այն պատճառով, որ որոշ երկրներ չեն ցանկանում հրաժարվել «ջրային մտրակի» քաղաքականությունից:

Ավելորդ չենք համարում նշել, որ մեր կարծիքով հաջող «ջրային քաղաքականություն» ապագայում կայող է իրականացնել նաև Հայաստանը, որը հարուստ է այլ կենսական ռեսուրսով: Այդ հանգամանքը շատ լավ գիտակցվել էր հանրահայտ Պոլ Հոբլի կողմից, որը Ղարաբաղյան հակամարտության լուծման հարցում, առաջարկելով տարածքային փոխանակման սկզբունքը, նախատեսում էր Լեռնային Ղարաբաղի մի մասից բացի Հայաստանին տալ նաև «դեպի Բաքու հոսող գետերի ակունքների վերահսկող շրջանը»:

### HOVHANNISYAN ARTAK

#### THE WATER CONFLICT IN THE MIDDLE EAST (Summary)

Oil has always been thought of as the traditional cause of conflict in the Middle East. Water is taking over from oil as the most likely cause of conflict in the Middle East. In general a country with less than 1,700 cubic meter per capita is regarded as experiencing water stress, while less than 1000 cubic meter is regarded as water shortage.

There are three important "water-systems" in the Middle East: Nile, Tigris-Euphratian and Jordan basins. On the analysis of the water problem we come to the following conclusions:

1. The water problem may be solved through regional cooperation.
2. There is a water crisis, not because there is an objectively insoluble problem, but because certain political leaders want to use this issue for their own goals.

1. Isseroff A., Water and Politics, [Http://www.mideastnews.com/](http://www.mideastnews.com/).
2. Darwish A., The Next Major Conflict in The Middle East. Water Wars.A Lecture by - Geneva conference on Environment and Quality of Life June 1994. [Http://www.ariga.com](http://www.ariga.com) peacewatch.
3. Ibid.
4. Ibid.
5. Ibid.
6. Оганесян Н., Образование независимой Сирийской республики, Москва, 1968. 114 с.
7. Bartholet J. And Dennis M., A River Runs Through it, Newsweek, 10.07.1995.
8. Darwish A., The Next Major Conflict in The Middle East. Water Wars, p. 2.
9. Ibid, p 2.
10. Ibid, p. 3.
11. The Camp David Accords, Framework for The Conclusion of Peace Treaty Between Egypt and Israel, 17.09.1978. [Http://www.ariga.com/peacebiz/treaty/MEPP](http://www.ariga.com/peacebiz/treaty/MEPP) chronology, p. 6.
12. Овинников Р., Зигзаги внешней политики США, от Никсона до Рейгана, Москва, 1986. с. 198.
13. Darwish A., The Next Major Conflict in The Middle East. Water Wars, p. 6.
14. Ibid, p. 8.
15. Ibid, p. 9.
16. Paul D., Water Issues in the Arab-Israeli Conflict, [Http://www. Ariga.com/](http://www.Ariga.com/)
17. Ibid, p. 1.
18. Ibid, p. 2.
19. Ibid, p. 1.
20. Darwish A., The Next Major Conflict in The Middle East. Water Wars, p 10.
21. Никитина Г., Государство Израиль, Москва, 1968, с. 168.
22. Там же, с. 169.
23. Там же, с. 169.
24. Bartholet J. And Dennis M., A River Runs Through it, Newsweek, 10.07.1995.
25. Ibid.
26. Darwish A., The Next Major Conflict in The Middle East. Water Wars, p. 12.
27. Ibid.
28. Ibid.
29. Hovhannisyan N., The Karabakh Problem, Factors, Criteria, Variants of Solution, Erevan, 1999, p. 74.

**ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ ԵՎ ՂԱՐԱՔԱՂՅԱՆ  
ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ**

Լեոնային Ղարաբաղի շուրջ հայ-ադրբեջանական հակամարտությունը իր քնույրթով էրճոքադարձական հակամարտություն է, պայմանավորված խորհրդային շրջանում իրականացված ազգային քաղաքականության լուրջ սխալներով: Այդ է վկայում այն փաստը, որ 1921թ. հուլիսի 5-ին Ռ-Հ(ք) Կենտկոմի Կովբյուրդի որոշմամբ Լեոնային Ղարաբաղը անջատվեց Հայաստանից և բռնակցվեց Ադրբեջանին, որն, իբր, արդարացվում էր «մահմեդականների և հայերի միջև ազգամիջյան խնդրադրություն ապահովելու» ցանկությամբ<sup>1</sup>:

Հայ-ադրբեջանական հակամարտությունը Լեոնային Ղարաբաղի շուրջ շարունակվեց դրսևորվել մաս ԽՍՀՄ-ի օրոք: Ռուսոմնասիրողների կարծիքով, դարադարձյան հակամարտությունը արագացրեց ԽՍՀՄ-ի փլուզումը: Լեոնային Ղարաբաղի հայ ազգաբնակչությունն առաջիններից էր, որը հայտարարեց ինքնորոշման և ազատության իր իրավունքը<sup>2</sup>:

1992թ. հունվարի 6-ին հռչակվեց Լեոնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը<sup>3</sup>: Լ.ՂՀ-ի ճնշող մեծամասնությունը կազմող հայ ազգաբնակչությունը սահմանադրական ճանապարհով արտահայտեց ազատ և ինքնիշխան ապրելու իր ցանկությունը, որին ի պատասխան Ադրբեջանը լայնածավալ ռազմական գործողություններ սկսեց Լ.ՂՀ-ի դեմ:

Հակամարտությունը, թևակոխելով մի քանի փուլեր, ի վերջո վերածվեց լայնամասշտաբ ռազմական բախման, որի ընթացքում կողմերը փորձում էին օգտագործել ցանկացած միջոց միջազգային հանրության կարծիքն իրենց կողմն ուղղելու համար:

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո դարաբաղյան հակամարտության կարգավորումը միջազգայնացվեց, որին ներգրավվեց միջազգային հանրությունը: 1992թ. մարտից ԱՄՆ-ը և արևմտյան այլ պետություններ ԵԱՀԿ Մինսկի խմբի միջոցով զգալի մասնակցություն են բերել դարաբաղյան հակամարտության կարգավորմանը:

Ղարաբաղյան հարցին անդրադարձան մաս իսլամական շրջանակները, ավելի ստույգ՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը (ԻԿԿ), որին ԽՍՀՄ-ի կազմալուծումից հետո անդամակցում են մաս կենտրոնափական հանրապետություններն ու Ադրբեջանը:

ԻԿԿ-ն իսլամական աշխարհի ամենախոշոր, կառավարական մակարդակով միակ կազմակերպությունն է: Ձևավորվել է մահմեդական համերաշխության հիմքի վրա, անդամակցելու իրավունքը վերապահվում է միայն իսլամական պետություններին: Ներկայումս կազմակերպությանն անդամակցում են 57 պետություններ: Նստավայր-գրասենյակը Ջիդդայում (Սաուդյան Արաբիա) է՝ «մինչև Տրուստդեմի ազատագրումը»: ԻԿԿ-ի հիմնական նպատակներն են՝ անդամ պետությունների միջև քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, գիտական և այլ բնագավառներում

համագործակցության կազմակերպումը, ինչպես նաև՝ իսլամական համերաշխության ամրապնդումը:

Ի թիվս այլոց, այդբեջանական կողմի համար իսլամական համերաշխության զարգացմանը ու հայտարարությունները հարմար առիթ էին Լեռնային Ղարաբաղի հարցում իսլամական պետությունների ուշադրությունը հրավերելու համար: Հռչակելով իր նվիրվածությունը աշխարհում խաղաղության և արդարության հաստատմանը, ԻԿԿ-ն կարևորագույն խնդիրներից է համարում մասնակցել մահմեդականներին առնչվող միջազգային հակամարտությունների լուծմանը: 1994թ. Կասաբլանկայի VII գագաթնաժողովի հռչակագրում նշված է. «Անհրաժեշտ է համախմբել բոլոր ջանքերը՝ ամրապնդելու համերաշխությունը և միասնությունը, որպեսզի սատար կանգնենք բոլոր իսլամական խնդիրներին»:

ԻԿԿ-ն դադարադադան խնդրի ուսումնասիրությանը սկսեց զբաղվել հակամարտության ռազմական փուլում, երբ հայկական ուժերը ազատագրել էին Շուշին և Լաչինը: 1992թ. մարտին ԻԿԿ հատուկ հանձնախումբը կազմակերպության գլխավոր քարտուղար Համեդ Ալ-Ղաբեթի օգնական, դեսպան Մուհամեդ Մուհիմին գլխավորությանը այցելեց Թեհրան, Անկարա, Բաքու, Մոսկվա և Երևան<sup>5</sup>: Մարտի 21-ին Երևանում պատվիրակությանն ընդունեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, որին Մ. Մուհիմը հայտնեց գլխավոր քարտուղարի մտահոգությունը դարաբաղյան դեպքերի զարգացման կապակցությամբ՝ ընդգծելով կազմակերպության անկեղծ ցանկությունը՝ աջակցելու տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատմանը: Զրույցի ընթացքում կողմերն անբույլատրելի համարեցին դարաբաղյան խնդիրը կրոնական տեսանկյունից դիտարկելու միտումները: ՀՀ նախագահի կարծիքով, մեծն դիքորոշումը կհանգեցնեք կրոնական մի մոր հակամարտության Արևելքի և Արևմուտքի միջև:

ԻԿԿ-ի առաքելությունը Հայաստանում, որի նպատակը դարաբաղյան խնդրի և նրա լուծման հնարավոր տարբերակների մասին Հայաստանի իշխանությունների տեսակետներին ծանոթանալն էր, որոշակի հիմքեր կալող էր ստեղծել կազմակերպության և Հայաստանի միջև հարաբերությունների հետագա զարգացման համար, հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանի իշխանությունները այցելությունը դրական գնահատեցին: Պատվիրակության հետ հանդիպման ընթացքում ՀՀ նախագահը հույս էր հայտնել, որ ԻԿԿ-ի մեծն հեղինակավոր կազմակերպությունը կարող է նպաստել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորմանը: Սակայն պատվիրակությունը հրաժարվեց հանդիպել ԼՂՀ-ի պաշտոնատարների հետ՝ պատճառաբանելով, որ մեծն լիազորություն չունի, միաժամանակ խուսափելով ԼՂՀ-ի կարգավիճակի մասին որևէ կարծիք հայտնել: Այս հանգամանքը որոշակի կասկածներ է առաջացնում կազմակերպության առաքելության անկողմնակալության նկատմամբ:

Հատուկ հանձնախմբի այս այցելությունը կարելի է համարել միջնորդական առաքելության փորձ:

Պատվիրակության այցից ավելի ուշ, 1992թ. հունիսի 14-ին Ստամբուլում կայացած արտաքին գործերի նախարարների V արտահերթ կոնֆերանսն առաջին անգամ քննարկեց Լեռնային Ղարաբաղի շուրջ հայ-ադրբե-

ջանակն հակամարտությունը, որին անդրադարձավ Ադրբեջանի արտգործնախարար Թ. Կասիմովը: Երուրթը, լինելով խիստ միակողմանի, տեղեկացնում էր հակամարտության խաղաղ կարգավորման Ադրբեջանի նախաձեռնությունների մասին, որոնք, իբր, խափանվում էին Հայաստանի իշխանությունների անհամադրժողական կեցվածքի պատճառով: Նախարարն իր ելույթում նշեց, որ Ադրբեջանի նկատմամբ Հայաստանի «ագրեսիան» սպառնում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը<sup>6</sup>: Շեշտադրյալից մաս պատերազմում ադրբեջանական կողմի կրած վնասների, ադրբեջանցի զաղթականների ծանր իրավիճակի մասին: Նախարարը կազմակերպությունը կոչ արեց օգտագործել ուղի հեղինակությունը՝ Հայաստանի «ագրեսիան» կասեցնելու և ստիպելու՝ դուրս բերել իր զինուժը Ադրբեջանից:

Ստամբուլյան հանդիպմանը հայ-ադրբեջանական հակամարտության կապակցությամբ որևէ բանաձև չընդունվեց, որը, սակայն, տեղ գտավ եզրափակիչ հայտարարության 14-րդ բաժնում, ուր Հայաստանին կոչ արվեց «իրաժապել տարածաշրջանում ագրեսիվ քաղաքականությունից», իսկ միջազգային հանրությանը՝ ստատրել Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը և ճնշում գործադրել Հայաստանի վրա: Ստամբուլի կոնֆերանսը, ցանկություն հայտնելով ընդլայնել հակամարտության խաղաղ կարգավորման ուղիված ջանքերը, միաժամանակ հավատարմություն հայտնեց «եղբայրական Ադրբեջանի» միջազգայնորեն ընդունված սահմանների և տարածքային ամբողջականության պահպանմանը:

ՀՀ արտգործնախարար Ր. Հովհաննիսյանի գնահատմամբ, Ստամբուլի կոնֆերանսը միակողմանի էր, քանի որ հիմնված էր «Ադրբեջանի խեղաթյուրված և կանխակալ կարծիքի վրա»: Իհարկումս քարտուղարին ուղղված իր մամակում մա նշում էր, որ ստամբուլյան հանդիպումը, Հայաստանին մեղադրելով «ագրեսիայի» և «ծավալապաշտության» մեջ, զանց էր առնում ադրբեջանական կողմի ագրեսիվ քայլերը Հայաստանի և ԼՂՀ-ի դեմ, որի աղյուցնում հայաթափվել էին բազմաթիվ հայկական գյուղեր<sup>7</sup>:

Հարկ է փաստել, որ դարաբաղյան հակամարտության հարցում Իհարկումս զանց առավ շատ հանգամանքներ, մասնավորապես այն, որ կազմակերպության երկու անդամ պետությունները՝ Ադրբեջանը և Թուրքիան, շրջափակել էին Հայաստանը, որը լուրջ ղժվարություններ էր ստեղծել առանց այդ էլ երկրաշարժից հետո կաթվածահար եղած Հայաստանի տնտեսության համար: Շրջափակման մեջ էր մաս ԼՂՀ-ն:

Դարաբաղյան հարցի ստամբուլյան քննարկումից հետո, Իհարկումս շրջանակներում ընդունված որոշումները եական փոփոխություններ չկրեցին, պահպանելով Ադրբեջանի հետ համերաշխության և Հայաստանին դատապարտող կեցվածքը:

1993թ. գարնանը, Քեյրազարի գլավման նախօրեին, Ադրբեջանի արտգործնախարար Թ. Կասիմովը ՄԱԿ-ում Իհարկումս անդամ երկրների մշտական ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ կրկին անգամ կարևորեց այս երկրների կողմից «Հայաստանի ագրեսիայի դատապարտումը»<sup>8</sup>:

Դարաբաղյան հարցը քննարկվեց Իհարկումս քարծր մակարդակի հետագա հանդիպումներում և ֆուրումներում, որոնց ընթացքում շարունակվեցին

ՀՀ քաղաքական շփոմաները կազմակերպության հետ Լեռնային Ղարաբաղի հարցում Հայաստանի պաշտոնական դիրքորոշման. և առիտստարակ, խնդրի առավել օբյեկտիվ լուսարանման նպատակով: Այդ է վկայում ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի նամակը ԻԿԿ գլխավոր քարտուղար Համեդ Ալ-Ղաբեթին, որը հասցեագրված էր ԻԿԿ արտաքին գործերի նախարարների Կարաչիի 21-րդ կոնֆերանսին: Նամակի մեջ նախագահը չէր բացքնում, որ Հայաստանի իշխանությունները հուսախաբված էին, քանի որ ԻԿԿ-ն չէր արձագանքել համագործակցության Հայաստանի առաջարկություններին: Նախագահը նշում էր, որ անարձագանք էին մնացել ՄԱԿ-ում ԻԿԿ-ի և Հայաստանի ներկայացուցիչների հետ հանդիպելու, քննիաճրապես, կազմակերպության հետ հաղորդակցության կանոնավոր ուղի հաստատելու Հայաստանի առաջարկները, մաս այն, որ Մ. Մոսիսյնի դեկավարած պատվիրակությունը եղել էր հակամարտության բոլոր շրջաններում, սակայն հրաժարվել էր Լեռնային Ղարաբաղ այցելելուց:

Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ կազմակերպության կողմնապահ բնույթը, ըստ ՀՀ նախագահի, միակողմանի լրատվության պատճառով էր: Նախագահը համոզված էր, որ եթե կազմակերպության անդամ պետությունների ներկայացուցիչները հնարավորություն ունենային բազմակողմանի տեղեկատվություն ստանալ հակամարտող բոլոր կողմերից, այլ կերպ կգործեին: ՀՀ նախագահի կարծիքով, մնան վարքագիծը միազեցնում էր հակամարտող կողմերի վստահությունը ԻԿԿ-ի և միջազգային կազմակերպությունների նկատմամբ և խոչընդոտում էր խաղաղ կարգավորման ուղղված բանակցությունների ընթացքը: Նախագահի խոյս էր հայտնել, որ Կարաչիի կոնֆերանսին հասցեագրված իր մամակը կօգնե, որպեսզի ԻԿԿ-ում դարաբաղյան հարցի շուրջ առավել օբյեկտիվ քննարկումներ ծավալվեն<sup>9</sup>:

ՀՀ նախագահի նամակը, որը գլխավոր քարտուղարին էր հանձնել Եգիպտոսում ՀՀ դեսպանը, ընդհանուր առմամբ, դրականորեն էր գնահատվել Համեդ Ալ-Ղաբեթի կողմից. որի կարծիքով Հայաստանի և կազմակերպության միջև հնարավոր էր իրականացնել համագործակցություն Եգիպտոսում Հայաստանի դեսպանության միջոցով<sup>10</sup>:

Զնայած այն հանգամանքին, որ Ղարաբաղյան հարցի վերաբերյալ 1993թ. ապրիլի 29-ին Կարաչիի կոնֆերանսն ընդունեց Հայաստանի «սգրեսիան» դատապարտող բանաձև <sup>11</sup>, ԻԿԿ-ն կոչ արեց Հայաստանին և Ադրբեջանին հակամարտությունը լուծել խաղաղ ճանապարհով՝ պետությունների տարածքային ամբողջականության և միջազգայնորեն ընդունված սահմանների անձեռնմխելիության սկզբունքների հիման վրա՝ ԵԱՀԿ շրջանակներում շարունակելով խաղաղ կարգավորման գործընթացը: Ընդգծվեց նաև իրավիճակի հետագա սրումից թե՛ Հայաստանի և թե՛ Ադրբեջանի ձեռնպահ մնալու անհրաժեշտությունը:

Կազմակերպությունը համարաշխարհություն և աջակցություն հայտնեց Ադրբեջանի կառավարությանն ու ժողովրդին՝ «իբեց հայրենիքի պաշտպանության գործում»: Սակայն ուշագրավ է, որ Ալ Ղաբեթը Կարաչիի հանդիպմանը արտասանած իր ելույթի մեջ չիխատակեց Ղարաբաղյան հարցը: Որպես կանոն, ԻԿԿ գլխավոր քարտուղարն անդրադառնում է խաճանկս:ն աշ-

խարհում առկա բոլոր հակամարտություններին: Չի բացառվում, որ ՀՀ նախագահի նամակը, ուղղված Կարաչիի կոնֆերանսին, ինչպես նաև՝ գլխավոր քարտուղարին, որաշակի ազդեցություն էր գործել վերջինիս դիրքորոշումը ձևավորելու հարցում:

Հայաստանի «կործանարար քաղաքականությունը» Ադրբեջանի նկատմամբ դատապարտվեց նաև Կասաբլանկայի V զագաթաժողովում (1994թ. հունվար)<sup>12</sup>:

1995-ից Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին Իսլամական կոնֆերանսն անդրադարձավ ՄԱԿ-ի կողմից հայ-ադրբեջանական հակամարտության մասին ընդունած որոշումների համատեքստում՝ ձգտելով Հայաստանին ներկայացնել իբրև «ազդեցող» պետություն: Հայ-ադրբեջանական հակամարտության շուրջ կազմակերպության/այս նոր մոտեցումը դրսևորվեց արտգործնախարարների Կոնակրիի XIII հանդիպման ժամանակ, որը տեղի ունեցավ Գ-վինեայում 1995թ.: ԻԿԿ-ն Հայաստանի «ազդեցիկ» դատապարտեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից ընդունված 822, 853, 874, 884 բանաձևերի հիման վրա՝ Հայաստանից պահանջելով անհապաղ և առանց բախապայմանների դուրս քերել զորքերը ադրբեջանական «գրավյալ տարածքներից», ներառյալ Լաչինը և Շուշին: Կազմակերպությունը կոչ արեց ԱԽ-ին՝ դատապարտել Ադրբեջանի ինքնիշխանության և տարածքային ամբողջականության դեմ իրականացվող «ազդեցիկ»:

Միաժամանակ, ԻԿԿ-ն պարտավորվեց ՄԱԿ-ում այս հարցի շուրջ համընդհանուր դիրքորոշում իրականացնել: Վերահաստատվեց ադրբեջանցի գաղթականությանը օգնություն ցուցաբերելու կազմակերպության քաղաքականությունը<sup>13</sup>:

Ղարաբաղյան հիմնահարցի նկատմամբ որոշ ծայրահեղ միտումներ դրսևորվեցին արտգործնախարարների Ջակարտայի XXIV հանդիպման ժամանակ (Ինդոնեզիա, 1996թ.), ուր Հայաստանի կողմից «գրաված» տարածքներում ադրբեջանցի ազգաբնակչության դեմ գործողությունները որակվեցին իբրև «մարդկության դեմ ուղղված հանցագործություն»: Ջակարտայի հանդիպման մասնակիցները կոչ արեցին աշխարհի պետություններին՝ զերծ մնալ Հայաստանին զինված ուժեր և սպառազինություններ տրամադրելուց, քանի որ այն «կարող է խրախուսել ազդեցողին՝ հակամարտությունն ավելի ընդարձակելու և Ադրբեջանի տարածքների բռնազավթումը շարունակելու համար»: Համաձայն կոնֆերանսի հայտարարության, ԻԿԿ անդամ պետությունների տարածքը չպետք է օգտագործվի նման մատակարարումների համար: Այդ իսկ պատճառով, կոչ արվեց անդամ-պետություններին, ինչպես նաև միջազգային հանրությանը՝ օգտագործելու քաղաքական և տնտեսական բոլոր ազդեցիկ միջոցները հայկական «ազդեցիկին և ադրբեջանական տարածքների բռնազավթմանը վերջ դնելու համար»<sup>14</sup>:

Հետևելով ԵԱՀԿ շրջանակներում Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման բանակցային գործընթացին, կազմակերպությունն իր «աջակցությունը՝ հայտնեց ԵԱՀԿ Լիսաբոնի (1996թ. դեկտ. 2-3) զագաթաժողովում ընդունված հռչակագրի, մասնավորապես, երեք սկզբունքներին, որոնք, պետք է ձևավորեն Հայաստանի և Ադրբեջանի միջև գոյություն ունեցող հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացը»<sup>15</sup>:

ԻԿԿ-ն, փաստորեն, չունենալով հակամարտության կարգավորման սեփական հայեցակարգ, առաջարկեց հակամարտության կարգավորման համար հիմք ընդունել լիաբոյնյան գազաբաժնույն հայտարարությունը, որը, սակայն, չէր կարող հակամարտության կարգավորման գործընթացի հիմք դառնալ:

Նշած փաստերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ԻԿԿ շրջանակներում քննարկումների ժամանակ առանձնացվել են հայ-ադրբեջանական հակամարտության հետևյալ հիմնական ուղղությունները.

1. Ադրբեջանի տարածքային ամբողջականության վերականգնման և ադրբեջանական «գրավյալ» տարածքներում Հայաստանի «ազդեխայի» հետևանքները վերացնելու հարցը:

2. Ադրբեջանի գաղթականների խնդիրը:

3. Հայ-ադրբեջանական հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացը:

1997թ. ԻԿԿ շրջանակներում գումարված Թեհրանի VIII գազաբաժնույնը նույնպես կարևորվում է Լեռնային Ղարաբաղի հարցի քննարկման առումով: Համեմատած նախորդ հանդիպումների հետ, Թեհրանում դարաբաղյան հարցի քննարկումն ավելի մեղմ անցավ, որը պայմանավորված էր Լեռնային Ղարաբաղի հարցում Իրանի ռազմավարության, ինչպես նաև՝ Հայաստանի հետ Իրանի որպես բարեկամ երկրի, աջակցության հետ: Գազաբաժնույնում ելույթ ունենալով, Իրանի նախագահ Սոհաբեդին խաթամին դարաբաղյան խնդիրն չանդրադարձավ, որին, սակայն, անդրադարձավ պարսկալեզու խոսնակները՝ իրանի հոգևոր առաջնորդը՝ ճեյե, որ ԻԿԿ-ն կարող է հիմնել հատուկ հանձնախմբեր՝ լուծելու Բոսնիայի, Քաշմիրի, Սոմալիի, Ղարաբաղի և այլ շրջաններում մահմեդականների առաջ ծառացած խնդիրները, որին անդամ բոլոր պետությունները պետք է մասնակցեն<sup>16</sup>:

Զնայած Թեհրանի գազաբաժնույնը ընդունեց «Հայաստանի ազդեխան Ադրբեջանի դեմ» բանաձևը, օրակարգում զետեղված կոնֆլիկտային հարցերի քվում այն աննկատ մնաց: Թեհրանի գազաբաժնույնում դարաբաղյան հարցը, լինելով օրակարգի 140 հարցերից մեկը, չդարձավ լուրջ քննարկումների առարկա, թեև Ադրբեջանը արեց առավելագույնը դարաբաղյան հիմնախնդիրն հնչելույթում տալու ուղղությամբ:

Իրանական մամուլը, նույնպես, մեկնաբանելով Թեհրանի գազաբաժնույնը, գրեթե չարձագանքեց դարաբաղյան հարցին: Հավանաբար նախագահ Խաթամին ղեկորաշունչ իր ազդեցությունն ունեցավ դարաբաղյան հարցում հասարակական կարծիքի ձևավորման վրա:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ Սաուդյան Արաբիայի թագաժառանգ Աբդուլլահ Իբն Աբդուլ Ազիզ աս-Սաուդի ելույթը ևս կրում էր ընդհանուր բնույթ, ուստի չշոշափեց որևէ առանձին հարց, չնայած Էռ-Ռիադը դարաբաղյան հարցը գազաբաժնույնում օրակարգ մտցնելու ուղղությամբ զգալի դեր էր ունեցել<sup>17</sup>:

Իր խոսքում հայ-ադրբեջանական հակամարտությանն անդրադարձավ նաև Սիրիայի նախագահ Հաֆեզ ալ-Ասադը: Վերջինս իր ելույթի «ժուռափում տարածայնություններից՝ երկխոսության միջոցով» բաժնով, անդրադառնալով հայ-ադրբեջանական հակամարտությանը, ճեյե. «Հարկ է ընդ-



գծել, որ մեր կազմակերպության անդամ Աղրբեջանի և Հայաստանի միջև լարվածության հետագա շարունակումը տալիս ծաշքջանում առաջ է բերում անհանգստության, մտառկալության և անկայունության գործոններ, ինչպես նաև նախատում է երկու երկրների ուժի և կարողությունների զլատմանն ու կորստին, փոխանակ որանք ուղղելու վերակառուցման և վերականգնման»<sup>18</sup>:

Ինչպես միշտ, ԻԿԿ-ն Ձարգացման իսլամական բանկին և իսլամական բոլոր պետություններին կոչ արեց որամական և այլ կարգի օգնություն տրամադրել Բաքվին՝ գաղրականներին օգնելու համար: Ի դեպ, Աղրբեջանին այս հարցում զգալի աջակցություն են ցուցաբերում միջազգային իսլամական կազմակերպությունները: 1996թ. հոկտեմբերին ԻԿԿ շրջանակներում գործող Իսլամական համերաշխության ֆոնդի, ինչպես նաև Միջազգային իսլամական բարեգործական ասոցիացիայի, Միջազգային իսլամական օգնության կազմակերպության հետ համատեղ Բաքվում տեղի ունեցավ աղրբեջանցի գաղրականների աջակցության առաջին միջազգային կոնֆերանսը, որին մասնակցեցին իսլամական տարբեր երկրներից այստեղ ժամանած պատվիրակներ: Ներկա էր նաև ԻԿԿ գլխավոր քարտուղարի պատվիրակը<sup>19</sup>:

Հայաստանի նկատմամբ կազմակերպության դիրքորոշումը որևէ փոփոխության չենքարկվեց հետագա տարիներին: Դրա վկայությունն է 1999թ.-ին արտգործնախարարների Ուազդուդույի (Բուրկինա Ֆասո) XXVI հանդիպումը, որը հավաստեց իր աջակցությունը Աղրբեջանին և նշեց, որ Հայաստանի «ագրեսիան սպառնում է աղրբեջանական ժողովրդի մշակութային և պատմական ժառանգությանը»<sup>20</sup>:

Այսպիսով, Բաքուն, հրաժարվելով ճանաչել Լեռնային Ղարաբաղի հայերի իրավունքը, ԻԿԿ-ի միջոցով փորձում է Հայաստանին ներկայացնել մի պետություն, որը հավակնություններ ունի Աղրբեջանի տարածքների նկատմամբ: Չնայած ԼՂՀ-ի ռազմական ուժերի կողմից կրած ծանր պարտությանը, Աղրբեջանը չի հաժարվել Լեռնային Ղարաբաղի նկատմամբ իր տիրապետությունը վերականգնելու ծրագրերից, որը շարունակում է մնալ լարվածության հիմնական աղբյուրը և հայ-աղրբեջանական հարաբերությունների կարգավորման գլխավոր խոչընդոտը<sup>21</sup>:

Լեռնային Ղարաբաղի հարցում ԻԿԿ անդամ պետությունների դիրքորոշումներն, ընդհանուր առմամբ, կարելի է բնորոշել երկու՝ արմատական (Թուրքիա, Սաուդյան Արաբիա, Պակիստան, Բանգլադեշ, Աֆղանստան, Ջիբութի) և չափավոր (Սիրիա, Իրան, Թունիս, Մարոկկո, Եմեն, Հորդանան, Լիբանան, Ալժիր, Քուվեյթ, ԱՄԷ և այլն) մոտեցումներով:

Արմատական մոտեցում ունեցող պետությունները հանդես են գալիս Աղրբեջանի նկատմամբ Հայաստանի «ագրեսիայի» խիստ բնադատության՝ միջազգային հանրությունից պահանջելով միջոցներ ձեռնարկել Հայաստանի «ագրեսիան» կանխելու համար: Նրանք բացառում են Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը՝ պայման դնելով դարաբաղյան հակամարտության վերջնական կարգավորումը:

Չափավոր բևի կարծիքով, հայ-աղրբեջանական հակամարտությունը քաղաքական բնույթ ունի և պետք է կարգավորվի բանակցություններով:

Ամեն պարագայում, թե՛ չափավոր, թե՛ արմատական դիքորոշում ունեցող պետությունները բացառում են ԼՂՀ-ի անկախությունը Ադրբեջանի կազմից դուրս:

ԻԿԿ-ն Լեռնային Ղարաբաղի շուրջ հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորումը պատկերացնում է խաղաղ ճանապարհով, բանակցային գործընթացի միջոցով, սակայն Հայաստանի անվերապահ զիջումներով: Համաձայն հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման համախալամական ծրագրի, զիջումների պետք է գնա միայն Հայաստանը՝ անմիջապես և առանց նախապայմանների դուրս բերելով գործերը ադրբեջանական «գրավյալ» տարածքներից, ներառյալ Լաչինը, իսկ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի փոփոխություն չպետք է լինի: Հետաքրքիր է, թե ըստ այդմ, ինչ զիջումներ պետք է անի Ադրբեջանը, որպես հակամարտող կողմ:

ԻԿԿ-ի կողմից դարաբաղյան հակամարտությանը վերաբերող բանաձևերն ու որոշումները աչքի են ընկնում ադրբեջանամետ շեշտադրությամբ՝ առաջնորդվելով տարածքային ամբողջականության սկզբունքով:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ իսլամական աշխարհի ամենակնճռոտ և ամենասուր հիմնախնդիրների, մասնավորապես, Պաղեստինի հարցում, կազմակերպությունն առաջնորդվում է ազգերի ինքնորոշման սկզբունքով, ինչը բացառվում է դարաբաղյան հիմնախնդրի դեպքում, որով կասկածի տակ է դրվում կազմակերպության կանոնադրությամբ իռչակած ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքը:<sup>22</sup> Կարելի է եզրակացնել, որ այս պարագայում ԻԿԿ-ն չի կարող հետամուտ լինել անգամ իսլամական Ռումայի գերխնդիրը համարվող պաղեստինյան հիմնահարցի վերջնական կարգավորմանը:

Սակայն հարկ է փաստել, որ ԻԿԿ ոչ նպաստավոր դիրքորոշումը Ղարաբաղի հարցում չի կարող խաչընդատել անդամ պետությունների հետ ՀՀ միջպետական կապերի զարգացմանը: Այդ մասին է վկայում այն փաստը, որ ներկայումս ԻԿԿ անդամ մի շարք պետությունների հետ Հայաստանը բարեկամական հարաբերություններ ունի: Նշենք, հատկապես, Իրանը, ինչպես նաև՝ արաբական աշխարհը, որոնք լուրջ գործոն են ԻԿԿ-ում և կարևոր դեր ունեն Միջին Արևելքի ռազմավարական-աշխարհաքաղաքական համակարգում: Ներկայումս, Եգիպտոսը, Սիրիան, Լիբանանը, Արաբական Միացյալ Էմիրությունը, Իրաքը, Քուվեյթը, Հորդանանը, Լիբիան, Ալժիրը, Ղաթախեյն են իրենց բարեկամությունը և համագործակցությունը Հայաստանի հետ:

Հայաստանը Մերձավոր Արևելքի մի մասն է կազմում, և արաբական աշխարհի հետ համագործակցությունը Հայաստանին հնարավորություն կտա ամրապնդել իր դիրքերը տարածաշրջանում: Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի հարցին, հարկ է նշել, որ արաբական երկրների համար այն չունի այնպիսի սրություն, ինչպես Թուրքիայի, Իրանի կամ Ռուսաստանի համար: Արաբական երկրներն այս հարցում առաջնորդվում են միջազգային հանրության կողմից ընդունված՝ պետությունների տարածքային ամբողջականության պահպանման, ազգերի ինքնորոշման իրավունքի հարգման, հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելու սկզբունքներով<sup>23</sup>:

Արաբական երկրների հետ համագործակցության հեռանկարները ուրվագծելու առումով զգալի կարևորություն է ներկայացնում 1997թ. մարտի 19-ին ՀՀ քաղաքին գործերի նախարարի հանդիպումը Արաբական լիգայի գլխավոր քարտուղար Իսմաը Աբդ ալ-Մազիդի և արաբական 22 երկրների՝ Արաբական լիգայում հսկվող համագործակցության հետ: Առաջին անգամ Հայաստանին հնարավորություն էր տրվել Արաբական լիգայում հայտնել Հայաստանի պաշտոնական դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հարցում: Գլխավոր քարտուղարը դարաբաղյան հակամարտությունը քաղաքական հարց համարեց և հույս հայտնեց, որ արաբական 22 պետությունները պատրաստ են համագործակցել Հայաստանի հետ<sup>24</sup>:

Լեռնային Ղարաբաղի հարցում ԻԿԿ անդամ արաբական պետությունների տեսակետներին ծանոթանալու առումով զգալի կարևորություն են ներկայացնում նաև իրենց գործընկերների հետ ՄԱԿ-ի, ինչպես նաև միջազգային այլ կազմակերպությունների շրջանակներում Հայաստանի ղեկավարներին հանդիպումներին վերաբերող փաստաթղթերը, որոնք պահվում են ՀՀ ԱԳ Նախարարությունում: ԻԿԿ անդամ արաբական պետությունների ղեկավարներն, ընդհանուր առմամբ, ծանոթ են դարաբաղյան հիմնահարցին և դեմ են, որպեսզի այն կրոնական տեսանկյունից դիտարկվի: Նրանցից շատերի կարծիքով, Հայաստանը երբեմն ավելի սերտ կապեր ունի մահմեդական աշխարհի հետ, քանի Ադրբեջանը: Արաբական պետություններին շատերն առաջարկում են իրենց երկրների միջնորդությունը հակամարտության կարգավորման հարցում: Հիշյալ հանգամանքները, նույնպես, թույլ են տալիս բացահայտել այն իրողությունը, որ ՀՀ-ն հնարավորություն ունի ԻԿԿ շրջանակներում իր համար նպաստավոր դիրքեր ապահովել:

Ուսումնասիրելով հայ-ադրբեջանական հակամարտության նկատմամբ կազմակերպության մոտեցումը, հարկ է փաստել, որ ԻԿԿ-ում այն չունի այնպիսի սրություն, ինչպես մահմեդականներին առնչվող շատ այլ խնդիրներ: Գոյություն ունի մեկ այլ, կարևոր հանգամանք: Լեռնային Ղարաբաղի հարցում ԻԿԿ անդամ պետությունների դիրքորոշումը կազմակերպությունից դուրս փոփոխվում է, ինչը կապված է յուրաքանչյուր պետության տարածաշրջանային քաղաքականության հետ: Ուստի, Հայաստանը պետք է օգտագործի հնարավոր միջոցները իսլամական աշխարհի համակրանքը շահելու համար: Եվ քանի որ իր աշխարհագրական դիրքի պատճառով Հայաստանը ներգրավված է Արևելքի քաղաքական և տնտեսական հարաբերությունների ոլորտում, ապա ցանկալի է, որպեսզի Հայաստանը պատրաստ լինի դեպքերի հեռանկարային զարգացմանը: Հայաստանը պետք է հաշվի առնի միջազգային հարաբերություններում իսլամական գործունի հնարավոր ազդեցությունը: Հայաստանի արտաքին քաղաքականությունը այսուհետ նույնպես պետք է ուղղված լինի Միեմավոր և Միջին Արևելքի երկրների հետ բարի դրացիական հարաբերությունների հաստատմանը, ինչպես նաև տարածաշրջանում կայունության և խաղաղության ապահովմանը: Հայաստանի ղեկավարները պետք է փորձի չեզոքացնել իսլամական աշխարհում իր համար ոչ բարենպաստ միտումները: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է շարունակել Իսլամական կոնֆերանս կազմակերպության շրջանակներում

ղարաբաղյան հակամարտությունը օրյեկտիվորեն լուսաբանելու աշխատանքները, մանավանդ այն դեպքում, երբ Ադրբեջանը շարունակում է Հայաստանի դեմ իր քարոզարշավը:

ԻԿԿ-ի հետ Հայաստանի հետագա հարաբերություններում անհրաժեշտ է ապահովել կազմակերպության աշխատանքներին Հայաստանի ներկայացուցչությունը:

Հարկ է նշել, որ վերջին տասնամյակներին հակամարտությունների կարգավորման անբաժան մասն են կազմում նրանց հանգուցալուծման հնարավոր տարբերակներին անդյադարձող միջազգային խորհրդածողությունները: Միջազգային կազմակերպությունների պրակտիկայում ակնհայտ է ցանկությունները քաղաքական իրատեսության հետ համապատասխանացնելու միտումները: Ինչ վերաբերում է հայ-ադրբեջանական հակամարտության նկատմամբ ԻԿԿ դիրքորոշմանը, ապա այն կարելի է դիտարկել իսլամական համերաշխության համատեքստում:

### PASHAYAN ARAKS

#### THE FACTOR OF ISLAMIC SOLIDARITY AND THE KARABAKH CONFLICT (Summary)

The paper deals with the position of the Organization of Islamic Conference (OIC) towards the Armenian-Azerbaijan conflict on Nagorno-Karabakh. The OIC strongly condemns the Armenian "aggression", urges to withdraw its forces from the "occupied" Azerbaijani territories and respect the territorial integrity and sovereignty of Azerbaijan. Despite its pro-Azerbaijan attitude on the issue, the OIC position could not prevent the diplomatic relations of Armenia with some of OIC member states. The foreign policy of Armenia has to face the reality of Islamic factor and to try establish friendly relations with all the Islamic world as well as the OIC.

#### ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Нагорный Карабах в 1918-1923 гг. (Сборник документов и материалов), Ер., 1998, с. 650.
2. Н. Оганесян, Карабахский конфликт. Этапы, подходы, варианты решения, Ер., 1997, с. 11-12.
3. N. Hovhannisyanyan, The Karabakh Problem. Factors, Criteria, Variants of Solution, Yerevan, 1999, p. 45.
4. «Ան մահար», Բեյլուր, 12.16. 1994:
5. Ինֆորմացիա ԻԿԿ պատվիրակության՝ Հայաստան այցելության վերաբերյալ, ՀՀ ԱԳՆ փաստաթղթեր, 21.03.1992:
6. ՀՀ ԱԳՆ փաստաթղթեր, No. 7/14:

7. ՀՀ արտգործնախարար Բ. Հովհաննիսյանի մամակը ԻԿԿ գլխավոր քարտուղար Համեդ Ալ Ղաթերին, ՀՀ ԱԳՆ փաստաթղթեր, No. 10/1511, 3. 07. 1992:
8. «Ազգ», Երևան, 14.04.1993:
9. ՀՀ նախագահի մամակը ԻԿԿ գլխավոր քարտուղարին (ՀՀ ԱԳՆ փաստաթղթեր, 21.04.1993) :
10. Եզիպտոսում ՀՀ դեսպանի մամակը ՀՀ արտգործնախարարին (ՀՀ ԱԳՆ փաստաթղթեր, 1993թ., հունիս):
11. «Ազգ», Երևան, 27.04.1993:
12. «Աս Սաֆիր», Բեյրութ, 16.12.1994:
13. Final Communique of the Twenty-third ICFM [Http://www.oic-un.org](http://www.oic-un.org)
14. Final Communique of the Twenty-third ICFM [Http://www.oic-un.org](http://www.oic-un.org)
15. Նույն տեղում:
16. The Iranian Journal of International Affairs, Vol. IX, No. 4, Winter 1997/1998, Tehran, p. 596.
17. «Ազգ», Երևան, 23.12.1997:
18. Սուրիյա փա դաուրուհու ալ մուխիմ («Սիրիան և նրա կարևոր դերը»), Դամասկոս, 1997, էջ 57:
19. OIC IRCICA, Newsletter, December 1996, No. 41, Istambul, p.26.
20. OIC IRCICA, Newsletter, August-September 1999, No. 49, Istambul, p.5.
21. Ն. Հովհաննիսյան, Մերձավորարևելյան տարածաշրջանը և Հայաստանի ազգային անվտանգության խնդիրը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XVI, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Եր., 1996, էջ 14:
22. Ն. Հովհաննիսյան, Հայաստան-Արաբական երկրներ, «Հայ-ռուսական և հայ-արաբական հարաբերությունները», (Օոյեմբերի 17-18-ը Երևանում կայացած գիտական նստաշրջանի նյութերը), Եր., 1992, էջ 43:
23. N. Hovhannisyan, The Foreign Policy of Armenia, Yerevan, 1997, p. 56.
24. The Islamic Summit Conference, Kuwait Agency, 1987, p. 55.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

### ԳՐԵԿՅԱՆ ԵՐՎԱՆԴ

ՈՒՐԱՐՏՈՒ ԵՎ ՄԱՆԱ (Մերժության ավազանում ուրախական  
սիրապետության հաստատման խնդրի շուրջ) ..... 5

### ՀՄԱՅՈՒՆՅԱՆ ՀԱՄԱԽԿ

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՍԵՊԱԳԻՐ ԱՂՔՈՒՐՆԵՐՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՂ  
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ՎԵՐՋԱԾԱՆՅՆԵՐԻ..... 21

### ՄՊՎՍԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՆԱԽԱՔԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՇՈՒՐՋ ..... 28

### ՈՍԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՅ-ԲՈՇՆԱՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ  
ՏԵՂԱՐԱՇԽՈՒՄԸ՝ ՊԱՏՄԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՈՎ ..... 33

## ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

### ՔԱՔԱՅԱՆ ՆԱԻՐԱ

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ  
ԸՆԴԴԻՍԱԴԻՐ ՈՒԺԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ (1902) ..... 45

### ՔԱԳԴԱՍԱՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹՈՒՐԻՔԻՅՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼԻԴԵՐՈՒԹՅԱՆ  
ԲՆՈՒՅԹԻ ՀԱՐՅԻ ՇՈՒՐՋ ..... 55

### ԻՍԿԱՆ ԴԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ԱՄՆ-Ի ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՆԳԼՈՒԻՐԱՆԱԿԱՆ  
ՆԱՎԹԱՅԻՆ ՎԵՐԻ ՀԱՐՅՈՒՄ ..... 61

### ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՆԱԻՐԱ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՆՈՎԵԼ ԺԱՆՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ  
ՆԱԽԱԴՐՅԱՆՆԵՐՆ ՈՒ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ..... 71

### ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԻԼԻԹ

ՄԻՐԻԱՅԻ ԵՎ ԻՍՐԱՅԵԼԻ ԳՈՐԾՈՆԸ ԼԻՔԱՆԱՆՅԱՆ  
ՃԳՆԱԺԱՄՈՒՄ (1975-1990 թթ.) ..... 76

### ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՋՐԱՅԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ..... 85

### ՓՈՇԵՅԱՆ ԱՐԱՔՄ

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԵՎ  
ՂԱՐԱՔԱԳՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ..... 93

**CONTENTS****ANCIENT AND MIDDLE AGES****GREKYAN ERVAND**

|                                                                                         |   |
|-----------------------------------------------------------------------------------------|---|
| URARTU AND MANA (On the establishment of Urartian rule over the lake Urmia basin) ..... | 5 |
|-----------------------------------------------------------------------------------------|---|

**HMAYAKYAN HASKIK**

|                                                                              |    |
|------------------------------------------------------------------------------|----|
| CLASSIFICATION OF URARTIAN CUNEIFORM TOPONIMS<br>ACCORDING TO SUFFIXES ..... | 21 |
|------------------------------------------------------------------------------|----|

**MOVSISYAN ARTAK**

|                                                                                               |    |
|-----------------------------------------------------------------------------------------------|----|
| NOTES ON THE GENERAL CHARACTERISTICS OF THE WRITING<br>CULTURE OF PRE-CHRISTIAN ARMENIA ..... | 28 |
|-----------------------------------------------------------------------------------------------|----|

**VOSKANYAN VARDAN**

|                                                                                                         |    |
|---------------------------------------------------------------------------------------------------------|----|
| THE GEOGRAPHICAL DISTRIBUTION AND NUMBER OF THE<br>ARMENIAN BOSHA FROM THE HISTORICAL PERSPECTIVE ..... | 33 |
|---------------------------------------------------------------------------------------------------------|----|

**MODERN HISTORY****BABAYAN NAIRA**

|                                                                                                              |    |
|--------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| THE ROLE OF ARMENIAN POLITICAL PARTIES IN THE FIRST<br>CONGRESS OF OTTOMAN OPPOSITION AT PARIS IN 1902 ..... | 45 |
|--------------------------------------------------------------------------------------------------------------|----|

**BAGHDASARYAN SUREN**

|                                                                                     |    |
|-------------------------------------------------------------------------------------|----|
| ON THE QUESTION OF THE CHARACTERISTICS OF THE TURKISH<br>POLITICAL LEADERSHIP ..... | 55 |
|-------------------------------------------------------------------------------------|----|

**ISKANDARYAN GOHAR**

|                                                         |    |
|---------------------------------------------------------|----|
| THE USA POSITION IN THE ANGLO-IRANIAN OIL DISPUTE ..... | 61 |
|---------------------------------------------------------|----|

**KARAPETYAN NAIRA**

|                                                                                                                           |    |
|---------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| EGYPTIAN NOVEL. THE PRECONDITIONS OF THE<br>FORMATION OF THE GENRE OF NOVEL AND THE<br>PROCESS OF ITS ESTABLISHMENT ..... | 71 |
|---------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|

**HARUTUNIAN LILIT**

|                                                                |    |
|----------------------------------------------------------------|----|
| THE SYRIAN AND ISRAELI FACTORS<br>IN THE LEBANESE CRISIS ..... | 76 |
|----------------------------------------------------------------|----|

**HOVHANNISYAN ARTAK**

|                                             |    |
|---------------------------------------------|----|
| THE WATER CONFLICT IN THE MIDDLE EAST ..... | 85 |
|---------------------------------------------|----|

**PASHAYAN ARAKS**

|                                                                     |    |
|---------------------------------------------------------------------|----|
| THE FACTOR OF ISLAMIC SOLIDARITY AND THE KARABAKH<br>CONFLICT ..... | 93 |
|---------------------------------------------------------------------|----|

Տպագրված է «ԼՈՒՅՍԱՍ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Վ. Վաղարշյան 12<sup>մ</sup>, հեռ. 22-31-95, 26-68-01

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0066073



৩৩৩

ԱՐԵՎԵԼԸ 80707

ORIENT

Արարդ

الشرق



مشرق

OSTEN

ԱՐԵՎԵԼԸ

ROHILAT

BOCTOK

Արարդ արարդ արարդ արարդ

DOGU

Արարդ

Արարդ

BOCTOK

ORIENT

ԱՐԵՎԵԼԸ

ՀՀՀՀՀՀ

Արարդ

خار